ՀՅԴ Պաշտօնաթերթ






# ԴՐՕՇԱԿ









Մայիս N05 (1620)

2010

ԴՐՕՇԱԿ
ՀՅԴ Պաշտօնաթերթ



ԴՐՕՇԱԿ

ՀՅԴ Պաշտօնաթերթ



“Դրօշակ”
ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Հեղափոխական Դաշնակցության

Հիմնադիր՝ **ՀՅԴ**

Գլխավոր խմբագիր՝
**Ռուբեն Հովսեփյան**

Խմբագիր՝ **Կ. Խանլարյան**
Համակարգչային շարվածքը՝
**Ս. Խաչատրյանի**
Ձեւավորումը՝ **Ա. Գրիգորյանի**

Ոճը՝ **Ս. Փարթամյանի**

Գրանցման վկայական 897

Երեւան,375010,Մհեր Մկրտչյան 12/ 1
Հեռ. 521 876
էլ.փոստ.droshak@ arf.am

Տպագրությունը՝ «Բավիղ» ՍՊԸ-ի

**“Droshak”** monthly,
ARF dashnaktsoutiun publication

Editor-in-Chief: **Rouben Hovsepian**

12| 1 Mher Mkrtchian,Yerevan,375010
Tel. 521 876
e.mail:droshak@arf.am

Խմբագրական

Յաղթանակների Մայիսը 2

Հաղթանակ - 92

Հայաստանի վերածննդի ճանապարհին 4

Խորհրդածողով

Հայաստանը գլոբալացման հորձանուտում.
լուծումնե՞ր, թե՞ խնդիրներ 9

Համերաշխությունը գլոբալիզացիայում
և դրա արտապատկերումը և մարտահրավերները
շվեդական մոդելի վրա 16

Հայ դատ

Հայոց Ցեղասպանության փաստի ճանաչման
միջազգային իրավական հիմքերը 25

ԼՂՀ հիմնահարց

Մադրիդյան սկզբունքները և
ուժային ճանապարհով Ղարաբաղյան հարցի
կարգավորման հնարավորությունը 30

Տարածաշրջան

Ջավախքի վրացականացման նոր ռազմավարություն
կամ ՀԿ-ներից դեմի մշակութային մեկուսացում 37

Հաղթանակ - 65

Հայերը «Խորհրդային Միության Հայրենական մեծ
պատերազմը 1941-1945 թթ.» հանրագիտարանում 42

«Դրօշակ»-ը 100 տարի առաջ

Կռիւներ Պարսկաստանում 50

Նոր գրքեր

«Դռան թակոցը» 51

Պատկերասրահ

Ռուբեն Կարապետյան 52



Digitized by ARF PR Office

# Յաղթանակների Մայիսը

Մայիս ամիսը խորհրդանշում է պատմական մի շարք իրադարձութիւններ, որոնց ընդհանրական իմաստը յաղթանակն է:

Շուշիի ազատագրումը ապահովագրեց Արցախեան ազատամարտի յաղթական երթը. ոչ միայն ամրագրուեց Արցախի ազատագրումը, ոչ միայն ծնուեց ու ձեւաւորուեց ԼՂՀ-ն, այլ նաեւ դրուեց ԼՂՀ 2006թ. Սահմանադրութեան հիմքը: Շուշիի յաղթանակը բովանդակում է մի քանի էական դասեր: Նախ այն, որ ազգային ազատագրական պայքարի արդիւնքում ձեւաւորուած համազգային միակամութիւնը ազգին զինում է անսպառ ուժով արտաքին ճակատում: Այս ճշմարտութիւնը շեշտում ենք, որովհետեւ ադրբեջանական ռազմապաշտութեան վտանգը դեռ շարունակում է մնալ տարածաշրջանում: Շուշիի յաղթանակը պարզում է նաեւ մի այլ դաս. քաղաքականութիւնը եւ դիւանագիտութիւնը մեր դէպքում բնաւ էլ պատերազմի շարունակութիւնը չդարձան… Ահա թէ ինչու այսօր էլ հնարաւոր է յայտնուենք դիւանագիտական չափազանց վտանգաւոր իրավիճակներում: Եթէ սա չենք ցանկանում, ապա իրոք անհրաժեշտ է ներդաշնակութիւն ձեւաւորել մեր արտաքին քաղաքականութեան, ազգային անվտանգութեան եւ տարածաշրջանային ստատուս քուոն պահպանելու մեր ռազմավարութեան միջեւ: Մեր արտաքին քաղաքականութեան մօտեցումը պէտք է համահունչ լինի պատերազմում յաղթանակած պետութեան կեցուածքին:

Միւսը Հայրենական մեծ պատերազմի յաղթանակի տօնն է: Պատմական այս խոշոր իրադարձութիւնն առերեւոյթ չի առնչւում մեր Հայրենիքին, սակայն, կարծում ենք, նշանակալի դեր է ունեցել մեր նորօրեայ պատմութեան մէջ: Եթէ նացիստական Գերմանիան յաղթական դուրս գար երկրորդ աշխարհամարտում, Թուրքիան անմիջա-

պէս կը փորձէր նուաճել ու թուրքացնել Անդրկով-կասը, ինչն ինքնին կործանարար կը լինէր մեզ համար: Դամոկլեան այս սուրը տեսանելի էր ցեղասպանութիւն տեսած ազգի համար: Բնաւ պատահական չէ Խորհրդային Միութեան միւս ժողովուրդների համեմատութեամբ հայութեան զոհաբերութիւնն ու բացառիկ ակտիւութիւնը Հայրենական մեծ պատերազմում: Բնաւ պատահական չէ հազիւ միլիոնը գերազանցող բնակչութեամբ Հայկական Խորհրդային Հանրապետութեան տուած զոհերի երեք հարիւր հազարանոց թուաքանակը:

Սարդարապատի եւ առհասարակ 1918թ. մայիսի 24-27 եռեակ հերոսամարտերի յաղթանակն ի սպառ կասեցրեց թուրքական բանակների արշաւը դէպի Բաքուի նաւթահորերը: Այս յաղթանակը ոչ միայն հայութեան ամբողջական բնաջնջումից փրկութեան ելք էր, այլ նաեւ կտրուկ շրջեց արեւելեան ճակատի ողջ ճակատագիրը:

Բազմիցս ասել ու ասում ենք՝ եթէ չպարտուէր նացիստական Գերմանիան, ապա Հայաստանի ու հայութեան ճակատագիրը, բացասականօրէն, կը տարբերուէր այսօրեայից: Դա ճիշտ է, եւ դա մենք ասում ենք՝ հպարտութեամբ նշելով հայութեան մեծ ներդրումն ու գերմարդկային զոհաբերութիւնը երկրորդ աշխարհամարտում: Բայց Սարդարապատի յաղթանակի դէպքում, տօնակատարութիւններ անելով հանդերձ, մենք շատ էլ չենք նշում այդ պատմական իրադարձութեան առարկայական մասշտաբը եւ ճակատագրական բնոյթը…

Ֆրանսիացիները մեծ ոգեւորութեամբ են յիշատակում հայութեան ցուցաբերած զոհաբերութիւնը Ֆրանսիայի ազատագրման պայքարներում: Լիբանանցիները մեծարում են հայութեանը՝ Լիբանանի անկախութեան հարցում: Պարսիկները բարձր են գնահատում հայութեան դերն իրանական սահմանադրական յեղափոխութեան մէջ: Իսկ թուրքերը, ընդհանրապէս, չեն էլ ուզում յիշել հայութեան ստանձնած դերակատարութիւնն օսմանական Հուրիէթում: Վրացիները նոյնպէս չեն ուզում յիշել 1918թ. մայիսեան օրերն ու միամտօրէն շարունակում են կարծել, թէ թուրքական բանակները միմիայն հայերին բնաջնջելու համար էին մտել Անդրկովկաս…

Եւ վերջապէս ամենափառահեղը՝ 1918թ. Մայիսի 28-ի յաղթանակը: Հայաստանի անկախութիւնը թէեւ կարճ կեանք ունեցաւ՝ 1918-1920թթ., այնուամենայնիւ դա երկու նշանակալի հետք թողեց մեր ազգային պատմութեան մէջ. Անկախ Հայաստանի Հանրապետութեան հենքի վրայ դրուեց Հայկական Խորհրդային Հանրապետութեան պետական կեանքը, եւ ի վերջոյ Հայաստանը վերանկախացաւ 1991թ. սեպտեմբերին: Եթէ չլինէր Մայիսի 28-ը, դժուար է ասել, թէ ինչ կարգավիճակ կունենար Հայաստանն այսօր: Մայիսի 28-ը հայութեանը ազատ ու ինքնիշխան ազգերի մեծ ընտանիքին պատկանելու գաղափարը հաղորդեց: Գաղափար, որ անշրջելի է եւ պարունակում է իր մէջ ազգի բազմակողմանի զարգացման հեռանկարը:

Մեր յաղթանակների նկատմամբ հաւատք ընծայելով միայն կարելի է ճշգրիտ բնորոշումներ տալ դրանց եւ հզօր ու ինքնավստահ դէմքով հանդէս գալ համամարդկային ասպարէզում: Ճշմարիտ ազատ ազգ եւ իրապէս անկախ պետութիւն դառնալու համար սա եւս անհրաժեշտ մօտեցում է:

Ազգային այս յաղթանակներին առընթեր, մայիսմէկեան հասարակական տօնն էլ կարող է վերածուել ազգային յաղթանակի, եթէ մենք կարողանանք վերջ դնել սոցիալական անարդարութեանը եւ մեր երիտասարդ հանրապետութիւնում ստեղծել արդար համակարգ՝ մեր սերունդների մարդկային ու հասարակական զարգացումներն ապահովելու համար:

Հեռու չէ նաեւ այս յաղթանակը…

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

## 1918-1920 թթ.

*ԼԵՎՈՆ Ղ. ՇԻՐԻՆՅԱՆ*
Քաղաքական գիտությունների դոկտոր,
ՀՊՄՀ պրոֆեսոր

Փոթորկալից եղավ Հայաստանի առաջին հանրապետության ինչպես ծնունդը, այնպես էլ նրա շուրջ երկու և կես տարվա կյանքը: Հանրապետությունը կյանքի կոչվեց հայ ժողովրդի ճգնաժամային պահին, երբ առկախ էր նրա ֆիզիկական գոյության հնարավորությունն իսկ: Եվ կախված երկրի ինչպես ներքին իրավիճակից, այնպես էլ նորանկախ պետության շուրջ համաշխարհային ու տարածաշրջանային ուժերի շահագրգռություններից, եվրոպական տիպի խորհրդարանական հանրապետությունը ունեցավ չորս դահլիճ (կառավարություն), սոցիալ-տնտեսական և մշակութային հստակ ուրվագծվող երեք փուլերով: Ընդսմին նրանցից յուրաքանչյուրը լուծեց կոնկրետ իրականությամբ թելադրված հիմնախնդիր: Ուժերի գերագույն լարումով:

Առաջինը, Հովհաննես Քաջազնունու վարչապետության շրջանը (1918,30/VI - 1919.IV) *պետական-կազմակերպչականն* էր: Կառավարությունը խնդիր ուներ կասեցնելու գահավեժ քայքայման գործընթացը, հաղթահարելու երկրի անիշխանական վիճակը, ստեղծելու պետական շինարարության համար անհրաժեշտ պայմաններ: Ուստի, գրում է Ս. Վրացյանը, «Որքան էլ դժվար լիներ կացությունը, սովն ու հիվանդությունը չէին այլևս հայ ժողովրդին զբաղեցնող գլխավոր ցավերը: Կառավարության առջև կանգնած էին մի շարք պետական ու ազգային լուրջ խնդիրներ, որոնց մեջ առաջին տեղը բռնում էին սահմանների ընդարձակման և ներգաղթի հարցերը» (Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, 3-րդ տպ., Թեհրան, էջ 243): (Ի մասնավորի, ժամանակին միջոցներ ձեռնարկվեցին Նուխիի, Արեշի, Շամախիի, Գյոքչայի և Ղուբայի գավառներից շուրջ 20000 հայերի Հայաստան տեղափոխման համար): Այս շրջանը, թվում է, խորհրդանշական մի օղակ էր, անցումային մի փուլ Վանի 1915 թվականի (7/IV-6/V,1915) ինքնապաշտպանական շրջանի նախապետականությունից դեպի ազգային պետություն: Խորհրդանիշն էր անզուգական Արամ Մանուկյանը, շարունակողն ու գործադրողը՝ Քաջազնունին: Հայաստանի Հանրապետության տարեգիրներից Սիմոն Վրացյանը գրում է. «անձև քաոսի և ավերակների կույտից նա (կառավարությունը – Լ.Շ.) պետք է ստեղծի կենսունակ և աշխատունակ մի մարմին» (Նույն տեղը, էջ 188): Այդ օրերին Հայաստանը իրենից հիշեցնում էր գաղթակայան, և նրա վիճակը ուղղակիորեն աղետալի էր: Սովը սոսկալի ձևեր ընդունեց հատկապես Սուրմալուի և Ալեքսանդրապոլի շրջաններում:

Ամենադժնդակը 1918 թվականի հոկտեմբերից մինչև 1919 թվականի գարուն ժամանակաշրջանն էր, մինչև ամերիկյան ալյուրի ստացումը: Հունիսին (1919 թ.) կառավարությունը հնարավորություն ունեցավ հաց հասցնել նաև վրացիների կողմից ժամանակավորապես գրավված Ախալքալաքի գավառի հայ ազգաբնակչությանը: Հաց, դեղո-



Դրո և Վրացյան

րայք և անդորրություն՝ ահա այդ օրերի պահանջների ողջ ցանկը, «պետական շինարարության» ողջ բովանդակությունը: Սիմոն Վրացյանը իրավունք ուներ ասելու. հետպատերազմյան Եվրոպայի հետ միասին «Հուվերը (Ամերիկյան նպաստամատույց վարչության նախագահ - Լ.Շ.) եղավ և Հայաստանի ժողովրդի իրական փրկիչը» (Նույն տեղը, էջ 242): Մի այլ առիթով Ալեքսանդր Խատիսյանը գրելու էր. «Հասկելը (Միացյալ Նահանգների և Դաշնակիցների միացյալ նպաստամատույցի կառավարիչը Հայաստանում) իր անունը ոսկե տառերով գրած է հայ ժողովրդի ֆիզիկական գոյության պահպանման գործին մեջ» (Խատիսյան Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բ տպ., Պեյրութ, 1968, էջ 192):

Երկրորդ շրջանը *քաղաքացիական-ստեղծագործականն* է՝ Ալեքսանդր Խատիսյանի վարչապետությամբ (1919 թվականի սկզբներից մինչև 1920 թ. մայիսի 5): Այս շրջանը Հայաստանի Հանրապետության յուրահատուկ մշակութային- պետական զարգացման մի փուլ է: Սակայն, բնական է, կրակե բոցերի մեջ ծնվող պետականությունը պարտավոր էր առաջին հերթին կարգի բերել ու առաջ մղել *ռազմական շինարարությունը*, ինչպես Ալ. Խատիսյանն է նշում, երեք ուղղություններով.

ա) ռազմական գործողությունների պլանավորում և զորքերի կառավարում, մասնավորապես երկրի ներսում թուրք-թաթարական խռովությունների ճնշման նպատակով, բ) բանակի մեծացում և վարժեցում: Այստեղ առաջին հերթին ենթադրվում էր հետևանու մեծացում, հեծելազորային բրիգադի կազմակերպում, տարիքավորների համար՝ վճարովի երկու կամավորական գնդերի ստեղծում, երկու զրահագնացքների կառուցում, Սևանա լճի վրա բեռնատար առագաստանավերի գործարկում, անգլիական զինատեսակով 40 հազարանոց բանակի զինավորում և հանդերձավորում, օդանավային գործի կազմակերպում (Կարսի օդակայանը)՝ ֆրանսիական օդանավերով, Երևանի, Ալեքսանդրապոլի և Կարսի պահակային գումարտակների ստեղծում և այլն: Առանձին ուղղություն էր Գլխավոր շտաբի դասընթացների բացումը: գ) Ռազմա-տնտեսական մասի կազմակերպում բանակի մատակարարման համար: Ստեղծվում էին ռազմական տեխնիկայի և հանդերձանքի վերանորոգման արհեստանոցներ, բացվում էին փամփուշտի գործարաններ Քանաքեռում և Ալեքսանդրապոլում և այլն: Կազմակերպվում էր բանակի մատակարարման հիմնարկների համակարգը (ինդենտական ծառայություն):

Բնական է նաև, որ այնպիսի քայքայված տնտեսությամբ և գլխավորապես ու հիմնականում գյուղատնտեսական երկրում, ինչպիսին էր նորանկախ Հայաստանը, պիտի առաջնահերթություն դիտվեր *գյուղատնտեսական (երկրագործական) զարգացման* շուտափույթ կազմակերպումը, ինչն ընթանում էր երկու հիմնական ուղղություններով. առաջին, անհետաձգելի էր հիմնահատակ քայքայված գյուղացիական տնտեսությունների վերականգնումը և նրա հետագա վերելքի ապահովումը, և երկրորդ, հանրապետության բնական հարստությունների՝ ջրուժի և ոռոգման հնարավորությունների ուսումնասիրությունը: Առաջին խնդրի լուծման համար կառավարությունը Կարսի շրջանում գնում էր եզներ և բաժանում կարիքավոր շրջաններին, գյուղացիներին տրվում էին արտասահմանից ստացված գյուղգործիքներ: Կարևոր հատված էր օժանդակությունը բամբակագործությանը, իսկ այգեգործներին տրվում էր դրամական օգնություն: Սևանա լճից արդյունահանվում էր ձուկ, Նոր Բայազետում (Գավառ) գործում էր ձկնաբուծարան:



Ալեքսանդր Խատիսյան

Ջրային պաշարների և ոռոգման հնարավորությունների ուսումնասիրության համար գործում էր 70 հոգիանոց հանձնախումբ. նպատակն էր կառուցել էլեկտրակայաններ և ջրարբիացնել անջրդի տափաստանները:Մասնավորապես, հանձնախմբի հավաքած նյութը անգնահատելի եղավ Հայաստանի համար և հետագայում հիմք դարձավ Սևան-Զանգու էլեկտրակայանների կասկադի շինարարությանը:

ՀՀ կառավարությունը որոշեց խճուղի բացել Կարսի և Բաթումի միջև և պարենի փոխադրությունը կազմակերպել այդ ճանապարհով, որը և կատարվեց: Որոշ քանակությամբ ալյուր տեղափոխվեց մինչև Աջարիայում հակավրացական շարժումների սաստկացումը:

Հետագոտվում էին Օլթիի ածխահանքերը, սկսված էր Կաղզվանի, Կողբի և Նախիջևանի աղահանքերի շահագործումը: Հողային օրենքի հրատարակումով ազգայնացվեց Հայաստանի հողային ֆոնդը և տրվեց աշխատավորությանը: Բացվել և գործում էին Նոր Բայազետի և Դիլիջանի գյուղատնտեսական դպրոցները: Կառավարության սեփականություն էր հռչակված Շուստովի կոնյակի գործարանը («Արարատ» անվան տակ):

Երկիրն արտահանում էր գլխավորապես բամբակ, կաշի, բուրդ, կոնյակ, գինի, գորգեր, աղ: Մահմեդականների թողած հողը վաճառվում էր տեղական ինքնավարություններին, ավելացվում էր պետական հողային ֆոնդը, որից մասնաբաժին էին ստանում հայ փախստականները: ՀՀ Փարիզի պատվիրակության երաշխավորությամբ Եվրոպայից հանրապետությունն ստացավ 2,5 միլիոն ֆրանկի ապրանքներ՝ գերանդիներ, բուրք, ապակի, գամ, լուցկի, արհեստագործական ապրանքներ և այլն, որոնց մի մասը տրվեց չքավորներին, մի մասն էլ վաճառվեց: Իր ակտիվ և արդյունավետ գործունեությամբ աչքի էր ընկնում «Հայկոոպ»-ը, որը աշխատեցնում էր նաև գործարաններ՝ օճառի, կաշվի և այլն: Գավառական և քաղաքային ինքնավարությունները ստանում էին աննշան տոկոսներով (2 կամ 3) նպաստ-փոխառություններ:

Փայտ էր արդյունահանվում, ճիշտ է, մեծ դժվարություններով, Սարիղամիշում և Ղարաքիլիսայի (Վանաձոր) շրջանում:

Նորանկախ հանրապետությունը կարիք ուներ շտապ կարգի բերել երկրի ֆինանսները, կազմակերպել առևտուրն ու ստեղծել «ոսկու ֆոնդ»: Վերջինիս ստեղծման նպատակով 1920 թվականի հունիսին նույնիսկ ՀՀ խորհրդարանը ընդունեց օրենք փոխառության մասին, որը սկսեց հաջողությամբ իրականացվել արտասահմանում, և կազմեց շուրջ 20 մլն. դոլար և ընդհատվեց միայն քեմալական Թուրքիայի ներխուժման ու ՀՀ վարչաձևի փոփոխության (1920 թ. դեկտեմբերի 2) հետևանքով:



ՀՀ բանակ

Առանձին հրատապություն ուներ հանրապետության երկաթուղային և խճուղային ճանապարհների կանոնավորումը, նրանց վերանորոգումն ու նորերի կառուցումը: Մասնավորապես, կարևոր էր երկաթուղային կայարանների, շոգեքարշերի և վագոնների նորոգումը, Երևանում նոր կայարանի կառուցումը և Երևան-Թիֆլիս ամենօրյա երկաթուղային կանոնավոր հաղորդակցության կազմակերպումը, ինչը աստիճանաբար ձեռք բերվեց: Եվ դա նավթի ու մազութի անբավարար ու անկանոն մատակարարման պայմաններում:

Կառուցվեցին Ճամշադինի և Քեշիշքենդի (Վայք) խճուղիները, իսկ Երևանի և Ղարաքիլիսայի միջև հաստատվեց ավտոմոբիլային երթևեկություն: Ընդսմին, որոշակի դժվարություն էր ստեղծում ձիերի պակասը: Այդ պայմաններում նույնիսկ հաջողություններ գրանցվեցին փոստհեռագրական հաղորդակցության կազմակերպական գործում: Նոր հեռագծերով իրար միացան Կարսն ու Ալեքսանդրապոլը, Երևանն ու Էջմիածինը, Քարվանսարան (Իջևան) ու Թոուզ-Կարան, Իգդիրը և Երևանը, Աշտարակ-Երևան-Ղամարլուն (Արտաշատ): Կանոնավորվեց փոստային հաղորդակցությունը: Երևանում կառուցվեց Բաքվի, Տաշքենդի և Աստրախանի հետ կապող ուժեղ ռադիոկայան, իսկ փոքր ռադիոկայաններ գործում էին Երևանում, Ալեքսանդրապոլում և Կարսում:

Պատշաճ հիմքերի վրա էր դրվում *խնամատարությունը* (ընկերային ապահովություն): Նորանկախ երկրում սոսկ մարդասիրական օգնությունից անցում էր կատարվում տարբեր կարգի արհեստանոցների ստեղծում՝ Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Դիլիջանում և այլուր: Փորձ արվեց ավերված գյուղերի վերաշինության՝ ճարտարապետ-ակադեմիկոս Ալ. Թամանյանի ղեկավարությամբ: Ստեղծվում էին որբանոցներ, հիվանդանոցներ, ծավալվում էր արդյունավետ պայքար վարակիչ հիվանդությունների դեմ: Մալարիայի դեմ պայքարի համար հրավիրվեց «բժիշկների համագումար»: Լայն համագործակցություն կար Ամերիկյան Նպաստամատույց կոմիտեի հետ:

Բծավոր տիֆի, մալարիայի և խոլերայի համաճարակի երկիրը, զաղթականության զանգվածային շարժերի երկիրը աստիճանաբար ապաքինվում էր, կազդուրվում: Սենդատու կայաններում



Լևոն Շանթ

տաք ճաշի սպասող ժողովուրդը սկսում էր իր ապրուստը հայթայթել սեփական աշխատանքով: Խոսք տանք Ս. Վրացյանին. «Մայիսի վերջերին [1919 թ. - Լ.Շ.] արդեն Թուրքիո պարպած բոլոր շրջանները՝ Շիրակ, Կարս և Կաղզվան, Կողբ ու Սարդարապատ, Սուրմալու ու Վեդի Բասար (Վեդի) բնակեցված էին վերադարձած հայերով, որոնք ագահությամբ կպան վերաշինական աշխատանքի: Կազմակերպվեց այդ վայրերում և վարչությունը, պարենավորման գործը, և կյանքը կամաց-կամաց սկսեց բարելավվել» (Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 250): Եվ այս բոլորը թուրք-թաթարական ներքին խժդժությունների և արտաքին սպառնալից մարտահրավերների ուղեկցությամբ:

Թերևս այսօր զարմանալի թվա, հանրապետությունում սահմանվել էր պարտադիր 8-ժամյա աշխատանքային օր: Ստեղծվում էին արհեստակցական միություններ: Սահմանվեցին աշխատանքի կոմիսարների հաստիքներ (բառացի՝ «Ստեղծվեցավ աշխատանքի կոմիսարներու պաշտոնեություն», Ալ. Խատիսյան, էջ 147):



Շուստովի գործարան

Ապշեցուցիչ եռանդով երկրում ծավալվել էր *հանրային կրթության* կազմակերպումը: Բացվում էին տարրական դպրոցներ, միջնակարգ ուսումնարաններ և առանձին դասընթացներ: Կազմվում էին կրթական նոր ծրագրեր: Բացվեցին գիմնազիաներ Երևանում, Ալեքսանդրապոլում, Դիլիջանում, Ղարաքիլիսայում: 1919 թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում հիմնադրվեց Հայաստանի Հանրապետության անդրանիկ համալսարանը՝ պատմա-լեզվագիտական և տնտեսագիտական բաժիններով, նախապատրաստված էր Երևանում բժշկական բաժանմունքի բացումը 1920 թվականի աշնանը: Համալսարանի բացման առիթով արտասանած ճառում հանրային կրթության նախարար Նիկոլ Աղբալյանը ասաց. «Այն ջահը, որ մենք վառում ենք այսօր Հայաստանի բարձրավանդակի վրա, չի հանգչի երբեք և կլուսավորե Առաջավոր Ասիան»:

1919 թ. հուլիսի 15-ին հիմնվեցին հուշարձանների պահպանման և արվեստի հովանավորության գերատեսչությունները:

Կազմակերպվեցին հայոց լեզվի դասընթացներ պաշտոնեության համար: Կարսի շրջանում հիմնվեցին դպրոցներ մահմեդականների համար: Հիմնական դժվարությունը ուսուցչական կազմի, դպրոցական պիտույքների, շինությունների և նրանց նորոգման համար նյութերի պակասն էր: 1920 թվականին Հայաստան ներմուծվեցին 70 հազար ֆրանկի դպրոցական պիտույքներ: Իտալիայում ապակի էր պատվիրված, իսկ Կարսից ստացվում էր տախտակ: Հանրապետությունում, թեև զարմանալի թվա, գործում էին «սկաուտների» մասնավոր ընկերություններ, որոնց վարժեցման համար հրավիրված էին հատուկ ուսուցիչներ Կ.Պոլսից:

Խնդիրը բարդանում էր նրանով, որ խոշոր դպրոցների շատ շինություններ տրամադրված էին որբանոցներին ու հիվանդանոցներին:

Հիրավի, աստիճանաբար, այդուհանդերձ, Հայաստանը կազդուրվում էր և ձեռք բերում կայուն զարգացման ընթացք: Այդ ճանապարհին ձեռք բերվեցին որոշակի և նշմարելի արդյունքներ 1920 թվականի ամռանը: Հանրապետության ներքին ու միջազգային կյանքին քաջածանոթ Ալ. Խատիսյանը գրում է. «Ես Հայաստանը թողուցի 1920 թվականի հունիսի վերջին: Չորս ամիս բացակա էի երկրեն (...) Այդ չորս ամսվա ընթացքին երկիրը հասեր էր իր ուժեղացման և հողային ծավալման գագաթնակետին» (Խատիսյան Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, էջ 249): «Մեկ կողմե Հայաստանը կամրանար ներքնապես, մյուս կողմե կմտներ միջազգային հաղորդակցության մեջ, իսկ փոխառության միջոցով կարգի կբերեր իր ելևմուտը (ֆինանսները)» (Նույն տեղը, էջ 252):

Սակայն, նույն շրջանում արմատապես փոխվեց միջազգային իրադրությունը Հայկական հարցի շուրջ: Իր թունավոր շոշափուկները դեպի Հայաստան ուղղորդեց բոլշևիկա-քեմալական տանդեմը: «Օգոստոսի կեսեն մինչև դեկտեմբերի 2-ը,- շարունակում է Ալ. Խատիսյանը,- այդ երեք ու կես ամիսներու ընթացքին, սկսավ մայր մտնել Հայաստանի Հանրապետության աստղը և դեկտեմբերի 2-ին ծածկվեց խավարի մեջ» (Նույն տեղը, էջ 252):



Հին Երևան

# Հայաստանը գլոբալացման հորձանուտում. լուծումնե՞ր, թե՞ խնդիրներ

*Մհեր Ծատուրյան*
**Անկախ խորհրդատու,**
**միջազգային իրավագիտության և տնտեսագիտության մագիստրոս**

## 1. Ներածություն

Անկախությունից ի վեր Հայաստանը հետևողականորեն ներգրավվել է այլ երկրների կամ երկրների խմբերի հետ սերտ կապեր հաստատելու գործընթացի մեջ: Գլոբալացման այս գործընթացն իր մեջ ներառում է առևտրի, օտարերկրյա ուղղակի ներդրումների, կապիտալ հոսքերի, միգրացիայի ու տեխնոլոգիայի տարածման միջոցով միջազգային տնտեսության մեջ և արտադրության ու փոխանակումների գլոբալ բարդ համակարգում ինտեգրման բաղադրիչ: Գործընթացը պայմանավորված է նաև քաղաքական, կենսաբանական և սոցիալ-մշակութային գործոններով և, մասնավորապես, գաղափարների, լեզուների կամ մասսայական մշակույթի միջազգային շրջանառությամբ:

Գլոբալացումը կարող է համարվել դրական և միաժամանակ բացասական երևույթ՝ կախված դիտարկվող հարցերի էությունից ու հանգամանքներից: Այս երևույթի համար բոլոր առումներով էական նշանակություն ունի սահմանների վրա բոլոր փոխանակումների նկատմամբ խոչընդոտների նվազեցումը և վերացումը: Թեև անժխտելի են արդյունքում ձևավորվող մեկ համաշխարհային շուկայի օգուտները առանձին երկրների սոցիալ-տնտեսական զարգացման տեսանկյունից (ներազատական գլոբալացում), սակայն նշված խոչընդոտների բացակայությունը ենթադրում է նաև սեփական համապատասխան բնագավառները






պաշտպանելու համար ներքին ուղղվածություն ունեցող քաղաքականությունների իրականացման սահմանափակ հնարավորություններ:

Ըստ հույն հայտնի տնտեսագետ Տակիս Ֆոտոպուլոսի, երևույթը շուկայական տնտեսության «աճիր կամ մեռիր» շարժընթացի համակարգային միտումների արդյունք է, որը հաջորդել է միջազգային կորպորացիաների արագ տարածմանը: Այս զարգացումները արդյունավետ կերպով չեն փոխհատուցվել արհեստակցական միությունների գործողությունների և քաղաքական գործունեության այլ ձևերի կողմից ստեղծված հակակշռող միտումներով, ինչը որոշակիորեն հատկանշական է նաև Հայաստանի ենթատեքստում: Բազմաբնույթ երևույթի մաս կազմող քաղաքական գլոբալացումը արտահայտվում է միջազգային էլիտայի ձևավորմամբ ու ազգ-պետության դերի աստիճանաբար նվազմամբ, իսկ մշակութային գլոբալացումը՝ մշակույթի համաշխարհային համասեռացմամբ, և այլն:

Ըստ շվեյցարական KOF տնտեսագիտական ինստիտուտի կողմից հաշվարկվող գլոբալացման ինդեքսի, որը մասնավորապես չափում է գլոբալացումը ընդհանուր և երեք հիմնական ուղղություններով՝ տնտեսական, սոցիալական և քաղաքական, 2010 թ. դիտարկված 208 երկրների թվում Հայաստանը գլոբալացման ընդհանուր ինդեքսի 54,99 արժեքով (առավելագույնն 100-ից) զբաղեցնում է 96-րդ տեղը: Տնտեսական գլոբալացման ինդեքսի 68,63 արժեքով երկիրը զբաղեցնում է 61-րդ տեղը և առաջ է այնպիսի երկրներից, ինչպիսիք են Մակեդոնիան, Թուրքիան, Կորեան, Մեքսիկան, Ալբանիան, Բրազիլիան, Ռուսաստանը, Չինաստանը, Ճապոնիան, Հնդկաստանը և այլն:

Սոցիալական գլոբալացման KOF ինդեքսի 44,78 արժեքով Հայաստանը զբաղեցնում է 114-րդ տեղը և քաղաքական գլոբալացման ինդեքսի 50,74 արժեքով՝ 135-րդ տեղը: Չնայած ըստ այս երկու ինդեքսների Հայաստանի հարաբերականորեն ավելի քիչ ներգրավվածությանը՝ պետք է խոստովանել, որ երկիրը նշված ուղղություններով հանդես է գալիս որպես ազդեցության պասիվ ներկրող: Առանց նսեմացնելու սոցիալական և քաղաքական ուղղությունների կարևորությունը և թողնելով դրանց քննարկումը հետագա ընդհանուր ուսումնասիրություններին՝ պետք է դիտարկենք Հայաստանի տնտեսական գլոբալացման մեջ ներգրավվածության մակարդակը: Արդյո՞ք լավ է տնտեսական բարձր ներգրավվածությունը այս պարագայում:

## 2. Տնտեսական գլոբալացման ազդեցությունը

Նախ ամփոփենք տնտեսական գլոբալացման ազդեցությունը ողջ աշխարհում: Արդյունաբերական առումով՝ դա համաշխարհային արտադրական շուկաների ստեղծումն է և սպառողների ու ընկերությունների համար օտարերկրյա բազմաթիվ արտադրանքների ավելի լայն մատչելիությունը: Ֆինանսական առումով՝ դա համաշխարհային ֆինանսական շուկաների ստեղծումն է և վարկառուների համար արտաքին ֆինանսավորման ավելի լավ մատչելիությունը, ինչպես նաև ազգային արժույթների ահռելի չափերի հասնող միջազգային առք ու վաճառքը, ինչը օժանդակում է առևտրի ու ներդրումների ընդլայնված մակարդակին:

Ի դեպ, քանի որ այս համաշխարհային կառույցները ավելի արագ աճեցին, քան կայացավ միջազգային որևէ կանոնակարգում, համաշխարհային ֆինանսական ենթակառուցվածքի անկայունությունը զգալիորեն ավելացավ, ինչը հանգեցրեց ներկա ճգնաժամին: Ավելին, համաշխարհային ընդհանուր շուկայի ստեղծումը՝ հիմնված ապրանքների ու կապիտալի փոխանակման ազատության վրա, ենթադրում է այդ շուկաների փոխադարձ կապվածություն, ինչը հաստատում է այն իրողությունը, որ տնտեսական անկումը մեկ երկրում չկարողացավ հաղթահարվել:

Մրցակցության առումով պետք է նշել, որ գոյատևելը գործարարության նոր, համաշխարհային շուկայում պահանջում է բարելավվող

արտադրողականություն և աճող մրցունակություն: Շուկայի համաշխարհային դառնալու պատճառով տարբեր արդյունաբերական ճյուղերում գործող ընկերությունները պետք է բարձրացնեն իրենց արտադրանքի մակարդակը և հմտորեն օգտագործեն տեխնոլոգիաներ՝ աճող մրցակցությանը դիմակայելու համար:

Ի վերջո, տնտեսական գլոբալացումը ենթադրում է ավելի շատ միջազգային ճամփորդություններ ու զբոսաշրջություն: Նաև ենթադրում է ավելի շատ արտագաղթ, ներառյալ՝ անօրինական: Արտագաղթի հետ մեկտեղ՝ զգալիորեն աճել են դեպի զարգացող երկրներ կատարվող դրամական փոխանցումների հոսքերը:

### 3. Հայաստանի տնտեսական քաղաքականությունն ու ցուցանիշները

Վերջին տասնամյակում Հայաստանը ունեցել է երկարատև ուժեղ տնտեսական աճ՝ զուգակցված ազատական առևտրատնտեսական քաղաքականությամբ, ինչը շարունակվում է ընթացիկ տնտեսական լուրջ անկման ընթացքում: Այս ժամանակաշրջանը, ըստ էության, բաժանված է նախաճգնաժամային ու ճգնաժամային մասերի, և տնտեսական միջավայրի բոլոր դրական միտումները հակադարձվել են անկման ժամանակ:

Տասնամյակի ընթացքում Հայաստանի կառավարությունը շարունակել է մեղմ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականություն և կարողացել է պահպանել մակրոտնտեսական կայունություն: Սղաճը պահվել է միջին մակարդակի սահմաններում, երբ Կենտրոնական բանկը իր քաղաքականությունը կենտրոնացրել է գնային կայունության վրա և ճգնաժամից առաջ թույլ է տվել, որ դրամը արժևորվի: Ներկայումս, հիմնական քաղաքական հիմնախնդիրը նոր գործիքների ներդրումն է՝ խոր ճգնաժամը հաղթահարելու և կայուն աճ սկսելու համար:

Հարկային վարչարարության բարելավման շնորհիվ կառավարությունը նշանակալիորեն բարելավել էր իր հարկաբյուջետային դիրքը մինչև 2008-2009 թթ.: Պետական բյուջեի դեֆիցիտը նվազել էր՝ հասնելով 46,7 մլրդ. դրամի կամ ՀՆԱ-ի 1,5%-ի 2007 թ.: Սակայն, 2009 թ. Հայաստանի բյուջեի դեֆիցիտը մեծացավ՝ տնտեսական ճգնաժամով պայմանավորված հարկային եկամուտների զգալի կրճատման պատճառով, և բյուջեի դեֆիցիտի թույլատրելի առավելագույնը 5%-ից հասցվեց 7,5%-ի: Հարկային եկամուտների անկումը մեծ մասամբ ԱԱՀ եկամուտների զգալի կրճատման արդյունքն էր. ԱԱՀ-ն հանդիսանում է բյուջեի եկամուտների ամենամեծ աղբյուրը և հիմնականում գանձվում է սահմանում՝ ներմուծվող ապրանքներից, որոնց ծավալները նույնպես նշանակալիորեն նվազել էին:

2009 թ. միջազգային վարկատու հաստատությունների և Ռուսաստանի տրամադրած զգալի ֆինանսական աջակցությունը օգնեց կառավարությանը փոխհատուցել բյուջեի եկամուտների կրճատումն ու թեթևացնել դեֆիցիտը: Հայաստանը միշտ ստացել է բարձր մակարդակի օտարերկրյա ֆինանսական ու տեխնիկական աջակցություն: Նշված վարկերի ստացումից հետո երկրի արտաքին պետական պարտքը աճեց՝ 2009 թ. հուլիսի դրությամբ հասնելով 2,4 մլրդ. ԱՄՆ դոլարի: Չնայած պարտքի բեռի ավելացմանը՝ Հայաստանը ձգտել է լրացուցիչ ֆինանսական աջակցության: Արդյունքում, պարտքի հարաբերությունը ՀՆԱ-ին կարող է ավելի քան կրկնապատկվել 2008 թ. 13,2%-ի համեմատությամբ:






Դրամավարկային քաղաքականության առումով պետք է նշել, որ վաղ 2000-ականներին դրամավարկային պայմանների կայունացումից հետո, Կենտրոնական բանկը աստիճանաբար նվազեցրեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը մինչև նվազագույն 3,5%-ի 2005 թ.՝ 2007 թ. բարձրացնելով այն ի պատասխան սղաճի աճին, իսկ 2009 թ. հասցվեց առավելագույն 7,75%-ի՝ դրամի արժեզրկմանը զուգահեռ: Գործարարությունը դեռևս բախվում էր վարկավորման բարձր տոկոսադրույքների, որոնք պայմանավորված էին բարձր գործարար ռիսկով, ինչն էլ իր հերթին, մասնավորապես, հիմնված էր գործարար միջավայրում բարդությունների, դրա շուրջ կոռուպցիայի և մրցակցային վատ պայմանների վրա:

Թեև ըստ Համաշխարհային բանկի Գործարարություն վարելու (Doing business) 2010 թ. զեկույցի Հայաստանը 183 երկրների թվում զբաղեցնում է 43-րդ տեղը և վերջին բարելավումներից էր, մասնավորապես, սահմանային առևտրի հեշտացումը, դեռևս շատ խնդիրներ կան: Արդյունաբերական ճյուղերի, հատկապես շինարարության, ֆինանսավորման խնդիրները նպաստեցին դրանց ցածր արդյունքին ու ՀՆԱ-ի զգալի կրճատմանը: 2009 թ. սեպտեմբերին վերաֆինանսավորման տոկոսադրույքը իջեցվեց 5%-ի՝ տնտեսական գործունեությունը խթանելու համար, երբ սղաճային ռիսկերը ամբողջությամբ չդրսևորվեցին ու գնային կայունությունը ապահովված էր: Սակայն այս իջեցման ազդեցությունը սահմանափակ է՝ թերզարգացած պարտքի շուկայի պայմաններում:




Չնայած արտահանումներից ու փոխանցումներից եկող արտարժույթի ներհոսքի կրճատմանը՝ Կենտրոնական բանկը դրամի փոխարժեքը կայուն էր պահել մինչև 2009 թ. մարտ ամիսը: Այդ ժամանակ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամը թույլ տրվեց մեկ օրում արժեզրկվել 18%-ով, երբ ռեզերվների վրա ճնշումը շարունակում էր աճել: Ըստ պաշտոնական հայտարարության, Կենտրոնական բանկը այժմ միայն փոքր միջամտություններ է կատարում արժույթի տեղական շուկայում՝ դրամի փոխարժեքի ավելորդ տատանումները կանխելու նպատակով:

Ինչ վերաբերում է Հայաստանի տնտեսության կառուցվածքին, այն շատ էր փոխվել մինչև ճգնաժամը, և ծառայությունները ու շինարարությունը իրենց զգալի աճով դարձել էին առաջատար ճյուղեր: Գյուղատնտեսության վիճակը փոքր-ինչ բարելավվել էր ոռոգման ցանցի որոշակի վերականգնմամբ և շուկայավարման ավելի արդյունավետ համակարգերի մշակմամբ: Արդյունաբերությունը մեծ մասամբ օգտվել է միայն մետաղադրդյունաբերության, հանքարդյունաբերության ու էներգետիկայի ոլորտներում աճող ներդրումներից: Մինչև 2007 թ. գրանցվող տնտեսության երկնիշ աճը համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ազդեցությամբ իջավ մինչև 6,8%-ի 2008 թ.:

2009 թ. որոշ գնահատումների համաձայն իրական ՀՆԱ-ն կրճատվեց 15%-ով՝ ամենաբարձրը տարածաշրջանում: Այս կտրուկ նվազումը շինարարությունում ու շինանյութերի արտադրությունում լուրջ անկման, 2008 թ. ոչ-երկաթային մետաղների ու

քիմիական ապրանքների միջազգային գների զգալի կրճատման և արտերկրում աշխատող հայերի դրամական փոխանցումների զգալի նվազման (ինչը ցածրացրեց ներքին պահանջարկը) հավաքական արդյունքն էր: Միջազգային հաստատությունների ու երկկողմ վարկատուների ֆինանսական աջակցությամբ՝ կառավարությունը քայլեր է ձեռնարկում ճգնաժամի ազդեցությունը նվազեցնելու համար:

## 4. Արտաքին առևտուր և վճարումներ

Հայաստանի ապրանքների ու ծառայությունների արտահանումները որպես ՀՆԱ-ի մաս վերջին տարիներին ցածր են եղել 20%-ից, ինչը միջազգային համեմատությամբ շատ ցածր է: Դա ոչ միայն երկրի աշխարհագրաքաղաքական իրադրության ազդեցության, այլ նաև արտահանումների ոչ-դիվերսիֆիկացված կառուցվածքի և արտահանմանն ուղղվածություն ունեցող արտադրության զարգացման բարդությունների հետևանքն է: Վերջինս վաղ 2000-ականներին կենտրոնացած էր ցածր տրանսպորտային ծախսերով ճյուղերի, իսկ 2005 թ. ի վեր հանքարդյունաբերությունում նոր ներդրումներից հետո՝ հիմնական մետաղների ու հանքանյութերի վրա:

Հանքանյութերը, մեքենաները ու սարքավորումները վերջին տարիներին ունեցել են ամենամեծ մասնաբաժինները Հայաստանի ներմուծումների կառուցվածքում՝ այդ ապրանքների բարձր միջազգային գների պատճառով: Դրանց համար աճող ներքին պահանջարկը նաև ազդեցություն թողեց Հայաստանի առևտրի հաշվեկշռի վրա. 2008 թ. առևտրի դեֆիցիտը հասավ անկախությունից հետո ամենաբարձր՝ ռեկորդային 3,3 մլրդ. ԱՄՆ դոլար մակարդակի, ինչը 58%-ով բարձր էր 2007 թ. համեմատությամբ: 2009 թ. արտահանումները զգալիորեն կրճատվեցին, և չնայած դրան՝ իջած ներքին պահանջարկը էլ ավելի շատ նվազեցրեց ներմուծումները, ինչն էլ կրճատեց Հայաստանի առևտրի զգալի դեֆիցիտը: Սակայն, ՀՆԱ-ի երկնիշ անկման պատճառով առևտրի դեֆիցիտը որպես ՀՆԱ-ի մաս հնարավոր է, որ աճի 2008 թ. համեմատությամբ:

Վաղ 2000-ականներին Հայաստանի ընթացիկ հաշվի դեֆիցիտը զգալիորեն նվազել էր՝ արտահանումների որոշակի աճի, ներմուծումների ավելի դանդաղ աճի և կայուն ընթացիկ փոխանցումների շնորհիվ: Առևտրի աճող անհավասարակշռությունը սկսեց մեծացնել ընթացիկ հաշվի դեֆիցիտը 2006 թ.՝ հասցնելով այն 117 մլն. ԱՄՆ դոլարի կամ ՀՆԱ-ի 1,8%-ի: 2008 թ. այս դեֆիցիտը հասավ հետանկախության շրջանում ամենաբարձր ռեկորդային 1,355 մլրդ. ԱՄՆ դոլարի, ինչը կազմում է ՀՆԱ-ի 11,4%-ը: 2009 թ. ընթացիկ հաշվի դեֆիցիտը շարունակեց աճել երկու չափումներով էլ, թեև երկրորդ դեպքում դա մասամբ տնտեսական երկնիշ անկման արդյունքն է:

Մեծապես հայկական սփյուռքը, ներառյալ՝ արտերկրում ժամանակավորապես աշխատողները, եղել է դեպի Հայաստան արտարժույթի ներհոսքի ծանրակշիռ աղբյուր: Ընթացիկ փոխանցումների աճող ավելցուկը հասավ մոտ 710 մլն. ԱՄՆ դոլարի 2006 թ. և 1,163 մլրդ. ԱՄՆ դոլարի 2008 թ.: Չնայած առևտրի դեֆիցիտի կրճատմանը՝ 2009 թ. ընթացիկ



KOF Index of Globalization 2007




հաշվի դեֆիցիտը աճեց մասնավոր զուտ փոխանցումների՝ Հայաստանում առևտրի դեֆիցիտի ֆինանսավորման հիմնական միջոցի, ընդարձակ անկման պատճառով:

Սկսած 2002 թ. դեպի Հայաստան օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքը աճում էր՝ 2007 թ. հասնելով մոտ 670 մլն. ԱՄՆ դոլարի և 2008 թ. աճելով 69%-ով ու կազմելով 1,13 մլրդ. ԱՄՆ դոլար: Ռուսաստանը հիմնական աղբյուրն է այս ներդրումների, որոնք վերջին տարիներին կատարվել են էներգետիկայի, հեռահաղորդակցության ու տրանսպորտի, մետաղարդյունաբերության, քաղաքացիական ավիացիայի և գազի բաշխման ոլորտներում: Օտարերկրյա ուղղակի ներդրումները կտրուկ կերպով նվազել են 2009 թ.՝ աղբյուր երկրներում դժվարությունների պատճառով: Ցածր ներդրումներն ավելի կդանդաղեցնեն արտահանումների ու ՀՆԱ-ի աճը և կպահեն Հայաստանը լրջորեն կախված փոխանցումների ներհոսքից՝ իր արտաքին վճարումները ֆինանսավորելու համար:

## 5. Առևտրի քաղաքականություն

Գյուղատնտեսության, արդյունաբերության ու ծառայությունների բնագավառներում Հայաստանը իրագործում է Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) համաձայնագիրն ու իր պարտավորությունները: Հաշվի առնելով ԱՀԿ այլ անդամների համեմատությամբ իր պարտավորությունների զգալի մակարդակն ու իր սոցիալ-տնտեսական վիճակը՝ ընթացիկ բազմակողմ բանակցություններում Հայաստանը չունի լրացուցիչ պարտավորություններ ստանձնելու հնարավորություն:

Գյուղատնտեսությանը առնչվող պարտավորությունները ներառում են հետևյալը՝ գյուղատնտեսական արտահանողներին լրավճարների արգելում, ընթացիկ համախառն աջակցության չափման իմաստով գյուղատնտեսական արտադրողներին ներքին աջակցության արգելում, գյուղատնտեսական առանձին ապրանքին ներքին աջակցությունը այդ ապրանքի արտադրության ամբողջ արժեքի 5%-ից ցածր, գյուղատնտեսությանը ընդհանրապես տրվող ներքին աջակցությունը ամբողջ գյուղատնտեսական արտադրության արժեքի 5%-ից ցածր, ներքին գյուղատնտեսական արտադրանքի վաճառքը ԱԱՀ-ի ենթակա՝ ըստ տնտեսության բոլոր ճյուղերի համար օրենքով սահմանված ընթացակարգի ու չափի:

Հայաստանը առևտրի իր գործընկերներին շնորհում է զգալի գյուղատնտեսական շուկայի մատչելիություն: 2008 թ. գործող մաքսատուրքերի պարզ միջինը կազմել է ընդամենը 6,9%: Բոլոր ապրանքների վրա ամրագրվել են առավելագույն մաքսատուրքեր, որոնց պարզ միջինը կազմում է 14,7%: Գործող զրոյական մաքսատուրքերով ապրանքները կազմել են ամբողջի 32,1%-ը և համապատասխան ներմուծումները կազմել են ամբողջ ներմուծումների մոտ մեկ երրորդը 2008 թ.:

Հայաստանում ներքին գյուղատնտեսական աջակցությունը շատ աննշան է բյուջետային սահմանափակումների պատճառով: Երկիրը ունի նշանակալի ներուժ իր սննդի արտադրության մակարդակը ընդլայնելու և սննդի առևտրի խիստ բացասական հաշվեկշիռը բարելավելու համար: Սննդի ներմուծումները գերազանցում են սննդի արտահանումներն ավելի քան չորս անգամ: Այդ նպատակով անհրաժեշտություն կա որոշակի միջոցներ ձեռնարկել՝ արտադրողականությունն ու արդյունավետությունը բարձրացնելու, ենթակառուցվածքները բարելավելու, վարկերի մատչելիությունը հեշտացնելու, ժամանակակից տեխնոլոգիաներ ներդնելու, նորարարությունը խրախուսելու համար:

Չնայած նշված խնդիրներին, հայկական գյուղատնտեսական արտադրանքը, իր լավ համի ու որակի շնորհիվ, արտերկրի շուկաներում վայելում է որոշակի մրցունակություն՝ թեև բախվելով շուկայի մատչելիության զգալի դժվարությունների: Դրանք հատկապես վերաբերում են խիստ կանոնակարգերին համապատասխանության պահանջներին, որոնց բավարարելու համար անհրաժեշտ են ներքին համակարգեր, ժամանակ ու ներդրումներ: Այդ երկրները հաճախ ունեն նաև ավելի շահավետ ներքին շուկայի պաշտպանություն ու արտադրողին աջակցության քաղաքականություն, ինչը ամբողջացնում է անհավասար շուկայի մատչելիության պայմանների պատկերը:

Հայաստանը առևտրի իր գործընկերներին շնորհում է նաև զգալի արդյունաբերական շուկայի մատչելիություն: 2008 թ. գործող մաքսատուրքերի պարզ միջինը կազմել է ընդամենը 2,2%: Բոլոր ապրանքների վրա ամրագրվել են առավելագույն մաքսատուրքեր, որոնց պարզ միջինը կազմում է 7,5%: Գործող զրոյական մաքսատուրքերով ապրանքները կազմել են ամբողջի 77,5%-ը և համապատասխան ներմուծումները՝ ամբողջ ներմուծումների ավելի քան 80%-ը 2008 թ.:

Արդյունաբերությունը նպատակաուղղված աջակցության կարիք է զգում: Կառավարության այսպես կոչված օպերատիվ շտաբը ստեղծվել է այդ աջակցությունը համակարգելու համար՝ նոր աշխատատեղեր ստեղծելու, տեղական արտադրանքով ներմուծումները փոխարինելու, արտահանումները ավելացնելու, նորարարական տեխնոլոգիաների օգտագործումը խրախուսելու նպատակով: Ի լրումն, ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնը աջակցում է փոքր ու միջին գործարարությանը: Սակայն, անհրաժեշտություն կա բարձրացնելու ընդհանուր աջակցության արդյունավետությունը՝ մասնավորապես Ռուսաստանից տնտեսական կայունացման նպատակով ստացված 500 մլն. ԱՄՆ դոլար միջպետական վարկի ու այլ միջոցների բաշխման առումով, ինչպես նաև բարելավելու գործարար միջավայրն ու մրցակցությունը:

Հայաստանը առևտրի իր գործընկերներին շնորհում է նաև զգալի ծառայությունների շուկայի մատչելիություն: Երկիրը պարտավորություններ է ստանձնել ծառայությունների 106 ճյուղերում: Որակյալ ծառայությունների մատչելիությունը ռազմավարական նշանակություն ունի մյուս բնագավառների զարգացման համար, և հետևաբար ծառայությունների առևտրի ազատականացումը ողջունելի է: Սակայն, չնայած դրան՝ ծառայությունների առաջարկը դեռևս անհամաչափ է ըստ ճյուղերի: Մասնավորապես, դեռևս չի կայացել արժեթղթերի շուկան, թեև շարունակվում է այդ ոլորտում մուտքի հեշտացումն ու խոչընդոտների վերացումը և ենթակառուցվածքային հաստատությունների արդյունավետության բարձրացումը:

## 6. Եզրակացություններ

*Ամփոփելով վերը դիտարկված հանգամանքները՝ Հայաստանի տնտեսական գլոբալացման մեջ ներգրավվածության աստիճանի նկարմամբ բնական արձագանքը բացասական է: Ակնհայտ է, որ այդ աստիճանը անհավասար է արտաքին աշխարհի հետ և անհամաչափ՝ ներքին հնարավորությունների հետ: Վազքը լավ է, բայց արագ վազքը կարող է վնասել թուլակազմ երեխայի առողջությունը: Ակնհայտ է նաև, որ ազատականացումների հեղեղը սկսվել է համապատասխան ռազմավարությունների բացակայությամբ կամ դրանց ժամանակային անհամապատասխանությամբ: Վերնագրում նշված հարցին կարելի է պատասխանել այսպես. «խնդիրներ»՝ քանի դեռ դրանք չեն լուծվել:*

*Առանձնահատուկ նշենք, որ նախկինում տպավորիչ աճ գրանցած երկիրը այժմ գտնվում է խոր ճգնաժամում՝ չհավասարակշռված գլոբալացման մեջ ընկղմվելու արդյունքում: Ճգնաժամի հետևանքները հաղթահարելու ցանկացած միջցառումներ իրականացնելուց առաջ անհրաժեշտ է դիտարկել մենաշնորհային ներմուծումների վրա հիմնված տնտեսությունից քաղաքակիրթ շուկայական տնտեսության անցնելու մոտեցումները: Որպեսզի գլոբալացման ընթացքում տրանսպորտային պարտավորություններից սպասվեն սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման հնարավորություններ:*



# Համերաշխությունը գլոբալիզացիայում և դրա արտապատկերումը և մարտահրավերները շվեդական մոդելի վրա

Պետեր Վեիդերուդ
Շվեդիայի Քրիստոնյա սոցիալ-դեմոկրատների նախագահ

*Անչափ ուրախ ու հպարտ եմ, որ այսօր մասնակցում եմ այս կարևոր համաժողովին և ողջունում եմ այս կերպ փոփոխվող հասարակությունում սոցիալիզմի դերը ներկայացնելու Ձեր մոտեցումը:*

*Այսօր մենք ապրում ենք կտրուկ փոփոխությունների դարաշրջանում: Գլոբալիզացիան արմատապես փոխեց «ազգային պետություն» հասկացությունը, որը որոշ քաղաքական մարտահրավերներ իրականացնելու համար շատ դեպքերում դարձավ փոքր, իսկ որոշ դեպքերում՝ բավական մեծ հասկացություն:*

*Փաստացիորեն փոփոխվել է հենց «ազգային պետություն» հասկացությունը: 19-րդ դարում այն միտքը, որ մեկ պետությունը մեկ ազգինը կամ մեկ անձինն էր, աստիճանաբար դիրքերը զիջեց նոր մոտեցմանը, համաձայն որի՝ պետությունը մենք դիտարկում ենք որպես մարդկանց, ինչ-*



Պետեր Վեիդերուդ

*պես նաև ազգային փոքրամասնությունների իրավունքներ տրամադրող դեմոկրատական մի կառույց:*

*Բոլոր երկրներում զարգացող բազմամշակութային փոխկախվածության պայմաններում մարդու իրավունքների և միջազգային իրավունքի սկզբունքների նշանակությունն առավել է բարձրանում և մեր քաղաքական մոտեցումների ու գործողությունների ժամանակ պետք է առաջնորդվել դրանով:*

*Այս փաստի ապացույցներից է անցյալ շաբաթ Հայոց ցեղասպանության ճանաչման համար շվեդական պառլամենտի որոշումը, որը միաձայն աջակցություն գտավ իմ կուսակցության կողմից: Անցյալ տարի նոյեմբերին մեր կուսակցության համաժողովին մենք նույնպիսի որոշում ենք ընդունել:*

*Մենք լիովին գիտակցում ենք, որ սա Ձեր երկրի և Թուրքիայի հարաբերություններում կհանգեցնի որոշակի կարճաժամկետ դժվարությունների: Սակայն այս որոշումը չի հանդիսանում պատմությանը ծանոթանալու պես օժանդակություն մի երկրին ի հաշիվ մյուսի: Մեր որոշումը հիմնված է այն գիտակցության վրա, որ մարդու իրավունքների և միջազգային իրա-*

վունքի ապագա կայուն քաղաքականությունը պետք է հիմնվի պատմության ճշմարտացի նկարագրության վրա: Կողմերին հաշտեցնելու համար հարկավոր է փնտրել և ասել ճշմարտությունը, որպեսզի նրանք հաղթահարեն իրենց հոգեկան խեղվածքները, ինչպես նաև ընդգծել համընդհանուր պատասխանատվության զգացումը, որպեսզի վստահ լինենք, որ այլևս աշխարհը երբեք վկա չի լինի ցեղասպանության:

Հուսով եմ, որ դրանում ներառված հատկապես հայկական ու թուրքական շահագրգիռ կողմերը կարող են օգտագործել շվեդական պառլամենտի այս որոշումը և սկսել հաշտեցման բանակցությունների գործընթացը:

Պարոն Նախագահ,

Ես կօգտագործեմ իմ երկրի փորձը՝ ներկայացնելու, թե ինչպես է փոփոխվող հասարակությունն ազդում մեր քաղաքական մոտեցումների վրա: Վստահ եմ, որ սոցիալ-դեմոկրատական արժեքները, ինչպիսիք են հավասարությունը, արդարությունը և արժանապատվությունը, այսօր, առավել քան երբևիցե, բոլորի համար հույժ գնահատելի և անհրաժեշտ են:

Այնուամենայնիվ, որպեսզի իրագործենք մեր հռչակած սկզբունքները, պետք է որոշ մեթոդներ, որոնք զարգացրել ենք ժամանակակից, արդյունաբերական, աշխարհիկ, միասեռ 20-րդ դարում, առավել հարմարեցնենք գլոբալիզացված, տրանս- ժամանակակից, գիտելիքի վրա հիմնված հետաշխարհիկ և տարասեռ 21-րդ դարում:

Շվեդիան կարող է ներկայանալ իբրև սոցիալ- դեմոկրատական մոդելի երկիր: 1933 թվականին մենք դարձանք մեծամասնություն և դրանից հետո կառավարությունը Շվեդիայում իր 77 տարիներից 64-ը կառավարվում էր սոցիալ-դեմոկրատների կողմից: Շվեդները մտածում և գործում են համաձայն սոցիալ-դեմոկրատական արժեքների: Շվեդական մոդելը սոցիալ- դեմոկրատական մոդելն է:

Օտարերկրացիները կարող են հրապուրվել շվեդական մոդելով: Երբ ամերիկացի պահպանողական լրագրող Պ. Օռուրկեն այցելել էր Շվեդիա, պատմում էր, որ այն նմանեցնում էր Դիսնեյլենդին: Նա շվեդական մոդելը բացատրեց հետևյալ կերպ.

Շվեդիան հոգ է տանում իր քաղաքացիների մասին՝ ծնված օրից մինչ հարություն, բայց հարկերը տանում են նրանց, և նրանք սիրում են դա:

Այնուամենայնիվ, նման ենթատեքստում կարևոր է քաղաքական ձեռքբերումների վրա կենտրոնանալ անապահովների տեսանկյունից՝ հավասարության, արդարության ու խաղաղության պահպանման պայմաններում.

- Հասարակություն, որում չնչին է անապահովների և հարուստների միջև տարբերությունը և չկա գործազրկություն: Կարող է և այդպես է, սակայն դա չի վերաբերում վերջին 20 տարիներին:
- Հասարակություն, որում առողջապահությունն ու կրթությունն անվճար են բոլորի համար: Ճշմարիտ է, բայց երկու բնագավառներում էլ պայքարում ենք բյուջեում կրճատումների և կառուցվածքային փոփոխությունների դեմ:
- Մանկական մահացության ամենափոքր ցուցանիշ ունեցող երկիր: Ճշմարիտ է:
- Պետություն, որը ցանկացած այլ երկրից առավել շատ է խուսափել պատերազմներից: Ճշմարիտ է:
- Պետություն, որը համախառն ազգային արտադրանքի 1%-ը որպես օգնություն հատկացնում է համագործակցության զարգացմանը: Ճշմարիտ է, սակայն կան որոշ բնագավառներ, որ նախկինում ֆինանսավորվում էին այլ տեղից և ներառված չէին այդ 1%-ի մեջ, իսկ այսօր գտնվում են դրա շրջանակներում:
- Պետություն, որ զարգացած արդյունաբերական այլ երկրների համեմատ ընդունում է առավել մեծ թվով փախստականներ: Ճշմարիտ է:
- Պետություն, որ գլխավորում է արդյունաբերական զարգացած երկրների զարգացման ինդեքսավորման աղյուսակը: Ներկայումս Շվեդիան զբաղեցնում է 7-րդ հորիզոնականը:
- Հասարակություն, որում գենդերային հավասարությունը բարձր տոկոս է կազմում Շվեդիան գենդերային հավասարության զարգացման գործում 5-րդ հորիզոնականում է և ըստ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի՝ առաջատարներից է գենդերային հզորացման հարցում:
- Ռազմական բլոկներից դուրս ունի որոշիչ և անկախ ձայն, և ամենաշատն է ընդգրկված ՄԱԿ-ի տարատեսակ աշ-



խաստանքներում: Ճշմարիտ է, սակայն վիճակն առավել բարդ է այսօր:

Ես ծնվել եմ 1957 թվականին: Միայնակ մոր որդի եմ, մայրս աշխատում էր կես դրույքով: Բազմաթիվ երկրներում սա շատ դժվար սկիզբ կլիներ: Ես չունեի հայր, որ զորավիգ լիներ ընտանիքին: Մայրս օգնություն էր ստանում ավանսի տեսքով, որն առաջարկվել էր 1930-ական թվականներին՝ քաղաքականապես զարգացած կանանց միության կողմից:

Այս ծրագրի գաղափարը կայանում էր նրանում, որ պետությունն ինքը պետք է ստանձներ ֆինանսական պատասխանատվությունը, երբ չկա երեխայի հայրը, կամ ցանկություն չունի վճարելու նպաստ, որպեսզի երեխայի մայրը խուսափի նսեմացնող իրավիճակում հայտնվելուց: Իսկ երբ հայրը վերադառնում էր, ապա պարտավոր էր պետությանը վերադարձնել այդ գումարները:

Սա շվեդական մոդելի միայն մեկ, բայց ինձ համար շատ կարևոր մի օրինակ է: Դուք կարող եք նույնանման օրինակներ լսել ցանկացած շվեդից: Սա և մեկ պատճառ է, թե ինչու շվեդները հպարտությամբ են լցվում «բարեկեցիկ» բառը արտահայտելիս: Մեզ համար դա խոսում է դրական պատասխանատվության մասին, մինչդեռ, օրինակ, ԱՄՆ-ում շատերը բարեկեցությունը կապում են պատասխանատվության բացակայության հետ:

Պարոն Նախագահ,

Երբ 1933-ին իշխանության եկան սոցիալ- դեմոկրատները, նրանք կենտրոնացան ազգային նույնականության, միասնության և քաղաքացու հզորացման վրա: Ընդգծված էր կոլեկտիվիզ-մի շունչը, այլ ոչ անհատը՝ որպես այդ հասարակության մասնիկ: Շվեդական Սոցիալ- դեմոկրատական կուսակցության բարեփոխումների կողմնորոշումն ընդգծում էր համագործակցությունը, գործնականությունը և փոխզիջումը՝ առավել քան կոնֆլիկտը կապիտալիստական խավի հետ (1938 թ. Սալտսոջոբադենյան համաձայնություն), 1935 թ.-ին «Մարդկանց տուն» տերմինը ներկայացվեց շվեդական պառլամենտի ստորին պալատին՝ վարչապետ Պեր-Ալբին Հանսոնի կողմից:

Լավ տանն իշխում են հավասարությունը, քննարկելու ունակությունը, համագործակցությունը և օգտակարությունը: Սա բնորոշ է հզոր մարդկանց և քաղաքացիներին. այս կենսաձևը ենթադրում է բոլոր սոցիալական և տնտեսական խոչընդոտների փլուզում, փլուզումն այն կարգի, ինչը հասարակությունը բաժանում է առավել արտոնյալների և մոռացվածների, իշխողների և ենթակաների, հարուստների և աղքատների, ունևորների և չքավորների, թալանչիների և թալանվողների:

Փոփոխվել էր հարկային քաղաքականությունը, որպեսզի ֆինանսավորվեր բարեկեցության ռեֆորմը և նվազեցվեր դասակարգերի միջև սոցիալական անհավասարությունը: Ձևավորվում էր նոր տնտեսական քաղաքականություն, որն ապագայում հայտնի դարձավ «շվեդական միջին ուղի» անվանումով: Որպես արդյունք՝ մինչև 1990-ական թվականները գործազրկությունը մնաց 3 տոկոսի չափով և մի քանի տասնամյակ Շվեդիան, լինելով Եվրոպայի ամենաաղքատ երկրներից մեկը, վերափոխվեց և դարձավ աշխարհի ամենահարուստ երկրներից մեկը:

1940-50-ական թվականներին բարեկեցիկ պետությունը զարգացավ և կառավարությունն ընդլայնեց իր գործունեության շրջանակները: Քաղաքականության ոլորտում շվեդ սոցիալ-դեմոկրատները ձեռք բերեցին աներևակայելի կայուն դիրքեր: Երկխոսությունը և երկկողմ հարցանքը սոցիալական դասակարգերի միջև դարձան փոխներգործության մեթոդ: Աշխատանքային խաղաղությունը դարձավ շվեդական նույնականացման (իդենտիֆիկացիայի) մի մասը:

Որպես կառավարող կուսակցություն, մենք ընտրեցինք ներառման (inclusionary), քան արտահանման (exclusionary) քաղաքականությունը և կիսեցինք քաղաքականություն արարելու ուժը այլ մասնակիցների հետ: Կառավարության և շահագրգիռ կազմակերպությունների միջև երկխոսությունը դարձավ օրինական և շատ խնդիրներ իրենց լուծումը գտան բավական պրագմատիկ և զուսպ կերպով: Կազմակերպությունները հրապարակայնորեն պայքարում էին ռացիոնալ կերպով՝ ներկայացնելով բնագավառի մասնագետների կարծիքները և գնահատելով քաղաքական առաջարկությունները:

Բազմաթիվ խնդիրներ, որոնք նախկինում բարձրացվել էին կոլեկտիվ կազմակերպությունների կողմից, ընդունվել էին կառավարության կողմից և պատրաստակամությամբ կամ



*հակառակը՝ մեկուսացվել «Բարեկեցիկ պետություն» ծրագրի կողմից: Դրանց մի մասը կորցրել էր կապը սոցիալական իրականության հետ, ինչն էլ հանգեցրեց անդամների քանակի նվազման:*

*Այս երևույթը 1960-ական թվականների միջազգային ազդեցության հետ իր ներգործությունն ունեցավ 1960-70-ականներին: Ի հայտ եկան նոր քաղաքական դեմքեր, ովքեր մերժեցին շվեդական մոդելի հիմքերը, և սա առաջացրեց կառավարության անկայունություն: Պոստնյութական արժեքները դարձան առավել կարևոր: Նոր ձախ (նաև աջ) ուժերը դիմադրում էին սոցիալ-դեմոկրատական գերիշխանությանը: Համերաշխությունը երրորդ աշխարհի երկրների հետ դարձավ առաջնային: Կանայք միավորվեցին քաղաքականության ոլորտում ճանաչում ձեռք բերելու համար:*

*Հրապարակային սեկտորը շարունակում էր զարգանալ հատկապես առողջապահության, մանկական առողջապահության և կրթության ոլորտներում, ինչը բավարարում էր մարդկանց առաջնային կարիքները և կանանց հնարավորություն էր ընձեռում ընդգրկվելու աշխատանքային շուկայում: Դա նաև օգնեց, որ գործազրկության մակարդակը պահպանվի 2 %-ի սահմաններում, մինչդեռ Արևմտյան Եվրոպայի այլ երկրներում այն հասել էր 7-10 %-ի:*

*Անցած 20 տարիները փորձությունների ենթարկեցին շվեդական քաղաքացիական հասարակությունը, բազմակարծությունը: Պառլամենտում հայտնվեցին նոր քաղաքական կուսակցություններ: Կոնֆլիկտների նոր ընթացքը նսեմացնում էր ձախ-աջակողմյան քաղաքական խնդիրները: Կազմավորված բիզնեսները հետզհետե հրաժարվում էին կորպորատիվ փոխանակման մեթոդից և քաղաքականության մեջ կորպորատիվիզմի մեթոդը դարձավ առավել քիչ ցանկալի: Աշխատանքային միությունները դժվարանում էին վերլուծել նոր մարտահրավերները, ինչպես նաև գործունեության և օբյեկտների վերափոխումը:*



*Գլոբալիզացված տնտեսության պայմաններում առավել դժվար է ֆինանսավորել «Բարեկեցիկ պետություն» ծրագիրը: 1970 թ. հասարակական ծախսերը 43 %-ից աճեցին՝ 1982 թ. կազմելով ազգային համախառն արտադրանքի 67 %-ը: Պետական ծախսերի աճը չէր կարող հովանավորվել տնտեսական աճի կողմից: Այսօր հասարակական ծախսերը կազմում են ազգային համախառն արտադրանքի կեսը:*

*1994 թ. նոյեմբերին Շվեդիան հանրաքվեի միջոցով որոշեց դառնալ Եվրամիության անդամ պետություն:*

*Պարոն Նախագահ,*

*Որպես իմ կուսակցության կրոնական բաժնի ղեկավար, ես ունեի իմ պատճառները՝ խորհելու շվեդական մոդելի հոգևոր և բարոյական արմատների մասին:*

*Շվեդիան հաճախ ներկայացվում է աշխարհի հետքրիստոնեական հասարակությունում որպես ամենաաշխարհիկ երկրներից մեկը: Շվեդական հասարակությունում եկեղեցու և կրոնի դերը մեկուսացվել է: Շատ քչերն են հաճախում եկեղեցի: Քչերին է հուզում, թե ինչ են քարոզում եկեղեցու առաջնորդները: Շվեդական հասարակական բանավեճերում նրանք ունեն սահմանափակ նշանակություն, թեև վերջին տարիներին նրանց դերը մի փոքր աճել է:*

*Արդյոք սա նշանակո՞ւմ է, որ շվեդներն առավել քիչ քրիստոնյա են կամ առավել քիչ հավատացյալ, քան այլ երկրների բնակիչները, ասենք՝ ԱՄՆ-ում: Իմ պատասխանը «ոչ» է:*

*Շվեդիայում աշխարհիկացման հիմնական պատճառը կայանում է նրանում, որ շվեդական հասարակությունը մեր ժամանակներում կարողացել է լուծել քրիստոնեության ամենահիմնական խնդիրը՝ հոգ տանել կարիքավորների մասին և լսելի դարձնել նրանց ձայնը՝ առանց կազմավորված եկեղեցու օգնության:*

*Օրինակ, ԱՄՆ-ում շատ կարևոր են եկեղեցական ժողովները, որտեղ լուծում ստանան մի շարք գործնական խնդիրներ, որոնք Շվեդիայում առաջ են քաշվում հասարակության կողմից՝ սոցիալական օժանդակություն, մանկական խնամք, կանանց «աշխատանքային» համայնք, մեծահասակների խնամք և այլն:*

*Եկեղեցին և կրոնական կազմակերպությունները անհրաժեշտ են մարդկանց առօրյա խնդիրների լուծման համար, ինչը հասարակական կյանքում, բնականաբար, կարևոր տեղ է տալիս դրանց: Սակայն սա գործում է միայն գործնական մակարդակում: Առավել խորը մակարդակում այն շատ ավելի բարդ է:*



Վաղամեռիկ Կրիստել Ստենդալը, որ Հարվարդի համալսարանի դեկանն էր և Ստոկհոլմի արքեպիսկոպոսը, Շվեդիան նկարագրել էր իբրև «որոշ առումով աշխարհում ամենաքրիստոնյա երկիր, որ կարող եմ պատկերացնել», քանի որ ազգի բարեկեցության ու մարդասիրության խնդիրները իրենց լուծումն են ստանում և այս խնդիրները հարյուրամյակներ շարունակ մտահոգել են քրիստոնյաներին:

Շվեդական մոդելը հաճախ նկարագրվում է իբրև քաղաքական դպրոցի արդյունք, որ եղել է վերջին 100-150 տարիներին: Այնուամենայնիվ, եթե դիտարկենք բարոյագիտության արմատների տեսանկյունից, ապա շատ ավելի հետ պիտի նայենք:

Մեր կողմից ինդուստրացումը և ուրբանիզացիան (քաղաքակենտրոնացումը) Շվեդիայում սկսվեց շատ ավելի ուշ: Սա հավանաբար օգնեց շվեդական գյուղական ոգու պահպանմանը, երբ ժամանակակից ծրագրեր էին ստեղծվում: Գյուղական ոգին այստեղ այլ է, քան Եվրոպայի այլ երկրներում: Շվեդիան երբեք չէր զարգացնում միջնադարյան հասարակարգը, որը նշվեց ճորտատիրությամբ: Շվեդիայի ազգաբնակչության մեծ մասը կազմում էին անկախ ֆերմերները, ովքեր ուժեղ համայնքային հարաբերությունների համար նախապայմաններ ստեղծեցին:

Շվեդ գրող Վիլհելմ Մոբերգը հին շվեդական գյուղերի ոգին նկարագրում էր նոստալգիկ կերպով:

Գյուղական համայնքի ամենադրական կողմն այն էր, որ գործում էր փոխօգնության չգրված օրենք: Այդ ընկերությունն առանց որևէ արատների էր: Բոլորն անխտիր օգնում էին միմյանց այնպես, ասես դա միանգամայն բնական էր: Նա, ով ուներ օգնության կարիք, անմիջապես այն ստանում էր: «Օգնիր ինձ և վաղը ես կօգնեմ քեզ»-ը օրենք էր: «Հարևանները եղբայրներ են» արտահայտությունը հին շվեդական ասացվածք է: Երբ ինչ-ինչ պատճառներով դաշտային աշխատանքների ժամանակ գյուղացին իրեն վատ էր զգում կամ անգործունակ էր, հարևաններն իրենք էին անում այդ գործը՝ առանց փոխհատուցում ակնկալելու:

Դուք կարող եք գտնել նույն բարոյական տրամաբանությունը Սոցիալ-դեմոկրատական կուսակցության առաջնորդների բազմաթիվ ելույթներում, որոնցում նկարագրել են «Մարդկանց տունը» կամ շվեդական մոդելը: Ուլոֆ Պալմեի այս մեջբերումը կարող է օրինակ ծառայել:

Ես կարծում եմ, որ միակողմանի անհատական որոշումները անօգուտ են, քանի որ մեր ինդուստրիալիզացված հասարակությունում ոչ ոք չի կարող մեկուսանալ և իր համար ապահով կյանք ստեղծել: Մենք բոլորս փոխկապված ենք մեր նյութականի, մեր ապագայի ապահովության, մեր մշակութային փորձի և մեր անձնական աճի շրջանակներում:

Վերադառնալով ժամանակակից Շվեդիայի պատմությանը, տեսնում ենք բացարձակապես այլ հասարակություն: Դա մեկ հավատք ունեցող հասարակություն էր, որում բոլորը Լյութերական անսասան դիրք ունեցող եկեղեցու հավատացյալներ էին:

1850-1950 թվականներին Շվեդիա ներգաղթ չկար, կար արտագաղթ և մեծ մասամբ դեպի ԱՄՆ: Ազգային փոքրամասնությունները՝ գնչուներ, հրեաներ, ֆիններ և այլ խմբեր, ճանաչված չէին: Սա մի ազգ էր, որ անսովոր միատարր էր լեզվի, մշակույթի, պատկանելության տեսանկյունից:

Կարող եք գտնել աստվածաբանների, ովքեր շվեդական մոդելում ներկայացնում են որոշ բարոյական արմատներ Լյութերի ուսմունքից, ասենք, օրինակ, աշխատանքային էթիկա, անհատական պատասխանատվություն կամ պետության հանդեպ հավատարմություն: Թեպետ ինքս լյութերական եմ, բայց չեմ կարծում, թե դա արտասովոր բան է: Հոգևոր այն արմատները, որ փնտրում ենք, կարող ենք նաև գտնել հրեաների, մուսուլմանների, կաթոլիկների և այլոց ավանդույթներում:

Այնուամենայնիվ, կարծում եմ, որ շվեդների միատարրությունը առավել հեշտացրեց շվեդական մոդելի ստեղծումը: Դա օգնեց շվեդներին հարգել իրենց որպես «մեկ մարդ»՝ խնդիր ունենալով ստեղծել ընդհանուր ազգային ծրագիր: Երբ նրանք սկըսում էին կերտել իրենց ժամանակակից ծրագիրը, կարիք չունեին որևէ արտաքին սպառնալիքի կամ թշնամու, որպեսզի իրենց միավորված զգային:

Սա չի նշանակում, որ եթե շվեդական մոդելը ստեղծվել է միատարր պայմաններում, չի կարող աշխատել բազմատարրության դեպքում: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, ներգաղթի պատճառով, Շվեդիան արագորեն փոխվեց: Այդ նորեկները մոդելին հարմարվելու



Պեր Ալբին Հանսոն

տեսանկյունից որևէ խնդիր չունեցան:

Այսօր շվեդական մոդելը կորցնում է իր կայունությունը մասամբ այն պատճառով, որ մեր վերահսկողությունից դուրս կան որոշ ուժեր (մասամբ էլ նոր քաղաքական մթնոլորտի պատճառով), որ հավակնում են սոցիալ-դեմոկրատական արժեքների հիմնարար փոփոխությունների:

Պարոն Նախագահ,

Շվեդական մոդելի ստեղծումից ի վեր կան երեք գլոբալ փոփոխություններ, որոնք իրենց ազդեցությունն են ունենում այսօրվա քաղաքական և հասարակական հարցերում: Դրանք են՝

**1.** գլոբալիզացիան,

**2.** գծային տնտեսական աճի սահմանափակումները,

**3.** հետինդուստրիալ հասարակության արժեքների փոփոխությունը:

Գլոբալիզացիան շատերին ապագայի նոր հույս տվեց, բայց միևնույն ժամանակ այդ հույսը մարեց մյուսների մեջ: Անցած 30 տարիներին բարձրացավ համաշխարհային փոխկապվածության աստիճանը տնտեսական, մշակութային, տեխնոլոգիական և այլ արժեքների ոլորտներում: Դա քայքայեց քաղաքական և դեմոկրատական իշխանությունը, որի գործիքները մնացին ազգային:

Գլոբալիզացիայի մարտահրավերին դիմակայելու համար անհրաժեշտ է հզորացնել անհատական գործոնը, որպեսզի առավել լավ կառավարվի փոփոխությունների աճող ճնշումը, ինչպես նաև ուժեղացվի միջազգային համագործակցությունը: Շվեդիայի համար միջազգային համերաշխությունը գլոբալիզացիայի հարցում այլևս սահմանափակված չէ միայն նրանով, թե ինչ կարող են անել մյուսների համար. հարկավոր է զարգացնել սեփական հասարակությունը: Գլոբալիզացված աշխարհում ոչ մի երկիր այնքան հարուստ կամ ուժեղ չէ, որպեսզի միայնակ գոյատևի:

Ինչ վերաբերում է երկրորդ մտայնությանը, ապա Շվեդիայի տնտեսությունը վերջին հարյուրամյակում տարեկան կտրվածքով 2-3 %-ի աճ է գրանցել: Այս աճը հնարավոր դարձրեց իրականացնել շատ կարևոր առաջնահերթություններ: Հետևաբար տնտեսական աճը ինքնին կարևոր գործիք է մարդկային արժանապատվության արտահայտման համար:

Սակայն այդ աճն անհաջող էր: Միջին շվեդը, ինչպես և արևմտյան այլ երկրներում, կենսունակությունն ապահովելու համար օրական օգտագործում է 50 կգ հումք: Պոտենցիալ, գլոբալ մակարդակում բոլորին 50 կգ հումք ապահովելու համար, կպահանջվի մոտ 10 այսպիսի մոլորակ, որպեսզի լինի բավարար հումք և տարածք թափոնների համար:

Տարիներ շարունակ մենք չէինք մտահոգվում, բայց վերջին ժամանակներս կլիմայական փոփոխությունները հիշեցրին, որ մենք 10 մոլորակ չունենք, այլ միայն այս մեկը: Ուստի պետք է հոգ տանենք Մայր երկրի մասին, այլապես հետո անհնար կլինի փրկությունը:

Շվեդի համար միջազգային համերաշխությունը, բացի նրանից, որ տնտեսական աճն այլևս սահմանափակված է, նաև նշանակում է, որ այլևս չկա որևէ այլ լուծում, որ կարող է առաջարկվել ուրիշներին՝ իրենց խնդիրները լուծելու համար: Մենք բոլորս արդեն այդ պրոբլեմի մեջ ենք և պետք է այն լուծենք միասին: Իսկ դա նշանակում է, որ մենք պետք է համերաշխ լինենք ոչ միայն սահմաններից, այլև ժամանակից դուրս և նաև ապագայում:

Եվ վերջապես, փոփոխության արժեքը սոցիալ և քաղաքական փոփոխությունների մի մասն է: Երբ 100 տարի առաջ Շվեդիան գյուղատնտեսական հասարակությունից վերափոխվեց արդյունաբերականի, ավանդական արժեքները, ինչպիսիք են ընտանիքը, կրոնը, հիերարխիան և սովորույթները, փոխարինվեցին ռացիոնալությամբ և օրինականությամբ, աշխարհիկությամբ, մատերիալիզմով և հասարակությունում կոլեկտիվիզմի ուժեղ զգացումով:

Այսօր մենք արագորեն անցում ենք կատարում արդյունաբերական հասարակությունից դեպի հետարդյունաբերական գիտելիքի հիմքի վրա ձևավորված հասարակություն: Հետագայում մարդիկ սկսելու են այլ կերպ մտածել: Պոստժամանակակից արժեքներն առավել քիչ նյութական են: Դրանք առավել փնտրում են հոգևորը, քան աշխարհիկը: Դրանք հակահիերարխիկ են և ավելի ազատ կողմնորոշում ունեն, քան կոլեկտիվ: Արդարությունն ավելի բարոյական հարց է, քան իրավական:

Այս փոփոխություններն առավել տեսանելի են երիտա-

*սարդների, քան տարեցների շրջանում, ինչպես նաև քաղաքաբնակների, քան գյուղացու, կանանց, քան տղամարդկանց, կրթվածների, քան բարձրագույն կրթություն չունեցողների: Հայաստանը տարբերվում է Շվեդիայից, բայց ես գիտեմ, որ Դուք էլ եք տեսնում նման միտում հատկապես երիտասարդ մասնագետների շրջանում:*

*Որպես արդյունք՝ Շվեդիայում ականատես ենք քաղաքային և գյուղական համայնքների միջև նոր քաղաքական պառակտման. քաղաքաբնակները, հատկապես Ստոկհոլմում և համալսարանական քաղաքներում, մտածում և գործում են այլ կերպ:*

*Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունն ակնհայտ պատճառներով իրեն մեղավոր է զգում արժեքային փոփոխությունների համար: Իմ կուսակցության անդամներն արտացոլում են արդյունաբերական հասարակությունը և քաղաքական տեսականը, ինչպես նաև պրակտիկ լուծումները, որ մենք ձևակերպել ենք արդյունաբերական հասարակության համար, և դրանք այնքան հաջողված էին, որ շատ ցավալի է այն հարցականի տակ դնելը:*

*Բայց ինքնին արժեքային փոփոխությունները հասարակությանը չէին բերելու քաղաքական իրավունքներ: Աջերի և ձախերի տարբերությունները ոչ թե պրակտիկ լուծումներում է, այլ հավասարության, ազատության և համերաշխության փնտրտուքների մեջ: Եվ այս արժեքները հնացած չեն:*

*Ընդհակառակը, պոստ-ժամանակակից արժեքները գենդերապես ավելի հավասար են, բնապահպանության հարցում ավելի հետաքրքրված, ավելի անկախ, ավելի տոլերանտ և միջազգայնորեն համեմատելի են արդյունաբերական հասարակության արժեքների հետ:*

*Բայց պոստ-ժամանակակից արժեքները կարող են նաև նշանակել, որ պետք է համերաշխությունը արտահայտել այլ կերպ:*

*Պարոն Նախագահ,*

*Համերաշխությանը փայլուն ապագա է սպասվում: Ես հավատում եմ, որ այն աշխատանքը, որ մենք արել ենք միասին, երբ համերաշխության հիմնական նպատակն էր անկախացումը և մեծամասնության կողմից կառավարելի դառնալը, ինչը հանդիսացավ գործիք հուսալքված մեծամասնության համար, որպեսզի նրանց մեջ կրկին արթնանա հույսը, արժանապատվությունը և ավելի բարեկեցիկ ապրելու հնարավորությունը, մեզ շատ բան սովորեցրեց: Այնուամենայնիվ, պետք է առաջ շարժվել:*

*Այսօր աշխարհի գրեթե բոլոր երկրները բազմամշակութային են և շարունակում են ավելի ու ավելի այդպիսին դառնալ: Թեև հիմնական օրենքներն անհրաժեշտ են, որպեսզի փոքրամասնությունը ի վերջո չճնշի մեծամասնությանը, սակայն այդ օրենքները չեն երաշխավորում հակառակ գործընթացը: Դեմոկրատիա հասկացությունը շատ բարդ և համալիր հասկացություն է: Մարդու իրավունքների և ազգային փոքրամասնությունների իրավունքների այդ փոխազդեցությունը ճկուն չէ և դեմոկրատիա հասկացությունը հարկավոր է մշտապես կատարելագործել, նորացնել և վերանայել:*

*Որպես սոցիալիստներ, մենք գիտենք, որ շուկան շատ լավ և շնորհակալ ծառա է, բայց միևնույն ժամանակ վտանգավոր վարպետ: Մենք դրա լուծումը գտանք՝ շուկան կառավարելու համար ստեղծելով ազգային մարմին: Այնուամենայնիվ, գլոբալ տնտեսության պայմաններում տնտեսության և քաղաքականության միջև ի հայտ է գալիս բավական լուրջ անհամաչափություն:*

*Ստեղծված անհամաչափությունը սոցիալ-դեմոկրատական մեթոդները դարձրեց ոչ բավարար և մի մասը նույնիսկ անօգուտ: Ֆինանսական ճգնաժամը ցույց տվեց, որ ֆինանսական շուկայի կանոնակարգման համար անհրաժեշտ է բարելավել միջազգային համագործակցությունը: Նախորդ առաջարկությունները, ինչպիսիք էին ֆինանսական գործողությունների համար գլոբալ հարկերը կամ Տնտեսական անվտանգության խորհուրդը, այլևս սոցիալիստական երազանք չէ, այլ ընդունելի գաղափար է նաև բանկային համակարգի համար:*

*Գլոբալիզացիայում համերաշխությունը, ինչին 20-րդ դարում հասել ենք մոդեռնիզմի, արդյունաբերության և ազգայնականության շնորհիվ, ավաղ, բավարար չէ:*





* Համերաշխությունն ապագայում լինելու է շատ ավելի անհամբեր և հետաքրքրասեր: Այն ղեկավարվելու է սեփական հետաքրքրությամբ, ինչը փաստացի մեկնաբանվելու է որպես փոխադարձ շահ մարդկության և Երկիր մոլորակի ապագայի հանդեպ:

* Համերաշխությունն ապագայում իր մեջ ընդգրկելու է նոր, առավել դժվար գործոններ, նույնիսկ բիզնեսն ու հասարակությունը: Մեծանալու են սպառողների իրավունքները և այն բիզնեսները, որոնք զբաղվում են սոցիալական և շրջապատող միջավայրի խնդիրներով, ամենահաջողակն են լինելու:

* Համերաշխությունն ապագայում լինելու է շատ ավելի տարաձև, որոշ դեպքերում անհնարին է լինելու նրան կառավարելը: Այն լինելու է շատ ավելի հեռատես, այն աստիճանի, որ հոգ է տանելու ապագա սերունդների առջև հետագայում ծառացող խնդիրների մասին:

* Համերաշխությունն ապագայում ճանաչելու է պատասխանատվությունը և անհատի նկատմամբ ազատության ճանաչումը: Կրթական, մշակութային և հոգևոր աճ. սրանք այն արժեքներն են, որ չեն կարող անհետանալ ցանկացած կտրուկ փոփոխությունների ժամանակ, բայց մյուս կողմից՝ կարող են օգնել անհատին համակերպվելու այդ փոփոխություններին, և այս հանգամանքը շատ ավելի կարևոր է:

* Համերաշխությունն ապագայում դժվարություններ է ստեղծելու հատկապես նրանց համար, ովքեր կցանկանան սահմանափակել այդ համերաշխությունը ազգային բնագավառում: Համերաշխությունն ապագայում պետք է ձգտի ազգային տեսանկյունից չկենտրոնանալ հարցերի վրա, այլ դիտել այն գլոբալ տեսանկյունից և ստեղծել նոր մեթոդներ առևտրի, սպառման, արտադրության և թափոնների մշակման բնագավառներում:

* Համերաշխությունն ապագայում պետք է հստակորեն գիտակցի դեմոկրատիայի, մարդու իրավունքների և միջազգային իրավունքի կարևորությունը: Կա կառավարման հիմնական 3 եղանակ: Առաջին՝ թույլ տալ, որ որոշումը կայացնի ամենաուժեղը, երկրորդ՝ ամենաթողությունը և երրորդ՝ դեմոկրատիան երկրների սահմաններում և միջազգային իրավունքը՝ որպես հիմք նրանց միջև: Եվ միջազ-

գային իրավունքը, և՛ դեմոկրատիան ունեն իրենց թերությունները, բայց սա միակ քաղաքավարի մեթոդն է, որով կարելի է լուծելի դարձնել միջազգային և ազգային հարաբերությունները:

* Համերաշխությունն ապագայում իր մեջ է ներառելու քրիստոնյաների, մուսուլմանների և հրեաների նոր սերունդներ, որոնք ունեն իրենց դարերից եկող ավանդույթները և որոնք փնտրելու են առավել մարդասիրություն և լրջություն: Մշակույթի և կրոնի մասին իրական երկխոսությունը միավորում է տարբեր քաղաքակրթություններ, այլ ոչ թե դիմակայություն:

Մարդկային արժանապատվությունը պետք է լինի այն սկզբունքը, որով պետք է առաջնորդվենք և որը պետք է օգնի մեզ կյանքը տեսնելու էթնիկ, մշակութային և կրոնական սահմաններից այն կողմ: Դանիացի քահանա Նիկոլայ Գրունդվիգը ասել է «Առաջին հերթին ես մարդ եմ, հետո նոր քրիստոնյա, մուսուլման կամ հրեա»: Եվրոպայի պատմության դաժանությունը մեզ սովորեցրել է, որ ճշմարիտ չէ կրոնական, էթնիկ և ռասայական ուղին ընտրելը: Երբ մեկ ազգը հայտարարում է այլ ազգերի նկատմամբ իր առավելության մասին, դա բերում է անվտանգության բացակայության, ինչն ի վերջո կհանգեցնի էթնիկ մաքրումների և ցեղասպանության:

Մենք պետք է զարգացնենք այնպիսի ազգային կոնցեպցիա, որը հիմնականում նույնքան ճկուն կլինի, որքան միգրացիայի փաթեթը: Այս ճանապարհը տանում է ազգայնականության, որն առաջարկում է հավասար իրավունքներ փոքրամասնություններին և մեծամասնություններին, մուսուլմաններին, քրիստոնյաներին ու հրեաներին: Այս ուղին անցնում է ակտիվ արտաքին քաղաքականությամբ, որը հիմնված է մարդու իրավունքների և միջազգային իրավունքի վրա: Հայերը սրան շատ ավելի լավ են ծանոթ, քան ցանկացած այլ ազգ:

Երկու շաբաթ առաջ Շվեդիայի պառլամենտի որոշումը համերաշխության արտահայտումն է այս ուղիների հանդեպ: Սա հայտանիշ է, որ Շվեդիայի և Հայաստանի ապագան կերտվելու է միասին, որ դուք միայնակ չեք արդարություն պահանջելու ձեր գործում և երբ խիզախ քայլեր եք ձեռնարկում խաղաղություն և ձեր հարևանների հետ հարաբերությունները կարգավորելու հարցում: Սա հայտանիշ է, որ մենք կառուցում ենք մեր գլոբալիզացված ապագան՝ միասին:

Պարոն Նախագահ,

Մենք ունենք պատճառ՝ լինելու լավատես սոցիալիզմի ապագայի համար: Բայց ոչ մակերեսայնորեն: Քաղաքական այն մարտահրավերները, որոնց այսօր բախվում ենք, ինքն իրեն չեն լուծվի: Որպես սոցիալիստներ մենք կարող ենք հպարտ և վստահ լինել մեր արժեքների, իդեալների և քաղաքական նպատակների հանդեպ: Դրանք ապացուցել են իրենց ճշմարտացիությունը և լայն տարածում են ստանում աջակիցների օրեցօր աճող բանակի կողմից: Միևնույն ժամանակ, հավանաբար, հարկ է վերանայել մեր որոշ մեթոդներ և մոտեցումներ, որպեսզի առավել լավ իրագործվեն այդ արժեքները:

Ուստի մեր լավատեսությունը պետք է խորանա և օգնի մեր առաջխաղացմանը

65 տարի առաջ մարտի 25-ին գերմանացի աստվածաբան Դիտրիխ Բոնհեֆերը գտնվում էր բանտում, ուր նրան ուղարկել էին նացիստները, և սպասում էր իր գնդակահարմանը, որը իրագործվելու էր 2 շաբաթ հետո: Նա ձերբակալվել էր այն բանի համար, որ մասնակցել էր Ադոլֆ Հիտլերի դեմ դավադրության և մահափորձի կազմակերպմանը:

Լավատեսության էությունը կայանում է նրանում, որ այն կապված չէ իրականության հետ և հանդիսանում է ներշնչանքի, կենսունակության և հույսի աղբյուր, երբ մյուս բոլոր գործոնները այլևս բացակայում են: Այն թույլ է տալիս մարդուն լինել հպարտ և հավակնել լուսավոր ապագայի՝ առաջին հերթին իր համար

Ընկերներ, եղեք լավատես:

Շնորհակալություն ուշադրության համար:



# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Արարատ ՀԱԿՈԲՅԱՆ
ՀՊՏՀ պատմության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

16-17-րդ դարերի պարսկա-թուրքական տևական պատերազմների հետևանքով Հայաստանի մեծագույն մասը՝ Արևմտյան Հայաստանը, նվաճվեց թուրքերի կողմից և կցվեց Օսմանյան կայսրությանը: Հետագա դարերում, քանի դեռ արևմտահայությունը բացահայտ ազատագրական- քաղաքական պայքարի չէր դիմում, իբրև կայսրության հպատակ ճնշվելով ու հարստահարվելով, այսպես թե այնպես, համակերպվում էր իրավիճակին: Անգամ սուլթան Մահմուդ Երկրորդը հայերին բնութագրել է որպես «հավատարիմ ազգ»[1]: Սակայն 19-րդ դարի երկրորդ կեսին համաշխարհային զարգացումների օրինաչափ ընթացքով զարթոնք ապրեց նաև հայ ազգային ինքնագիտակցությունը, ձևավորվեց հայ ազատագրական գաղափարախոսությունը, միջազգային ասպարեզ նետվեց Հայկական հարցը և բալկանյան ժողովուրդների օրինակով վերելք ապրեց հայ ազատագրական պայքարը: Սուլթանական կառավարությունը հանգեց այն գաղափարին, որ Հայկական հարցը պետք է լուծել հայերին բնաջնջելով՝ առաջնորդվելով «չկա հայ, չկա նաև հայկական հարց» կարգախոսով: Այդ գաղափարը դարձավ պետական քաղաքականություն, որը սկսեց Կարմիր սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդը և ավարտին հասցրին երիտթուրքերը, ապա նաև քեմալականները: Արդյունքում՝ թուրք կառավարողների քաղաքականության հետևանքով իր հայրենիքից տեղահան արվեց ու հիմնականում բնաջնջվեց արևմտահայությունը: Արևմտյան Հայաստանը դատարկվեց իր բնիկ ազգաբնակչությունից՝ հայերից, իսկ կենդանի մնացած նրա բեկորները համալրեցին գաղթաշխարհը՝ ձևավորելով Սփյուռք: Այսպես առաջացավ Հայոց ցեղասպանության կամ Հայ դատի ու պահանջատիրության խնդիրը, որը շուրջ մեկ դար է, ինչ համայն հայությանը հուզող, թերևս, ամենագլխավոր հիմնահարցն է:



[1] Дадрян В., История армянского геноцида, Е., 2007, с.246.

* * *

Հայոց ցեղասպանության թուրքական ժխտողականության առարկություն-«փաստարկները» հիմնականում հետևյալն են.

1. Մինչ «հայկական իրադարձությունները» միջազգային իրավունքում չի եղել ցեղասպանություն՝ «գենոցիդ» հասկացությունը՝ իբրև հանցագործության տարատեսակ:

2. Նման հանցագործության համար պատասխանատվությունը սահմանվել է 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանություն հանցագործության կանխման և պատժելիության մասին» կոնվենցիայով, որը ուժի մեջ է մտել 1961 թ.:

3. Օրենքը հետադարձ ուժ չունի, ուստի այն չի կարող տարածվել 1915 թ. դեպքերի վրա, հետևապես և չունի իրավական հիմք:

Բերվածին ի պատասխան հայկական կողմի և միջազգային հանրության իրավական փաստարկներն հետևյալն են.

1. Անհերքելի փաստն այն է, որ իրականացվել է մի ամբողջ ժողովրդի կանխամտածված ոչնչացում կամ Ռ. Լեմկինի տերմինով ասած՝ ցեղասպանություն (գենոցիդ):

2. Մինչ 1915 թվականը միջազգային իրավունքում գործել են 1899 թ. և 1907 թ. Հաագայի հիմնարար կոնվենցիաները «Մարդկայնության օրենքների» վերաբերյալ կամ Մարտենսի հռչակագիրը:

Մարտենսի՝ «Ցամաքային պատերազմի օրենքների և սովորույթների մասին» 1907 թ. հոկտեմբերի Հաագայի 4-րդ կոնվենցիայի նախաբանում ասվում է. «Բարձր պայմանավորվող կողմերը տեղին են համարում հավաստել, որ իրենց կողմից չնախատեսված դեպքերում բնակչությունը և կռվողները ենթակա են պաշտպանության միջազգային իրավունքի սկզբունքներով»[2]:

Այս առնչությամբ թուրքերը փորձում են նեղացնել միջազգային իրավունքի այդ հեղինակավոր նորմերը՝ ասելով, որ դրանք վերաբերում են միայն պատերազմող պետություններին: Մարդկայնության մասին հիմնարար սկզբունքը Եվրոպայի քաղաքակիրթ պետությունների համար աստվածային սկիզբ է համարում մարդու բնական իրավունքը, որ «մարդը և նրա կողմից ստեղծված պետությունը պետք է լինեն մարդկային և մարդկության դեմ չգործեն հանցանք (ոճիր)՝ ոչ միայն պատերազմի, այլև առավել ևս խաղաղ ժամանակ, և ոչ միայն հակառակորդի, այլև առավել ևս սեփական հպատակների (ընդգծումը մերն է - Ա. Հ.) նկատմամբ»: Եթե «Մարդկայնության օրենքների» մասին




Ռ. Լեմկին

Հաագայի հռչակագիրը համադրում ենք Օսմանյան Թուրքիայում 1915 թ. կատարվածի հետ, ապա տեղի ունեցածը ոչ այլ ինչ էր, եթե ոչ Հաագայի կոնվենցիայի կամ Մարտենսի հռչակագրի համաձայն՝ հանցանք սեփական հպատակների նկատմամբ[3]:

Մարտենսի հռչակագիրը պահպանում է իր ուժը նման որակումների առկայության դեպքում՝ անկախ այն բանից, թե տվյալ պետությունում (տվյալ դեպքում՝ Օսմանյան Թուրքիայում) գործել է իրավունքի պայմանագրային ձևը (նորմը), թե սովորութայինը: Մարտենսի հռչակագիրը տարածվում է միջազգային հարաբերությունների բոլոր ոլորտների վրա: Այնպես որ, կան բավարար միջազգային իրավական հիմքեր երիտթուրք կառավարողների իրականացրած ոճիրը դատապարտելու և քրեական պատասխանատվության ենթարկելու դրա կազմակերպող և իրականացնող կառավարությանը հենց այն ժամանակվա միջազգային օրենքներով: Փաստենք նաև, որ «Մարդկայնության օրենքները» գործադրելու նպատակով 1920 թ. Ազգերի լիգայում հիմնվեց միջազգային արդարադատության մշտական պալատ[4]:

Մարտենսի հռչակագրի գործադրման արտահայտություն կարելի է համարել այն դատական գործընթացը, որը թարմ հետքերով անցկացվեց Կ. Պոլսում 1919 թ. առաջին կեսին Սուլթան Մեհմեդ VI-ի հրամանով: Թուրքիայի ռազմական արտակարգ տրիբունալը (ատյանը), նախագահությամբ գեներալ-լեյտենանտ Մուս-

---

[2] Геноцид армян /документы и комментарий/, сост. и ред. Ю. Барсегов, т. 1, М. , 2002, с. 17.

[3] Геноцид армян, т. 2, ч. 2, М., 2005, с. 88.

[4] Геноцид армян, сост. и ред. Ю. Барсегов, т. 2,ч.2, М. , 2005, с. 90.

տաֆա Նազըմ փաշայի, քրեական գործ հարուցեց իթթիհատական կուսակցության ու կառավարության ղեկավարների նկատմամբ՝ երկիրը պատերազմի մեջ ներքաշելու և կոտորածներ, եղեռն (ցեղասպանություն) կազմակերպելու մեղադրանքներով: Տեղի ունեցածը ոչ թե քաղաքական դատավարություն էր իրար հակառակորդ (Իթիլյաֆ և Իթթիհատ) կուսակցությունների միջև, ինչպես փորձում է ներկայացնել թուրք պաշտոնական պատմագրությունը, այլ քրեական՝ պատերազմական հանցագործ և եղեռն իրագործած կուսակցության և կառավարության ղեկավար անդամների նկատմամբ:

Հայերի հանդեպ եղեռնագործության համար թուրք կառավարողներին պատասխանատվության կանչելու հարցը առաջինը բարձրացվել է Անտանտի (Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան) կառավարությունների 1915 թ. մայիսի 24-ի հայտնի հռչակագրով: Նրանում, ի լուր աշխարհի, հայտարարվում էր Հայաստանում սկսված հայերի «նոր» կոտորածների մասին, որոնք հանցագործություն են «մարդկության և քաղաքակրթության դեմ», և դրանցում օսմանյան կառավարության «բոլոր անդամների» անձնական պատասխանատվություն կրելու մասին[5]:

Հավելենք նաև, որ աշխարհամարտի ավարտից հետո, 1919 թ. հունվարին, Փարիզում բացված խաղաղության միջազգային համաժողովում ստեղծված պատասխանատվության և սանկցիաների հարցով «Տասնիհնգի հանձնաժողովը» Հաագայի 1907 թ. համաժողովում ընդունված կոնվենցիայի ոգով դիտարկեց պատերազմի հանցագործ և սեփական երկրի քաղաքացիների նկատմամբ հանցագործություն գործած Օսմանյան պետության ղեկավար անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը և հավանության արժանացրեց[6]:

Ուշագրավ է, որ երիտթուրքերի կուսակցության ու կառավարության կատարած հանցագործությունների, մասնավորապես՝ Թուրքիայի քրիստոնյա ազգաբնակչության ոչնչացման վերաբերյալ ռազմական տրիբունալում վկայություն է տվել նաև գեներալ Մուստաֆա Քեմալը[7]: «Մեր հայրենակիցները,- կարդում ենք Մ. Քեմալի վկայությունում,- իրականացրել են սարսափելի հանցագործություններ՝ դիմելով բռնությունների ամենատարբեր ձևերի. կազմակերպել են մարդկանց տեղահանություն և ոչնչացում, մանուկների վրա կերոսին լցնելով այրել են, ծնողների աչքի առջև բռնաբարել են կանանց ու աղջիկներին, տիրացել նրանց շարժական ու անշարժ գույքին, մարդկանց պահել անմարդկային պայմաններում և այլն»[8]: Մասնավորապես՝ Իթթիհատ կուսակցության և նրա կառավարության հակաիրավական և հակասահմանադրական գործողություն են որակվել 1915 թ. մայիսի 27-ի և սեպտեմբերի 26-ի ժամանակավոր օրենքները. առաջինը՝ բնակչության բռնի տեղահանության (դեպորտացիայի), իսկ երկրորդը՝ տեղահանվածների գույքի բռնագրավման, նրանց սեփականության, վարկերի, ավանդների ու ակտիվների տնօրինման մասին: Նշված երկու օրենքներն էլ հակասել են Օսմանյան սահմանադրությանը և բացի դրանից՝ գործադրվել են ապօրինի ձևով՝ առանց Թուրքիայի խորհրդարանում քննարկվելու և հաստատվելու[9]: Թեև այդ ժամանակա-



5 Սահակյան Ռ., Ցեղասպանության պատմությունից, Ե., 1990, էջ 46: Ի դեպ, համանման հռչակագիր ընդունվեց Մոսկվայում 1943 թ. նոյեմբերին նացիստական Գերմանիայի հանցագործությունների վերաբերյալ, որի հիման վրա էլ հետագայում նախապատրաստվեց և հրավիրվեց Նյուրնբերգի միջազգային ռազմական տրիբունալը:

6 Дадрян В., История армянского геноцида, Е., 2007, с. 390-391.

7 Սահակյան Ռ., Ցեղասպանության պատմությունից, Ե., 1990, էջ 172:

8 Геноцид армян, сост. и ред. Ю. Барсегов, т. 2, ч. 2, М., 2005, с. 273-274. Կան Օսմանյան պաշտոնական վիճակագրական տվյալներ, որ միայն սպանվածների թիվը կազմել է 800000: Այդ մասին վկայել է նաև Մուստաֆա Քեմալը 1919 թ. ամռանը ամերիկացի գեներալ Ջեյմս Հարբորդի հետ ունեցած զրույցի ժամանակ. տե՛ս, Дадрян В., История армянского геноцида, Е., 2007, с.289, 330.

9 Дадрян В., История армянского геноцида, Е., 2007, с. 284—289.



վոր օրենքներում չի հիշատակվում հայերի կամ որևէ այլ ազգության անուն, սակայն ինքնին հասկանալի է, թե ում դեմ էին ուղղված այդ հակաիրավական ու հակամարդկային օրենքները: Բերվածը դարձյալ մի լրացուցիչ փաստարկ է միջազգային իրավավարությամբ նման հակաօրինական գործողությունները կազմակերպողներին ու իրականացնողներին քրեական պատասխանատվության ենթարկելու համար:

Կ. Պոլսի Ռազմական արտակարգ ատյանը (դատարանը) 1919 թ. հուլիսի 5-ին կայացնում է դատավճիռ: Մեղադրական եզրակացության մեջ փաստվում է պատերազմական շրջանում հայերի տեղահանության և «հասուկ կենտրոնի» բանավոր հրահանգներով և գաղտնի հրամաններով հայերի կոտորածների կանխամտածված իրականացման մասին[10]: Օսմանյան կայսրության ժաղաժացիական քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի առաջին մասով դատարանը հեռակա կարգով մահվան վճիռ է կայացնում Թալեաթի, Էնվերի, Ջեմալի և Նազըմի նկատմամբ, այլ հոդվածներով մյուսները (30 հոգուց ավելի) դատապարտվում են դարձյալ մահապատժի, բանտարկության կամ աքսորի[11]:

Վերը բերված փաստերից հետևում է, որ Օսմանյան Թուրքիան, ըստ էության, առաջինն է 1919 թ. պաշտոնապես ճանաչել հայերի ցեղասպանությունը: Ուստի Օսմանյան պետության իրավահաջորդ Թուրքիայի Հանրապետության ներկա կառավարությունը անտեղի է չճանաչում ու հրաժարվում վերահաստատելու իր նախորդ իշխանությունների ընդունած ու ճանաչած հայոց ցեղասպանության փաստը:

Իհարկե, Օսմանյան Թուրքիայի այն ժամանակվա անգլիամետ իթիլյաֆական (համաձայնություն) իշխանությունները և մեծ տերությունները անհրաժեշտ հետևողականություն ու ճնշում չգործադրեցին՝ այդ դատավարությունը տրամաբանական ավարտին հասցնելու, երիտթուրք կառավարողների հանցագործություններից մեծապես տուժած հայ ժողովրդին ժամանակին փոխհատուցում տալու, որը կարող էր լինել, օրինակ, Սևրի պայմանագրի իրագործումը: Դատավարություն իրականացնողները, նաև մեծ տերությունները, անգամ հետևողական չգտնվեցին հեռակա կարգով մահվան դատապարտվածների դատավճիռներն ի կատար ածելու, որոնք հետագայում՝ 1921-1922 թթ. իրականացրին հայ վրիժառուները՝ «Նեմեսիս» ծրագրով:

Առաջին աշխարհամարտի տարիներին արևմտահայության տեղահանությունն ու ջարդերը Օսմանյան Թուրքիայում, անշուշտ, հիմք են հանդիսացել լեհատանցի, ազգությամբ հրեա, իրավաբան Ռաֆայել Լեմկինի համար մշակելու ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանություն հանցագործության կանխման և պատժելիության մասին» կոնվենցիան: Հայտնի է, որ ցեղասպանություն ( [illegible] ) եզրույթը առաջին անգամ 1944 թ. շրջանառության մեջ է դրել նույն ինքը Ռ. Լեմկինը[12]: Այդ եզրույթը միջազգային պրակտիկայում սկսեց գործածվել արդեն Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո՝ 1945-1946 թթ. Նյուրնբերգի միջազգային դատական գործընթացում[13]: Եթե առաջնորդվենք թուրքական կողմի որակումներով ու «օրենքի հետադարձ ուժ չունենալու» փաստարկումներով, ապա ստացվում է, որ 1948 թ. կոնվենցիայի դրույթները՝ իբրև արդեն կատարված փաստ (post faktum), չեն կարող տարածվել նաև հրեական հոլոքոստի (ողջակիզում) և առհասարակ մինչ այդ թվականը տեղի ունեցած ցեղասպանության բոլոր դեպքերի

---

[10] Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Ե., 1988, էջ 38, 40-49:

[11] Նույն տեղում, էջ 19-25, 126-128:

[12] Հովհաննիսյան Ն., Հայոց ցեղասպանությունը ցեղասպանագիտության հայեցակարգային համակարգում, Ե., 2002, էջ 8:

[13] Барсегов Ю.Г, Геноцид армян-преступление против человечества, Е., 1990, с. 5-6.

վրա: Կոնվենցիայի ընդունումից առաջ տեղի ունեցած հայոց ցեղասպանության փաստը ժխտողները փորձում են անտեսել կատարված ոճրի և պատժի միջև եղած պատճառահետևանքային կապը, ազատել հանցագործ ֆիզիկական անձանց և հենց տվյալ պետության ղեկավարությանը միջազգային իրավական մակարդակով քրեական պատասխանա-տվության ենթարկելուց[14]: Այնինչ անվիճելի փաստ է, որ ֆաշիստական Գերմանիայի կառավարության կազմակերպած հրեական ջարդերը, նաև ավելի վաղ՝ Օսմանյան Թուրքիայի կառավարողների կազմակերպած և իրականացրած հայկական ջարդերն են եղել այն իրավաքաղաքական ծանրակշիռ հիմքերը, որոնց հիման վրա ՄԱԿ-ը ընդունեց ցեղասպանության հանցագործության մասին հայտնի կոնվենցիան: Պետական մակարդակով հպատակ ժողովրդի կամ էթնիկ խմբերի (ինչպիսին արևմտահայությունն էր) ֆիզիկական բնաջնջումը միջազգային իրավական առումով չի կարող որակվել այլ կերպ, քան ծանրագույն հանցագործություն մարդկության դեմ, հանցագործություն, որը ՄԱԿ-ի ԳԱ 1968 թ. ընդունած նոր որոշմամբ՝ «վաղեմության ժամկետ չունի»[15]:

Ուշագրավ է, որ տակավին 1933 թ. իրավաբան Ռ. Լեմկինը հարց էր բարձրացրել միջազգային քրեական իրավունքում ռասայական, ազգային, կրոնական կամ սոցիալական խմբերի կանխամտածված ֆիզիկական կամ այլ ձևով ամբողջությամբ կամ մասամբ ոչնչացման համար մտցնել քրեական պատասխանատվության միանմանության նորմ: Կասկած չի կարող լինել, որ նման առաջարկ անելով՝ Լեմկինը նկատի է ունեցել Օսմանյան կայսրությունում հայ բնակչության ոչնչացման փաստը: Սակայն այն ժամանակ այդ առաջարկը միջազգային հանրության կողմից պատշաճ արձագանք ու ընդունելություն չգտավ: Պատահական չէ, որ հենց այդ նույն թվականին Գերմանիայում իշխանության անցած հիտլերյան նացիստները գործնականում շարունակեցին երիտթուրքերի ցեղասպանական քաղաքականությունը արդեն հրեաների, գնչուների և սլավոնական ժողովուրդների հանդեպ: Այդ ամենաթողությունը նկատի ուներ Ա. Հիտլերը, երբ աշխարհամարտի նախօրյակին իր սպայակազմին հորդորում էր լինել վճռական ու անողոք հասկացնելով, թե «ո՞վ է այսօր հիշում հայերի կոտորածների մասին»: Դրա համար է ասված՝ հանցագործության անպատժելիությունը ծնում է նոր հանցագործություն: Այն ժամանակ Հայոց ցեղասպանության անտեսումը (շրջանցումը) ծնեց հրեական, լեհական և հետագա տասնյակ մեծ ու փոքր ցեղասպանություններ:

Տասնամյակներ անց Եվրոպայի ամենահեղինակավոր քաղաքական կառույցներից մեկը՝ Եվրախորհրդարանը, 1987 թ. հունիսի 18-ին ընդունեց բանաձև «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին»: Փաստաթղթի 2-րդ հոդվածում ամրագրված է, որ «1915-1917 թթ. Օսմանյան կայսրության տարածքում հայերի նկատմամբ տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները հանդիսանում են ցեղասպանություն (ընդգծումը մերն է - Ա.Հ.)՝ համաձայն ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված 1948 թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի»[16]: Սակայն նույն հոդվածի երկրորդ մասով միաժամանակ վերապահություն էր արվում, որ ժամանակակից Թուրքիան որևէ կերպ չի կարող պատասխանատու համարվել Օսմանյան կայսրության հայ բնակչության ողբերգության համար: Դրա փոխարեն 3-րդ հոդվածով Եվրախորհրդից պահանջվում էր «ճնշում գործադրել ներկայիս կառավարության վրա, որպեսզի վերջինս ճանաչի 1915-1917 թթ. հայերի հանդեպ կազմակերպված ցեղասպանությունը» և նպաստի կողմերի միջև երկխոսության հաստատմանը[17]:

Բերվածը լրացուցիչ միջազգային իրավական ծանրակշիռ հիմք է ՄԱԿ-ի կոնվենցիայի շրջանակներում Հայոց ցեղասպանությունը Եվրախորհրդի մակարդակով ճանաչելու համար, բայց, իհարկե, ժամանակակից Թուրքիայի կառավարության պատասխանատվության հարցը թողնելով առկախ:

Հայոց ցեղասպանության ճանաչման միջազգային իրավական հիմքերի ժամանակակից պատկերն ավելի ամբողջական է դառնում, եթե վերը նշվածներին հավելում ենք հռչակագրերի, հայտարարությունների կամ օրենքների ձևով Հայոց ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը աշխարհի արդեն երկու տասնյակից ավելի երկրների կողմից: Եվ այդ գործընթացը շարունակվում է: Ի վերջո, Թուրքիայի ժխտողականությունը (ուրացումը) դատապարտված է անհաջողության:

---

14 Барсегов Ю. Г., նշվ. աշխ., էջ14:

15 Hovhannisyan N., The armenian genoside, Yerevan, 2009, p.105.

16 Danielyan G. Edward, The armenian genocide of 1894-1922 and the accountability of the Turkish state, Yerevan, 2005, p.49, Հայոց ցեղասպանություն (նյութերի ժողովածու), կազմող՝ Լ. Բարսեղյան, Ե., 2005, էջ 352, Խուրշուդյան Լ.,Հայկական հարցը, Ե., 1995, էջ 67:

17 Հայոց ցեղասպանություն (նյութերի ժողովածու), կազմող՝ Լ. Բարսեղյան, Ե., 2005, էջ 352, Խուրշուդյան Լ., նշվ. աշխ., էջ 67:

# Մադրիդյան սկզբունքները և ուժային ճանապարհով Ղարաբաղյան հարցի կարգավորման հնարավորությունը

Վահան Դիլանյան

*2009 թվականի հուլիսի 10-ին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից պաշտոնապես հրապարակված «մադրիդյան սկզբունքները» նոր հարցադրումներ են առաջացրել:*

*Դեռ 2007 թվականի նոյեմբերին Միջազգային ճգնաժամային խմբի «Լեռնային Ղարաբաղ. պատերազմի ռիսկ» զեկույցում խոսվում էր Մադրիդում Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների միջև համաձայնեցված բանակցային հիմնարար սկզբունքների մասին: Եվ գրեթե դրա կրկնությամբ հրապարակվեցին լրամշակված «մադրիդյան սկզբունքները»: Թեև փաստաթուղթը անցյալ տարի կրկին թարմացվեց, սակայն սկզբունքները չէին կարող փոխվել. դրանք հետևյալն են.*

*- Լեռնային Ղարաբաղի շրջապատող տարածքների վերադարձ Ադրբեջանի վերահսկողությանը,*

*- Լեռնային Ղարաբաղի միջանկյալ կարգավիճակ, նրա անվտանգության եւ ինքնակառավարման երաշխիքների տրամադրումով,*

*- Հայաստանը Լեռնային Ղարաբաղին կապող միջանցք,*

*- Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի հետագա սահմանում իրավականորեն պարտադիր կամարտահայտության միջոցով,*

*- ներքին տեղահանված անձանց եւ փախստականների՝ իրենց նախկին բնակության վայրերը վերադառնալու իրավունք,*

*- անվտանգության միջազգային երաշխիքներ, որոնք կներառեն խաղաղապահ գործողություն:*

*Համանախագահները կոչ են անում Հայաստանին ու Ադրբեջանին՝ սատարել վերոհիշյալ սկզբունքները:*

*Այս 6 կետերը միայն հիմնարար սկզբունքներ են, որոնց համապատասխան դեռ պետք է համաձայնություններ ձեռք բերվեն: Իրականում, ինչպես ֆրանսիացի համանախագահ Բեռնար Ֆասիեն հայտարարեց, Մադրիդյան փաստաթուղթը կազմված է մոտ 15 սկզբունքային կետերից, և որ դրանցից միայն 2-3-ն են գրեթե համաձայնեցված:*

*Ո՞րոնք են համաձայնեցված և չհամաձայնեցված կետերը:*



Ֆասիեն և Մերզլյակովը

Դեռևս 2 տարի առաջ դիվանագիտական շրջանակներում շրջանառվում էին լուրեր, որ բանակցություններում հիմնական տարաձայնությունները Հայաստան-Ղարաբաղ միակ ցամաքային ճանապարհի՝ Լաչինի միջանցքի ու Քելբաջարին հատուկ կարգավիճակ տրամադրելու հարցերն են: Հիմա պաշտոնապես հաստատվում է, որ գլխավոր խնդիրը, որը դեռ համաձայնության կարիք ունի, Ղարաբաղի վերջնական կարգավիճակի որոշումն է:

Այստեղից կարելի է ենթադրել, որ Լաչինի ու Քելբաջարի հարցերը Ֆասիեի նշած «գրեթե համաձայնեցված կետերից» են: Չնայած ելնելով այն փորձից, որ ադրբեջանական կողմը բազմիցս չի կատարել ձեռք բերված պայմանավորվածությունները (օրինակ՝ ուժի չկիրառման սկզբունքի տակ ստորագրելուց հետո (Մոսկովյան հռչակագիր, 2008 թ. նոյեմբերի 2), ապա նաև ընդունելով Հելսինկյան համաձայնագիրը (2008 թ. դեկտեմբերի 5), Ադրբեջանը շարունակում էր ԼՂՀ-ի հետ շփման գծում պարբերաբար մարտական գործողություններ վարել, կամ, ասենք, ղարաբաղյան հարցը բազմիցս ՄԱԿ տանելու Բաքվի նախաձեռնությունները (2008 թ. մարտի 14, ապա 2009 թ. հունվարի 23 և փետրվարի 17), որով ուղղակի խախտում է միջնորդության Մինսկի ֆորմատը), դժվար է եզրակացնել, որ այդ 2 տարածքների հարցը վերջնականապես լուծված է:

Պատահական չէ, որ հենց Լաչինի ու Քելբաջարի շուրջ են ընթացել ծանր բանակցություններ: Թե՛ Լաչինը և թե՛ Քելբաջարը կենսականորեն կարևոր նշանակություն ունեն ԼՂՀ-ի ու Հայաստանի համար:

Փաստ է, որ Լաչինի հարցը Հայաստանի համար կենսական կարևոր շահ է: Ինչ վերաբերում է Քելբաջարին հատուկ կարգավիճակ տրամադրելու հարցին, ապա այն ցանկացած ձևաչափով ու ցանկացած չափով Ադրբեջանին տրամադրելը ուղղակի սպառնալիքի տակ կդնի Հայաստանի և Ղարաբաղի ջրային ռեսուրսները: Քելբաջարը ջրով մատակարարում է ողջ Ղարաբաղը և Հայաստանի մի մասը:

Չնայած հրապարակված կետերում նշվում է, որ պետք է լինի Հայաստան-ԼՂՀ ցամաքային ճանապարհ (այսինքն Լաչինով), սակայն կոնկրետ ոչ մի խոսք չկա Քելբաջարի մասին: Բացի դրանից, Մադրիդյան փաստաթուղթը պարունակում է Հայաստանի և Ղարաբաղի համար մի շարք այլ անընդունելի կողմեր ու նաև իրարամերժ դրույթներ: Օրինակ, ԼՂՀ իրավական կարգավիճակի հարցը:

Այդ կարգավիճակը որոշվել է 18 տարի առաջ, երբ




ԼՂՀ-ն հանրաքվեով հռչակեց իր անկախությունը (1991 թ. դեկտեմբերի 10), իսկ 2006 թ. դեկտեմբերի 10-ի սահմանադրական հանրաքվեն էլ ամրապնդեց ԼՂՀ իրավական կարգավիճակը: Ռուս համանախագահ Մերզլյակովը ԼՂՀ կարգավիճակի հարցի մասին ասաց. «Գոյություն ունի, այսպես կոչված, «հետաձգված կարգավիճակ» հասկացությունը»:

Փաստորեն, հայկական կողմը կոնկրետ զիջումների՝ տարածքները հանձնելու ու այնտեղից հայկական զինուժի դուրսբերման դիմաց ստանում է ԼՂՀ իրավական կարգավիճակի մասին անորոշ ձևակերպում՝ իբրև «հետաձգվող» մի բան:

Թեև փախստականների ու տեղահանվածների վերադարձի կետը դրված է Ղարաբաղի կարգավիճակի վերջնական որոշման կետից հետո, բայց իրականում այն ենթադրում է, որ հանրաքվեն կլինի այդ մարդկանց վերադարձից հետո: Նոր հանրաքվեի հնարավորության մասին խոսելով, ԱՄՆ-ի պետքարտուղարի եվրոպական ու եվրասիական գործերով օգնական Գորդոն Ֆիլիպը նշել է. «Քվեարկելու ցանկացած մեխանիզմ, որով ժողովուրդը կարտահայտի իր կամքը, պետք է ներառվի կարգավորման գործընթացում»:

Անշուշտ, ԼՂՀ-ի տարածքում ապրել են ադրբեջանցիներ, ապրել են և ռուսներ ու այլ ազգեր: Նույն կերպ հայեր են ապրել Բաքվում կամ Թիֆլիսում, սակայն դա չի նշանակում, որ հայերը պետք է վերադառնան այնտեղ ու պահանջեն նոր հանրաքվե ու նոր իրավական կարգավիճակ:



Գորդոն Ֆիլիպ

*Փախստականների հարց, որպես այդպիսին, գոյություն ունի: Նրանք անշուշտ իրենց ցանկության պարագայում պետք է կարողանան վերադառնալ ու բնակվել ԼՂՀ-ում: Չնայած այս հարցն էլ չափազանց բարդ է. հստակ չէ՝ ովքե՞ր են ժամանակին ապրել այնտեղ, կամ կոնկրետ որտե՞ղ են ապրել, արդյո՞ք խոսքը միայն փախստականների «5 շրջաններ» վերադառնալու մասին է: Իսկ ընդհանրապես, ադրբեջանական իշխանությունները, թերևս, կարիք ունեն սոցիոլոգիական հարցում անցկացնել այն մասին, թե իրականում քանի հոգի է ուզում բնակվել ԼՂՀ-ում. ենթադրվում է, որ դրանք սին թվեր կլինեն:*

*Հաջորդ պարագրաֆը, որ ներառված է հրապարակված համաձայնագրի մեջ, «հարակից շրջանների»՝ «5 շրջանների» վերադարձի մասին կետն է (Լաչինի ու Քելբաջարի հարցերն առանձին են):*

*Իրականում այդ «5 շրջանները» ԼՂՀ Սահմանադրությամբ ամրագրված են որպես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավազորության ներքո գտնվող տարածք (142 հոդված): Իսկ մադրիդյան նշված սկզբունքն ուղղակի ոչ լեգալ է համարում ԼՂՀ պետական ողջ ապարատն ու մնացած բոլոր ինստիտուտները, այնտեղի ապրող մարդկանց իրավունքներն ու ազատությունները, որոնք ևս ամրագրված են նույն Սահմանադրությամբ: Հետևաբար հինգ շրջանների հարցը, առանց Ղարաբաղի իշխանությունների մասնակցության, անհնար է լուծել:*

*Հրապարակված սկզբունքները կարող են առաջացնել անհամաձայնություններ հենց համանախագահ երկրների միջև: Օրինակ, տարաձայնություններ կարող են լինել ԱՄՆ-ի և Ռուսաստանի միջև, թե որտեղ տեղակայել խաղաղապահ ուժերը: Խնդիրը կապված է իրանական սահմանի հետ. ԱՄՆ-ը ուզում է, որ իր խաղաղապահները մոտ լինեն Իրանին, իսկ Ռուսաստանը, բնականաբար, չի համաձայնվի:*

*«Խաղաղության այդ ճանապարհը» որոշող կետերը կարող են անընդունելի լինել ոչ միայն բանակցող 2 կողմի՝ Հայաստանի ու Ադրբեջանի համար, այլև ԼՂՀ-ի, որը ցանկացած պահի կարող է մերժել ցանկացած փաստաթուղթ, ինչպես արել է նախկինում՝ մերժելով փուլային ու փաթեթային տարբերակների առաջարկները (1997 թ.):*

*Իսկ Մադրիդյան սկզբունքները կարծես փաթեթային ու փուլային տարբերակների միաձուլումը լինեն: Կարգավորման մեխանիզմի բովանդակությունը փուլային տրամաբանությամբ է, բայց ենթադրում է միանվագ համաձայնություն բոլոր մնացած կետերի վերաբերյալ: (Չնայած նախկինում էլ փաթեթային ու փուլային տարբերակները չնչին տարբերություն ունեին):*

*Ինչո՞ւ է բանը հասել նրան, որ Հայաստանին այդպիսի առաջարկներ են արվում:*

*Խնդիրն այն է, որ բանակցային գործընթացի սկզբից էլ համանախագահների շրջանում միշտ եղել են տարածքների հանձնման ու հայկական ուժերի դուրսբերման մասին սկզբունքները: Դրանք եղել են և՛ Լևոն Տեր-Պետրոսյանի, և՛ Ռոբերտ Քոչարյանի նախագահության ժամանակաշրջաններում: Իսկ ցանկացած նոր իշխանություն հիմնականում և անուղղակիորեն ժառանգում է նախորդ իշխանությունների ստանձնած պարտավորություններն ու բանակցությունների փորձը. Լևոն Տեր-Պետրոսյանից այդ փորձը փոխանցվեց Ռոբերտ Քոչարյանին, ապա Սերժ Սարգսյանին:*

*Ինչքան էլ արդիականացվեին ու վերափոխվեին այդ սկզբունքները, դրանք հիմնականում մնալու էին նույնը: Միայն ռազմական էլիտայի կողմից իշխանափոխության պարագայում էր հնարավոր, որ դրանք ըստ էության փոփոխվեին (որն իր դրական արդյունքներով հանդերձ, կունենար բացասական հետևանքներ):*

*Բայց պարբերաբար առաջարկվող սկզբունքները հայկական կողմը միշտ էլ կարող է մերժել: Եթե մինչև 1990-ականների վերջն այդ մերժողական գործառույ-*

քը կատարում էր Լեռնային Ղարաբաղի կողմը, ապա դրանից հետո Հայաստանն էր մերժում: Այժմ նույնպես Հայաստանը կարող է մերժել ցանկացած ոչ հայանպաստ առաջարկ: Ավելին, եթե հաշվի առնենք Ղարաբաղյան կողմի հնարավոր ներգրավումը բանակցություններում, կրկնակի մերժման հնարավորություն կունենանք:

Ուրեմն, ինչո՞ւ Ղարաբաղը դուրս մնաց բանակցային շրջանակից, եթե Ղարաբաղի մասնակցությամբ հայկական կողմի դիրքերը կրկնակի ուժեղ կլինեին, բանը չէր հասնի նման զիջումային առաջարկների:

Այս փաստարկով են քննադատում նախկին իշխանություններին, թե նրանց մեղքով է, որ Ղարաբաղը դուրս մնաց կարգավորման գործընթացին մասնակցելուց:

Առաջին հայացքից, իսկապես, քննադատելի է փաստը. հայկական կողմն ինքն է որոշում կայացրել Ղարաբաղին դուրս թողնել բանակցություններից և ներկայանալ թե՛ Ղարաբաղի, թե՛ Հայաստանի Հանրապետության անունից:

Սակայն, ԼՂՀ-ի դուրս գալը նաև դրական արդյունք ունի, ինչն էլ, թերևս, հաշվի է առել Ռոբերտ Քոչարյանի արտաքին քաղաքականությունը: Ղարաբաղը, դուրս գալով գործընթացից, մնում էր որպես «պահեստային ձայնի իրավունք ունեցող կողմ»: Այսինքն՝ եթե ենթադրենք, որ Հայաստանին պարտադրեն զիջումներ անել ղարաբաղյան հարցում, ԼՂՀ-ն միշտ կարող է «ակտիվանալ» ու «փրկել» Հայաստանին՝ մերժելով օրակարգում դրված այդ փաստաթուղթն ու այդպիսով խափանել ցանկացած ձեռք բերված պայմանավորվածություն: Այսինքն՝ Հայաստանը ձեռք է բերել լրացուցիչ ձայնի իրավունք:

Իսկ քանի որ 1990-ականների վերջերին արդեն կար ազատագրված տարածքներից հայկական ուժերի դուրսբերման մասին սկզբունքը, որը, ինչպես նշեցինք, փոխանցվել է դրանից առաջ գործող իշխանությունների փորձի միջոցով, Ղարաբաղի մնալը գործընթացում ավելի արդյունավետ չէր լինի, քան նրա՝ դուրս գալը:

Ղարաբաղի մասնակցությամբ, սակայն, միայն կամրանան հայկական դիրքերը, բայց հակամարտությունը չի լուծվի:

Եթե անգամ Լեռնային Ղարաբաղն այս կամ հաջորդ տարի նստի բանակցությունների, կսկսվի հերթական բանակցային 10-ամյակը՝ նոր մադրիդյան սկզբունքների կամ այլ մայրաքաղաքային սկզբունքների շուրջ, միայն այն տարբերությամբ, որ սահմանված տասնամյակը կարող է չավարտվել (ԼՂ կողմի մասնակցությունը կոնկրետացում կմտցնի բանակցությունների մեջ, և զիջումների հարցն արդեն կոնկրետ ու ոչ լղոզված կերպով կդրվի):



Ջեյմս Բեյքեր

Արևմտյան Սահարայի դեպքում* Փոլիսարիոն հակամարտող կողմ է հանդիսանում (Ալժիրը, ի տարբերություն Հայաստանի, չի մասնակցում բանակցություններին), բայց հակամարտությունը 1991 թվականին կնքված զինադադարից հետո մինչ օրս լուծում չի գտնում. կարգավորման սկզբունքները «մադրիդյան փաստաթղթի» նման լղոզված են ու անհասկանալի:

Իսկ կայունության (կամ հարաբերական կայունության) պահպանմանն ուղղված այսօրինակ փաստաթուղթը վտանգավոր է. կողմերի միջև թշնամանքը չի վերացվում, ընդհակառակը՝ ցանկացած «բարենպաստ» պահի կարող է դուրս պրծնել:

Միջազգային հանրության այդ նույն ռազմավարության պատճառով՝ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի անձնական ներկայացուցիչ Ջեյմս Բեյքերի կողմից Արևմտյան Սահարայի կարգավորման համար «Բեյքեր-2» պլանի առաջարկումից անմիջապես հետո վերսկսվեցին ռազմական բախումները Փոլիսարիո ճակատի ու Մարոկկոյի միջև: (2009 թվականին նորացված «մադրիդյան սկզբունքներն» իրենց ձևով հի-

*) Այս տարածքի մի մասը՝ Փոլիսարիո ճակատի վերահսկողությամբ Ղարաբաղի նման ինքնորոշվել է և ուզում է կամ անկախ լինել, կամ միավորվել Ալժիրին: Մարոկկոն Ադրբեջանի պես ուզում է պահպանել իր տարածքային ամբողջականությունը և մերժում է ցանկացած տիպի անկախության տրամադրում:

շեցնում են «Բեյքեր-2»-ը. հակամարտող կողմերը չէին ընդունել դրանից առաջ առաջարկված «Բեյքեր» պլանը):

Մադրիդյան փաստաթղթի իրագործման հնարավորության պարագայում, ո՛չ հայաստանյան, ո՛չ ղարաբաղյան և ո՛չ ադրբեջանական հասարակությունները պատրաստ չեն զիջումների: 16 տարիների ընթացքում հայ և ադրբեջանական կողմերը ձախողվել են մի կարևոր հարցում՝ ժողովրդի մեջ խաղաղասիրություն ու համակեցություն քարոզելու մեջ:

Այս պայմաններում խաղաղ Կովկաս տեսնելու ցանկությամբ Արևմուտքը, որը շահագրգռված է անվտանգ ու էժան գազամուղներ, երկաթգծեր ու նավթամուղներ ստեղծելու նախագծերով, անհարիր շտապողականություն է ցուցաբերում խնդրի կարգավորման ուղղությամբ:

Իսկ ղարաբաղյան հարցում «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» դրույթը փորձել վերափոխել ու կառուցողական դարձնել՝ նույնն է, ինչ հանգեցնել նոր պատերազմի, քանի որ «կամ պատերազմ, կամ խաղաղություն» տարբերակի դեպքում ո՛չ Հայաստանը, ո՛չ Ադրբեջանը ի վիճակի չեն ընտրելու խաղաղությունը, որովհետև խաղաղության գինն անընդունելի է հանրությունների համար:

Հատկապես Ադրբեջանում իրականացվող պետական քաղաքականությունն ավելի ու ավելի է սրել պատերազմասեր սոցիալական կլիման:

Պետական այդ քաղաքականության նպատակն է ժողովրդի մեջ ամրապնդել «արտաքին թշնամու» կերպարը: Դրանով Բաքուն ոչ միայն խոչընդոտում է կարգավորման խաղաղ ճանապարհը, այլև լուծում է մի շարք խնդիրներ:

1-ին, ցանկացած տիպի փոխզիջման նկատմամբ հանրային կոշտ կարծիքը ամրացնում է Ադրբեջանի դիրքերը բանակցություններում: Ներկայացնելով սեփական ժողովրդի անհամաձայնությունը զիջումների նկատմամբ, Բաքուն կարողանում է հիմնավորել, թե ինչու է հրաժարվում առաջարկվող զիջումներից, և նորանոր պահանջներ դնում համանախագահների առջև:



Բաքվի նավթահորերը 1963թ., ըստ «LIFE» հանդեսի

2-րդ, այդ քաղաքականությամբ Ադրբեջանը փորձում է պատերազմում պարտված ժողովրդին հոգեբանական կոմպլեքսներից ազատագրել և հոգեբանորեն պատրաստել նոր հնարավոր ռազմական բախման:

3-րդ, հասարակության ուշադրությունը շեղում է երկրի ներքաղաքական ու սոցիալական պրոբլեմներից:

Այս նպատակները միաձուլված ձևով կարող են արտահայտվել, օրինակ, 2012-2013 թթ., երբ Ադրբեջանի նավթային պաշարների նվազումը նկատելի կդառնա: Եվ երբ դա բացասաբար անդրադառնա տնտեսության վրա (Ադրբեջանի տնտեսությունը հիմնականում զարգանում է նավթագազային ռեսուրսներ վաճառելով), ադրբեջանական իշխանությունները կարող են ակտիվացնել «արտաքին թշնամու» կերպարը՝ «հայրենասիրական պատերազմի» քարոզով, որը կոչված կլինի շեղելու հասարակության ուշադրությունը սոցիալական ու տնտեսական պրոբլեմներից:

Յուրաքանչյուր նոր պատերազմի համար քաղաքական ու ռազմական քարոզչությունը կարևոր բաղադրիչ է, և զայրույթ ու ատելություն է բորբոքում, մղում ագրեսիայի: Այդ ռազմավարությունն առնվազն երկու նպատակ ունի. այնպես անել, որ բանակը հավատա այն բանին, թե ինչ պետք է անի, և երկրորդ՝ «հրապուրի» հասարակությանը՝ աջակցելու իր կառավարության պատերազմական քաղաքականությանը:

Փորձը ցույց է տալիս, և ղարաբաղյան հակամարտության դեպքը վերահաստատեց, որ ինքնորոշման համար մղված պատերազմները հեշտ չեն ավարտվում: Արդարության պահանջն ու անվտանգության մտահոգությունը դժվարացնում են փոխզիջումը: Այս դեպքում Ղարաբաղյան հակամարտությունը կա՛մ կարող է շարունակվել և սառեցվել Կիպրոսի խնդրի նման, կա՛մ, որ ավելի հավանական է, պարբերական ռազմական բախումներ ու պատերազմներ կլինեն, ինչպես արաբա-իսրայելականի դեպքում:

Փորձագետների ենթադրությամբ, ավելի հավանական է, որ ռազմական հնարավոր բախումը ադրբեջանա-ղարաբաղյան ճակատում երկար չտևի, քանի որ միջազգային հանրությունը կշտապի կասեցնել: Տարածաշրջանում շահագրգիռ ուժային բևեռներն ասես

հաստատում ենք այս թեզը՝ նշելով, որ Ղարաբաղի հարցի խաղաղ լուծմանն այլընտրանք չկա: Փաստ է, որ նոր պատերազմը հարցականի տակ կդնի ներդրումային նախագծերն ու էներգառեսուրսներ տեղափոխող խողովակաշարերի համակարգը:

Բայց մենք գիտենք, որ պատերազմ սկսելն ավելի հեշտ է, քան այն կասեցնելը: Բացի այդ, չպետք է բացառել, որ նոր պատերազմը գուցե հանգեցնի ղարաբաղա-հայկական ուժերի՝ դեպի Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող տարածքներ ներխուժման՝ սպառնալով Գյանջային (Ադրբեջանի երկրորդ մեծ քաղաքը, որը շփման գծից մոտ 30-40 կմ հեռավորության վրա է): Ղարաբաղա-հայկական ուժերի հնարավոր գրոհները Ադրբեջանի նավթային ենթակառուցվածքների ու խողովակաշարերի վրա (այդ թվում Մարտակերտից 50 կմ հեռավորության վրա գտնվող Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղին) նույնպես չի բացառվում:

Ի վերջո, նոր պատերազմը քաղաքական քաոս կառաջացնի Ադրբեջանում: Պատերազմի տեսությունը ցույց է տալիս, որ կորստի վախը հաճախ հանգեցնում է պատերազմում իրական կորստի: Այս առումով, ելնելով վերը նշված Ադրբեջանի հնարավոր կորուստների ու դրանց կապակցությամբ ադրբեջանական վախի հանգամանքներից, ենթադրվում է, որ Ադրբեջանը պետք է լուրջ մտահոգվի հնարավոր իրական կորստի վախից ու պատերազմի չգնա:

Բայց կա և վախի այլ՝ հակառակ ուղղությամբ դրսևորման հնարավորություն: Եթե սահմանենք Ադրբեջանի կողմում հայկականի նկատմամբ մշտական դարձած վախի գործոնը, ուրեմն չի կարելի բացառել նաև պատերազմով այդ վախը հաղթահարելու տարբերակը:

Եվ իսկապես, շատ հաճախ պատերազմների նախաձեռնության համար հիմնարար դրդապատճառներ են դառնում այնպիսի անչափելի գործոններ, ինչպիսին է, օրինակ, էմոցիոնալ գործոնը (Սահակաշվիլիի դասական օրինակով): Ադրբեջանի դեպքում չի բացառվում «խելքին փչելու» սկզբունքով որոշում ընդունելու տարբերակը: Սրա փորձը կա ռազմաճակատներում որոշումներ ընդունելու օրինակներում, հատկապես ավիացիայի ոլորտում (բրիտանական բանակը նույնպես ունի դրա փորձը):

Այս ամենով հանդերձ, հստակ գործոններ կան, որ խոսում են Ադրբեջանի կողմից հնարավոր ռազմական ագրեսիայի վերսկսման հնարավորության մասին: Պատերազմաշունչ հայտարարությունները զուգորդվել են ռազմական բյուջեի աննորմալ աճի հետ: Իսկ զինված ուժերի վերազինումն ու արդիականացումը համատեղվել են ռազմական ստուգումների փորձերով (2008 թ. մարտին և նոյեմբերին, 2010 թ. մարտին):

Ի վերջո, այնպիսի կարևոր գործոն, ինչը կարող էր հարցականի տակ դնել պատերազմի վերսկսումը, այն է՝ խաղաղության պայմանագիրը, բացակայում է: Այդպիսի պայմանագրի չգոյությունը, թերևս, ամենացայտուն գործոնն է, որով կարելի է պայմանավորել Ադրբեջանի կողմից Ղարաբաղի դեմ ռազմական ագրեսիայի վերսկսման հնարավորությունը:

Պետք է նշել, սակայն, որ այս բոլոր գործոններն ու պայմանները թեև վկայում են պատերազմի հնարավորության մասին, դեռ չեն հաստատում այն: Այլ կերպ ասած, դրանք «անհրաժեշտ, բայց ոչ բավարար» պայմաններ են պատերազմի սկսման համար: Բայց ասել, թե «այս պահին պատերազմի վտանգ չկա, կան պարզապես պատերազմի սպառնալիքով արտահայտված հետևողական ճնշումներ» (ՀՀ պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհրդի անդամ, ռազմական հոգեբան Դավիթ Ջամալյան), նպատակահարմար չէ:

Իսկ եթե ընդունենք, որ պաշտպանության ու ազգային անվտանգության տեսության մեջ կան «վտանգ» և «սպառնալիք» հասկացություններ, որոնք իրենց հերթին, ըստ զարգացության կամ ձևավորվածության աստիճանի, լինում են երկու տեսակի՝ պոտենցիալ և իրական, ապա ներկա իրավիճակում տրամաբանական կլիներ խոսել Ադրբեջանից եկող սպառնալիքի և ոչ թե վտանգի մասին:

Եթե նույնիսկ հաշվարկներն իրոք ցույց են տալիս, որ սպառնալիք չկա (ինչը չափազանց կասկածելի է), ուրեմն նպատակահարմար կլիներ խոսել իրական վտանգի մասին:

Բայց փաստ է, որ վտանգ միշտ էլ կա. զինադադարի խախտման դեպքերն ու հատկապես խաղաղության պայմանագրի բացակայությունը հենց դրա մասին են ահազանգում. այդ վտանգը 1994 թվականից մինչ օրս կա: Այսպիսով, քննարկման հարց պետք է լինի Ադրբեջանի կողմից մշտապես առկա վտանգի՝ սպառնալիքի վերածման կամ սպառնալիքի պոտենցիալից իրականի վերածման հարցը:

Ավելի որոշակի, կարծում ենք, ներկա պահին Ադրբեջանի կողմից կա ոչ թե իրական վտանգ, այլ պոտենցիալ սպառնալիքի իրական դառնալու հնարավորություն:

Այսուհանդերձ, չի կարելի հիստերիա առաջացնել հանրության մեջ՝ խոսելով Ադրբեջանի կողմից իրա-

կամ սպառնալիքի «կոլապսային» էության մասին, բայց նաև չպետք է ադրբեջանական ագրեսիան միֆ որակել: Ինչպես ԼՂ պաշտպանության բանակի նախկին հրամանատար Սամվել Բաբայանը նշեց, Ադրբեջանը պատրաստվում է պատերազմի, իսկ «մենք դա չենք ուզում հասկանալ»:

Այս առումով պետք չէ անկարևոր համարել հնարավոր պատերազմով ստեղծվելիք խուճապի ու խուճապային անկարգության ստականության հնարավոր հետևանքների կանխատեսումն ու դրանց կանխարգելմանն ուղղված միջոցների ձեռնարկումը: Մանավանդ, երբ Ադրբեջանը մերժում է Հայաստանի նախագահի՝ խաղաղության պայմանագիր ստորագրելու կոչը, իսկ Ադրբեջանի կողմից ռազմաշունչ հայտարարությունների ի պատասխան՝ հայկական կողմը կառուցողական վարքագիծ է որդեգրել, ինչն իր հերթին էապես ազդում է հայության բարոյահոգեբանական վիճակի վրա:

Պետք է գիտակցել, որ եթե դիվանագիտությունը համարվում է պետության ուղեղը, ապա ազգի բարոյահոգեբանական վիճակը պետության ոգին է՝ նրա նյարդային-հոգեբանական մասը, իսկ դրանք միմյանց անհրաժեշտորեն փոխլրացնում են: Պետության ուղեղը պետք է հաշվի առնի ազգի էմոցիոնալ վիճակը: Չէ՞ որ հասարակությունը (մասնավորապես այն խումբը, որը պատերազմում անմիջական ներգրավում է ունեցել կամ հիմա ապրում է Ադրբեջանի հետ շփման գծի մոտ) զուտ զգայական է գնահատում զիջումների մասին ցանկացած հայտարարություն:




Պետության ուղղակի դիվանագիտության գործառման համար հայության բարոյահոգեբանական բարձր վիճակի պահպանումը պետք է սահմանվի որպես կենսականորեն կարևոր սկզբունք: Առանց այն էլ այդ ոգու «եռասվածությունը»՝ պայմանավորված Ղարաբաղի և Սփյուռքի առկայությամբ, հիմնախնդիր է:

Սրանից զուգե ենթադրվի, որ եթե Հայաստանի փոխզիջումային կամ կառուցողական համարվող արտաքին քաղաքական վարքագիծը հետևանքներ ունի բարոյահոգեբանական դրության վրա, ապա հակառակ՝ ապակառուցողական կամ չոր վարքագիծը դրական արդյունք կունենար: Այս տեսակետի կարգախոսը թերևս կլիներ «եթե խաղաղություն ես ուզում, պատրաստվիր պատերազմի» (լատ.՝ Si vis pacem, para bellum) բանաձևը: Այսօրինակ տրամաբանություն հանրության միջավայրում արդեն զարգանում է, որը նաև հղի է վերածվելու «եթե խաղաղություն ես ուզում, ապա պատերազմ մղիր» (լատ.՝ Si vis pacem fac bellum) տրամաբանության:

Խնդիրը, սակայն, կարծում ենք՝ այլ կերպ պետք է դրվի՝ ոչ իդեալական, այլ պրագմատիկ հարթության վրա. հաղթել առանց բախման կամ այնպես անել, որ հակառակորդը չուզենա հարձակվել: Խնդիրը նաև չի ենթադրում պացիֆիստական կոչ, թեև պացիֆիստները չեն էլ բացառում ինքնապաշտպանության համար ուժի կիրառումը: Այսուհանդերձ, պացիֆիզմը նաև չի ընդունում «եթե խաղաղություն ես ուզում, ապա տարածք տուր» դրույթը: 1990-ականներից ձևավորված «խաղաղության դիմաց տարածք տալու» այդ դրույթը դեգրադացված պացիֆիզմի դրսևորում է, որը ներկա պայմաններում հանգեցնելու է նոր պատերազմի:

Կարծում ենք, որ մեր խնդիրը չպետք է լինի խաղաղություն կամ պատերազմ ուզել-չուզելը, ներկա պայմաններում կարևորագույն խնդիրը պետք է լինի պետություն-հասարակություն փոխհարաբերություններում արդյունավետ փոխադարձության պահպանումը՝ Հայաստան-Ղարաբաղ-Սփյուռք եռամիասնական համակարգով: Հրամայական է ողջ հայության ընդհանուր մոտեցումը Ղարաբաղի հարցին: Ընդհանրության այս սկզբունքի դեպքում միայն կհաջողվի պետության պրագմատիկ դիվանագիտությունը, իսկ Ադրբեջանի հետ խաղաղ համաձայնության ձախողման հնարավորության դեպքում՝ այդ ընդհանրության համոզմունքով զինված հանրային եռաչափավորությունը կապահովի դիվանագիտության շարունակությունն այլ միջոցներով:

# ՋԱՎԱԽՔԻ ՎՐԱՑԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՈՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՀԿ-ՆԵՐԻՑ ԴԵՊԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԵԿՈՒՍԱՑՈՒՄ

Վահե ՍԱՐԳՍՅԱՆ
«Միտք» վերլուծական կենտրոն

Քանիցս անդրադարձել ենք Սամցխե-Ջավախք-Ծալկա (Ջավախք) հայկական տարածաշրջանի հասարակական-քաղաքական կյանքում մեծ դերակատարում ունեցող կազմակերպություններին, վերջիններիս գործառույթներին և այլն: Խոսքը հիմնականում վերաբերում է բազմաթիվ այն ոչ կառավարական կազմակերպություններին, միություններին, հասարակական կազմակերպություններին, որոնք ստեղծվել և այս կամ այն կերպ գործում են Ջավախքում:

Ջավախքն իրականում այսօր չի գտնվում Վրաստանի քաղաքական զարգացումների դաշտում: Տարածաշրջանում երբեք չի ընկալվել վրացական որևէ կուսակցության կամ քաղաքական կազմակերպության գործունեությունը, և ներկայումս ևս կարելի է խոսել վերջիններիս սոսկ ձևական գոյության, սակայն ոչ՝ գործունեության և հասարակական-քաղաքական ազդեցության մասին: Դրանք ձևականորեն բացվում են ընտրությունների պահին, իսկ ազգաբնակչությունն այնպես էլ անհաղորդ և անտարբեր է մնում նրանց գործունեության հանդեպ:

Քանի որ Վրաստանն իրավականորեն արգելել է հայկական կուսակցությունների գոյությունը, հասարակական կառույցները Ջավախքում այն միակ բջիջներն են, որոնք կոչված են տնօրինելու ջավախահայության քաղաքական ու քաղաքացիական գիտակցությունը:

Լինելով հայկական տարածաշրջան և գտնվելով Վրաստանի՝ ազգային փոքրամասնությունների նկատմամբ վարվող հակասական քաղաքականության ազդեցության ոլորտում, հարկ էր, որ Ջավախքում ՀՀ-ի և Սփյուռքի անմիջական մասնակցությամբ ձևավորվեր հայ ազգաբնակչության ազգային ոգին, հայրենական պատմությունը, պատմական աշխարհագրությունը, լեզուն, կրոնական գիտելիքների իմացությունը վառ պահող և զարգացնող ինստիտուցիոնալ մի կուռ համակարգ: Նախախորհրդային 2-3 տարիներին (1918-1921 թթ.) տարածաշրջանը փաստացի համարվել է անկախ ՀՀ-ի տարածք, և պատահական չէր, որ ծնունդով ախալքալաքցի ՀՀ առաջին վարչապետ Հ. Քաջազնունին արտասահմանից ստացված օգնության համապատասխան մասն ուղղորդում էր Ջավախք: Խորհրդային շրջանում իրադրությունն այլ էր: Վերոնշյալ համակարգի ձևավորումը պետք է տեղի ունենար խորհրդային համակարգի փլուզմանը զուգընթաց, ավարտին հասնելով հանրապետությունների անկախացման սկզբնական տարիներին:

Ջավախքում հասարակական–քաղաքական կազմակերպությունները, շարժումներն ու միությունները 1990-ական






թվականներին, լինելով թույլ, պառակտված, հիմնվելով ոչ թե կոնկրետ մշակված հայեցակարգի, այլ՝ քաոսային և պահի տակ ծնունդ առնող ցանկությունների ու ձգտումների վրա, չկարողացան ոչնչի հասնել: Այս հարցում մեծ էր, իհարկե, ՀՀ-ի կրավորական, պասիվ պահվածքը, սակայն ջավախքցի գործիչների շրջանում քաղաքական մտքի բացակայությունը, Ջավախքի մասին պատմաքաղաքական, աշխարհագրական, ռազմավարական գիտելիքների պակասը վերջիններիս ստիպում էր գործել խիստ կաշկանդված, ոչ համակարգված կերպով: Վերջին այս պատճառները, իհարկե, որքան սուբյեկտիվ են, նույնքան և օբյեկտիվ: Այդուհանդերձ՝ մինչ 1990-ական թվականների ավարտը Ջավախքի այս կազմակերպությունները եղել են բավականին ակտիվ: Բավական է նշել մի քանի օրինակ, երբ Ջավախքում, այդ ընթացքում, մի քանի անգամ արգելվեց վրացական զինվորական ստորաբաժանումների տեղակայումը, երկու անգամ փորձ արվեց անցկացնելու ինքնավարության հանրաքվե, կիրառման չդրվեցին Թիֆլիսի կողմից ընդունված մի շարք չարաբաստիկ օրենքներ:

1990-ական թվականների վերջերից Վրաստանն անցավ նոր մարտավարության. Ջավախքում տեղի ունեցող գործընթացները սկսեցին վերահսկվել Թիֆլիսի և Երևանի կողմից փոխպայմանավորվածությամբ: Ծուռով այդ նպատակով Երևանում հիմնվեց նաև «Վիրահայերի միասնություն» հայ-վրացական ծրագիր-կառույցը: Ջավախքում գոյություն ունեցող առանց այդ էլ թույլ կազմակերպությունները, առանձին անձինք, չդիմանալով երկկենտրոն այսպիսի քաղաքականությանը, կարճ ժամանակ անց փաստացի դադարեցին գործելուց: Արդյունքում Ջավախքում իր դիրքերն արագորեն ամրապնդեց Վրաստանը: 2003 թ. հետո նոր թափով տեղական և արտասահմանյան միջոցներն ուղղելով տարածաշրջանի հայկական գործոնի թուլացմանը, «ինտեգրման» քաղաքականությունը, կարճ ժամանակում, հեղեղվեց օտարածին հարյուրավոր կազմակերպություններով: ՀՀ-ն 1998-2008 թթ. Ջավախքում գործեց ոչ թե առանձնաբար և տեղի հայության ազգային շահերից ելնելով, այլ՝ Վրաստանի հետ փոխպայմանավորված, գտնվելով նրանից կոմունիկացիոն կախվածության մեջ: Այդ ընթացքում Ջավախքում ծնունդ առած որոշ կազմակերպություններ, քաղաքական միավորումներ կա՛մ չունեցան գործընթացների շարունակական ընթացք, կա՛մ ճնշվեցին Թիֆլիսի կողմից: Այսպիսով՝ ներկայումս Ջավախքում քաղաքական գործընթացների վակուում է, այնտեղ ամբողջովին Վրաստանն է՝ իր բոլոր ուժերով, պետական մեխանիզմներով ու ինստիտուտներով: Հատուկենտ հայկական կազմակերպությունների գործունեությունը սահմանափակվում է միայն այս կամ այն խնդրի մասին արված հայտարարություններով:

Այս ամենին զուգահեռ՝ Ջավախքում ներկայումս տեղի է ունենում մեկ այլ՝ այսպես կոչված «անցումային» գործընթաց: Մինչ սրան անդրադառնալը հարկ ենք համարում բերել որոշ վիճակագրական տվյալ-

ներ. ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից հրապարակված թվերի համաձայն՝ մինչ այժմ Ջավախքի 6 նախկին շրջանների տարածքում (բացառյալ Ծալկան) գործում էին շուրջ 152 ոչ կառավարական կազմակերպություններ (ՈԿԿ) (Ախալցխայի քաղաքապետարան՝ 77, Ախալքալաքի քաղաքապետարան՝ 23, Ասպինձայի քաղաքապետարան՝ 9, Բորժոմի քաղաքապետարան՝ 15, Ադիգենի քաղաքապետարան՝ 14, Նինոծմինդայի քաղաքապետարան՝ 14): Այս ՈԿԿ-ների տեղաբաշխումն ու թվային անհամաչափությունն արդեն իսկ ինչ-որ բան հուշում է (հմմտ.՝ համապատասխանաբար 46.134 և 60.975 բնակչություն (2002 թ.) ունեցող Ախալցխայի և Ախալքալաքի քաղաքապետարաններում՝ մունիցիպալիտետներում,- խոսքը խորհրդային ժամանակահատվածի «շրջան» վարչատարածքային հասկացության մասին է,- գործում են համապատասխանաբար 77 և 23 ՈԿԿ-ներ): Անհամաչափ է նաև ՈԿԿ-ների ազգային պատկանելությունը. 28.473 (62%) վրացի և 16.879 (37%) (2002 թ.) հայ բնակչություն ունեցող Ախալցխայի քաղաքապետարանում գործող 77 ՈԿԿ-ներից հայկական են ընդամենը 8-ը (այս 8 կազմակերպություններից 2-ը՝ Ախալցխայի երիտասարդական կենտրոնը և «Շառլ Ազնավուր» բարեգործական կազմակերպությունը, որոնց ղեկավարները ձերբակալված են 2009 թ. սկզբից, ներկայումս գտնվում են խիստ վերահսկողության տակ):

Հետաքրքրական է, որ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից 2004 թ. իրականացված ուսումնասիրության համաձայն՝ Սամցխե-Ջավախքում գրանցված էին 236 ոչ կառավարական կազմակերպություններ, որոնցից 96-ը Ախալցխայի շրջանում, 34-ը՝ Ադիգենում, 21-ը՝ Ասպինձայում, 42-ը՝ Բորժոմում, 32-ը՝ Ախալքալաքում և 11-ը՝ Նինոծմինդայում (Samtskhe-Javakheti: Realities and Perspectives. UNDP: Tbilisi, 2004, p. 53): Եթե բաղդատենք այս թվերը, պարզ կդառնա, որ այսօրվա դրությամբ ՈԿԿ-ների թվաքանակը նվազել է 84-ով՝ 236-ից հասնելով 152-ի:

Ջավախքում անհամեմատ թույլ է զարգացած հայկական ՈԿԿ-ների դաշտը, դրան հակառակ՝ հատկապես վրացականացված հատվածներում (Սամցխե- Ախալցխա) անհամեմատ աճել է վրացական ՈԿԿ-ների թիվը: Ախալքալաք-Նինոծմինդայի հատվածի՝ թվով քիչ թե շատ առավելություն ունեցող հայկական ՈԿԿ-ներն, իրենց հերթին, սնվելով մեծամասամբ վրացական կամ Թիֆլիսի կողմից ուղղորդվող միջազգային դրամաշնորհներից, գործում են սոցիալական, տնտեսական ոլորտներում: Քաղաքացիական հասարակությանն առնչվող որոշ ՈԿԿ-ների գործառույթների հիմքում ընկած է տարածաշրջանը Վրաստանին ինտեգրելու հանգամանքը: ՀՀ-ի կողմից աջակցություն ստացող հատուկենտ ՈԿԿ-ներ գործում են խիստ սահմանափակ և Վրաստանի ՆԳՆ համապատասխան մարմինների կողմից վերահսկվող դաշտում: Փաստորեն՝ Ջավախքում ՈԿԿ-ների մեծ մասը վրացական է, հայկական ՈԿԿ-ները թույլ են, չունեն գործունեության անկախություն և ազատ դաշտ և հիմնականում ի սկզբանե դատապարտված են ծառայելու ոչ թե ազգաբնակչությանը, այլ՝ Թիֆլիսին, իսկ Թիֆլիսի շահերը, ցավոք, միշտ չէ, որ համընկնում են ջավախահայության ազգային շահերին: Ջավախքի հայության ազգային շահերը պաշտպանող հատուկենտ ՈԿԿ-ները չեն կարող ազդել իրադրության վրա, և կարելի է եզրակացնել, որ տարածաշրջանն ամբողջովին հայտնվել է վրացական կամ վրացամետ կազմակերպությունների գործունեության դաշտում:

2003 թ. ստեղծվեց Սամցխե-Ջավախքի և Քվեմո Քարթլիի հայկական հասարակական կազմակերպությունների խորհուրդը, որը գործում է մինչ օրս: Այս կազմակերպության մեջ, բացի Սամցխե-Ջավախքի հասարակական կազմակերպություններից, փաստորեն, ընդգրկված են նաև Քվեմո Քարթլի նահանգի կազմում գտնվող Ծալկայի հայկական հասարակական կազմակերպությունները: Տվյալ խորհրդի կազմում, փաստորեն, փորձ արվեց միավորել Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանում մինչ այդ առանձնաբար գործող հայկական կազմակերպությունները: Այդ կազմակերպություններից մի քանիսը, այնուամենայնիվ, գործում են շատ թույլ, իսկ մեծամասնությունը գոյություն ունի միայն անվանապես, և այստեղ է, որ ՀՀ-ն և հայկական սփյուռքը պետք է ներդնեն իրենց ջանքերը՝ ուժեղացնելու վերջիններս: Ստորև ներկայացնում ենք այդ (Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանում գործող) հասարակական կազմակերպությունները (տվյալները մեզ է տրամադրել Սամցխե- Ջավախքի և Քվեմո-Քարթլիի հայկական հասարակական կազմակերպությունների խորհրդի ներկայացուցիչ, A-info լրատվական գործակալության (կայ-

քէջ՝ www.a-info.org) տնօրեն Արտակ Գաբրիելյանը).

1. «Ակունք» միություն:
2. «Ա-ինֆո» լրատվական գործակալություն:
3. «Ջավախք» ժողովրդական շարժում:
4. «Վիրք» կուսակցություն:
5. «Ջավախքի մտավորականների միություն» հասարակական կազմակերպություն:
6. «Մտավոր երիտասարդական» հասարակական կազմակերպություն:
7. «Լեռնաշխարհ» միություն:
8. Ջավախքի երիտասարդական մարզամշակութային միություն (ՋԵՄՄ):
9. «Ծաղ Ազնավուր» բարեգործական միություն:
«Հայ ազգային հասարակական միություն» հասարակական կազմակերպություն:
10. «Կարմրավանք» հասարակական կազմակերպություն:
11. Ջավախքի հայ գրողների միություն:
12. Ջավախքի գրողների միություն:
13. Հայ օգնության միության մեկուսի վարչություն:
14. Հայ մարմնակրթական ընդհանուր միություն (ՀՄԸՄ):
15. «Տաքածղոտի» միություն:
16. Եկեղեցական միություն:
17. Ազատամարտիկ վետերանների խորհուրդ:
18. «Ջավախք» հասարակական կազմակերպություն:
19. Երիտասարդական միություն:
20. «Զորի Զորյան» երիտասարդական միություն:
21. «Օդա» միություն:
22. «Ազավղեք» միություն:
23. «Դամալա» միություն:
24. «Գանձա» միություն:
25. «Հարավային Դարբաս» քեբք:
26. «Դեմոկրատ մեխերի միություն» հասարակական կազմակերպություն:
27. «Փարվանա» հեռուստատեսություն:
28. Վրաստանի Ներքին գործերի նախարարության Սամցխե-Ջավախքի վետերանների միություն:
29. ATV-12 հեռուստատեսություն:
30. «Դանտիստ» միություն:
31. «Կարծախ» ֆերմերների միություն:

2005 թ. օգոստոսի 23-ին, Փոքրամասնությունների հարցերի եվրոպական կենտրոնի (European Center for Minority Issues, ECMI) հետ համագործակցաբար, ստեղծվեց Ջավախքի քաղաքացիական ֆորումը (ՋՔՖ), որի նպատակներից է քննարկումների, կլոր սեղանների միջոցով օգնել լուծելու հետևյալ ոլորտներում առկա հիմնախնդիրները.

- գյուղական հասարակություն,
- ենթակառուցվածքներ,
- երիտասարդություն,
- էթնիկ հայերի ապագա կարգավիճակը Վրաստանում:

Սրանով փորձ էր արվում միավորել Ախալքալաքի և Նինոծմինդայի մունիցիպալիտետների տարածքում գործող ՌԿԿ-ները: Ներկայումս ՋՔՖ-ն հատուկ պայմանագրով համագործակցում է Ախալքալաքի մունիցիպալիտետի վարչության հետ: Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ նախորդ շրջանում (2003 թ.) արդեն կար նման գործառույթներով մի կառույց՝ Սամցխե-Ջավախքի և Քվեմո Քարթլիի հայկական հասարակական կազմակերպությունների խորհուրդը, որն անկախ էր վրացական իշխանություններից և գործում էր՝ ելնելով բացառապես հայկական շահերից, ապա պարզ՛կդառնա, որ վրացական իշխանությունների ակտիվ միջամտությամբ ստեղծված այս կառույցը, փաստորեն, Սամցխե-Ջավախքի և Քվեմո Քարթլիի հայկական հասարակական կազմակերպությունների խորհրդի վրացական հակակշիռն է:

Այժմ խոսենք վերոնշյալ «անցումային» իրողության մասին: Ինչպես արդեն տեսանք, Ջավախքի ՌԿԿ-ների ջախջախիչ մեծամասնությունը վրացական ուղղվածություն ունի և միտված է ինտեգրման քողի տակ տարածաշրջանում տարածելու վրացական քարքերը, մշակութային-քաղաքական մի շարք տարրեր և այլն: Անգամ միջազգային բոլոր կազմակերպությունների ներկայացվածությունը Ջավախքում միանգամայն պայմանավորված է թիֆլիսյան տրամադրություններով, ինչը նույնպես ուղղորդվում է Թիֆլիսի կողմից և կատարում վերջինիս քաղաքական կամքը: Ժողովրդավարության ջատագով այդ կազմակերպություններն մինչ օրս չեն արձագանքել Ջավախքում տեղի ունեցած թիֆլիսյան մի ամբողջ շարք խտրական գործողություններից: Փաստորեն Ջավախքում գործում է վրացական ուղղվածության տեղական և միջազգային կազմակերպությունների մի ամբողջ համակարգ և այդ համակարգի վրա ծախսվում են ահռելի գումարներ: Նշենք, որ ՌԿԿ-ների միջոցով, ինտեգրացիայի շղարշի տակ, Ջավախքի



Կարծախ

վրացականացման այդ քաղաքականությունը (որի մյուս հզոր մեխանիզմը կրոնականն է) հաջողությունների է հանգեցրել տարածաշրջանի Սամցխեի հատվածում (Ախալցխայի գավառ): ՈԿԿ-ներն այստեղ, պետական, գիտա-ուսումնական և մշակութային այլևայլ հաստատությունների հետ համագործակցությամբ, առանձնահատուկ աշխուժություն են հաղորդում Ախալցխայի քաղաքական կյանքին: Հայկականությունն Ախալցխայում վաղուց գտնվում է վրացական գործոնի ստվերում:

Ախալքալաքում ևս ՈԿԿ-ների ստեղծման և գործունեության հիմնական ոլորտը նույնն է, ինչ Ախալցխայում: Սակայն, ի տարբերություն Ախալցխայի, Ախալքալաքի հատվածը դեռևս ունի դիմադրողականության մեծ, սակայն արագորեն սպառվող պաշար: Այստեղ դեռևս իր դերն է խաղում հայկական տարրի գերակայությունը: Ահա այստեղ է, որ խոսք է գնում որոշ «անցումային» խաղի մասին: Բանն այն է, որ այստեղ վրացամետ ՈԿԿ-ները, դրսևորելով անկարողություն, սպառելով իրենց, կամաց-կամաց լքում են ասպարեզը՝ Ջավախքի վրացականացման գործում զիջելով իրենց տեղը այլ մեխանիզմների: «Վրաց լեզվի ուսուցման հանրակրթական բոլոր նախագծերն անիմաստ ստացվեցին: Գիտեմ, թե 20 տարվա ընթացքում որքան փող է ներդրվել այդ նախագծերում, իսկ արդյունքները՝ չկան...»,- նշում է Վերաինտեգրման հարցերով Վրաստանի պետական նախարարի տեղակալ Ելենե Թևդորաձեն՝ խոսելով ՈԿԿ-ների ջավախքյան գործունեության մասին (22.06.2009 թ.):

Վրաստանը Ջավախքի Ախալքալաքի հատվածում անցել է նոր, առավել հզոր քաղաքական նախաձեռնության, որը կարելի է անվանել փուլային: Այս դեպքում «ինտեգրումը» իրականացվելու է հաջորդական փուլերով, սկզբնական շրջանում նախատեսելով Ջավախքի խպառ մեկուսացումը հայկական հոգևոր-մշակութային միասնական համակարգից: Փորձարկելով Ախալցխայի «օրինակը» և չհասնելով ակնկալվող հաջողության, Վրաստանը, փաստորեն, Ախալքալաքը յուրացնելու փուլային քաղաքականության շրջանակում ներկայումս գործի է դրել պետական ողջ մեքենան՝ առաջնահերթությունը տալով տեղի հայության միջից ազգային ինքնագիտակցության վերացմանը: Իսկ «անգիտակից» հայությունն այլևս ոչ մի վտանգ չի կարող ներկայացնել և վերջինիս ձուլումը, Վրաստանի այլ տարածաշրջանների հայության օրինակով, անհամեմատ կհեշտանա: Այս քաղաքականության ուղղակի ապացույցներն են Ջավախքի տարածք գիրք-գրականության անցկացման, ՀՀ-ից դասագրքերի ներմուծման և կիրառման արգելումը դպրոցներում, տնօրենների պաշտոնազրկումը, ՀՀ-ում ուսուցիչների վերապատրաստման արգելումը, քաղաքական և ազգային գործիչների նկատմամբ իրականացվող բռնաճնշումներն ու ձերբակալությունները, որոշ քաղաքական գործիչների Ջավախք մուտք գործելու արգելքը և այլն:

Սրանով Վրաստանը Ջավախքի ուղղությամբ անցնում է նոր հարձակման, որին ՀՀ ներկա իշխանությունները, ելնելով ինչպես «ավանդական» դիրքորոշումից, այնպես էլ՝ հատկապես Թուրքիայի հանդեպ ներկայիս քաղաքականությունից, դժվար թե պատասխանեն: Իսկ ՀՀ նախագահի վերջին՝ Ջավախքում հայերենի՝ տարածաշրջանային լեզվի կարգավիճակի վերաբերյալ հայտարարությունը, որն այդպես էլ չունեցավ շարունակություն, է՛լ առավել զարկ տվեց Վրաստանի վերոնշյալ փուլային քաղաքականությանը:

# Հայերը «Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմը 1941-1945 թթ.» հանրագիտարանում

Հրանտ Ղազարյան

Հայրենական մեծ պատերազմում հազարավոր հայեր են մասնակցել գերմանական ֆաշիզմի դեմ մղած մարտերին և մեծ ավանդ ներդրել նացիզմի ջախջախման գործում: Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում հայերի մասնակցությունը բացառիկ է եղել: Այդ բացառիկ մասնակիցները տեղ են գտել Խորհրդային Միության «Հայրենական մեծ պատերազմը 1941-1945 թթ.» հանրագիտարանի մեջ: Բայց ոչ բոլորը:

Անտեսվածները հետևանք են հանրագիտարանը կազմողների դոգմատիկ մտածողության: Եթե Հեյդար Ալիևը, ասենք, պատերազմի ժամանակ աշխատել է Նախիջևանի ինքնավար հանրապետության ժողկոմխորհի բաժնում և մտել Հայրենական պատերազմի հանրագիտարանի մեջ, իսկ Շևարդնաձեն ոչ մի մասնակցություն չի ունեցել Հայրենական պատերազմին, բայց մտել է Հայրենական պատերազմի հանրագիտարանի մեջ, ապա լուրջ չէ Հայրենական պատերազմի հանրագիտարանից դուրս թողնել Հայաստանի կոմկուսի առաջին քարտուղար Գրիգորի Արտյոմի Հարությունյանին, պատերազմի Բելոռուսական առաջին ռազմաճակատի քաղբաժնի պետ՝ գեներալ-լեյտենանտ Գալաջևին, Բեռլին մտած միակ ազգային դիվիզիայի հրամանատար Նվեր Սաֆարյանին, պատերազմի ժամանակընթացքում Էրմիտաժի տնօրեն՝ ակադեմիկոս Հովսեփ Օրբելուն, ով Նյուրնբերգի դատավարության ժամանակ բացահայտեց գերմանական բարբարոսների դեմքը:



Հովսեփ և Լևոն Օրբելիներ

Հանրագիտարանում հանգամանորեն ներկայացված են բազմաթիվ այլ զորապետներ, կոնստրուկտորներ, ռազմական արդյունաբերության խոշոր կազմակերպիչներ, բանաստեղծներ և ուրիշներ: Ըստ երևույթին, ճիշտ կլինի, որ Հայաստանի ու հայերի հետ կապված հասկացությունները ներկայացնենք այբբենական կարգով, հարազատ մնալով հանրագիտարանը կազմողների սկզբունքին:

Հանրագիտարանում առաջին հայը, որ հիշատակվում է առանձին հոդվածով, ճարտարապետ Կարո Սիմոնի Հալաբյանն է, ով ծնվել է 1897 թվականին, մահացել 1959-ին: 18 տարի զբաղեցրել է Խորհրդային ճարտարապետների միության պատասխանատու քարտուղարի պաշտոնը: Կարո Հալաբյանը կոմունիստ էր 1917 թվականից: Նա ավարտել է Մոսկվայի բարձրագույն գեղարվեստական տեխնիկական ինստիտուտը; Պատերազմի տարիներին մասնակցել է Մոսկվայի կարևորագույն արդյունաբերական օբյեկտների քողարկմանը, եղել է ԽՍՀՄ ճարտարապետների ակադեմիայի շատ կարևոր ճարտարապետական օբյեկտի ղեկավար: Հետպատերազմյան տարիներին զբաղվել է ավերված հուշարձանների հաշվառմամբ ու պահպանմամբ, եղել է Խորհրդային Միության ճարտարապետական կառույցների վերականգնման հանձնաժողովի նախագահ: 1943-1945 թթ. ղեկավարել է Ստալինգրադի վերականգնման ու զարգացման մշակումները: 1937-1950 թթ. եղել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր, պարգևատրվել է բազմաթիվ շքանշաններով:

Հանրագիտարանում պատշաճ տեղ է հատկացված Ստեփան Հակոբի Ակոբովին: Այսօր հայկական միջավայրում Ակոբովը համարյա մոռացված անձնավորություն է, բայց այդ մոռացված անձնավորությունը շատ մեծ ու պատասխանատու պաշտոններ է զբաղեցրել ԽՍՀՄ կառավարության կազմում: Ավարտել է Բաումանի անվան ինստիտուտը: 1937 թ. նշանակվել է «Ուրալմաշի» տնօրեն, 1939 թ. ԽՍՀՄ ծանր արդյունաբերության ժողկոմի առաջին տեղակալն էր, 1940թ.՝ ԽՍՀՄ միջին մեքենաշինության ժողկոմի տեղակալ, իսկ 1941-1946 թթ.՝ ԽՍՀՄ միջին մեքենաշինության ժողկոմը: Այդ անորոշ «միջին մեքենաշինություն» հասկացությունը իր մեջ ներառում էր Խորհրդային Միության ատոմային ու միջուկային հզորությունը: 1946 թ. դառնում է Խորհրդային Միության ավտոմոբիլային ու տրակտորային արդյունաբերության նախարար, իսկ այնուհետև՝ ավտոմոբիլային, տրակտորային և գյուղատնտեսական մեքենաշինության նախարարի տեղակալ: Պարգևատրվել է Լենինի երեք շքանշանով, ԽՍՀՄ պաշտպանությանը մատուցած ծառայությունների համար՝ Կուտուզովի 1-ին աստիճանի շքանշանով: Ակոբովը հայ ժողովրդի պայծառանուն զավակներից է: Հույս կա, որ մի օր հայ ժողովուրդը, երբ սկսի ի մի բերել իր զավակներին, ապա նրանց թվում կլինի նաև անզու-



Համազասպ Բաբաջանյան

զական Ստեփան Ակոբովի անունը:

Հանրագիտարանում հիշատակվում է Խորհրդային Միության զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Համազասպ Խաչատուրի Բաբաջանյանը: Հայ զորավարական արվեստի պատմության մեջ իրենց ուրույն տեղն ունեն զրահատանկային զորքերը: 1930-ական թվականների սկզբին Խորհրդային Միության զրահատանկային զորքերում բարձր պաշտոն է զբաղեցնում Բաքվի 26 կոմիսարների առաջնորդ Ստեփան Շահումյանի որդին՝ Սուրեն Շահումյանը: Երկար ժամանակ ՀԽՍՀ ռազմական կոմիսարն էր նախկին տանկիստ՝ գեներալ-մայոր Աշոտ Ղազարյանը, իսկ ինչ վերաբերում է Բաբաջանյանին, նա զրահատանկային զորքերի գլխավոր մարշալն էր: Ավարտել էր Ֆրունզեի անվան ակադեմիայի արագացված դասընթացները 1942 թ., իսկ 1948 թ.՝ գլխավոր շտաբի ակադեմիան: 1941 թ. հունիսից եղել է հրաձգային գնդի հրամանատար, 1942-1944 թթ.՝ մեքենայացված բրիգադի հրամանատար, 1944-1945 թթ.՝ 11-րդ գվարդիական տանկային կորպուսի հրամանատար: Մասնակցել է Մոսկվայի և Կուրսկի ճակատամարտերին և այլ օպերացիաների, այդ թվում՝ Բեռլինի գրավմանը: Հետպատերազմյան շրջանում ղեկավարել է Խորհրդային Միության զրահատանկային ակադեմիան, 1969-1977 թթ.՝ խորհրդային բանակի տանկային զորամասերի պետ էր: Բաբաջանյանը Խորհրդային Միության հերոս է, պարգևատրվել է Լենինի 4 շքանշանով, մարտական Կարմիր դրոշի 4 շքանշանով, Սուվորովի 1-ին և 2-րդ աստիճանի, Կուտուզովի 1-ին աստիճանի շքանշաններով: Բաբաջանյանը ծնվել է Շամխորի շրջանի Չարդախլու գյուղում և հաճախ այցելում էր հայրենի գյուղը: Հայրենակիցները մեծ սիրով էին ընդունում Հայրենական պատերազմի փառապանծ հերոս, զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Համազասպ Խաչատուրի Բաբաջանյանին: Բաբաջանյանը սերունդներին է թողել իր պայծառ անունը և մի հիանալի հուշագիրք, որը կոչվում է «Պատերազմի ճանապարհները»: Բաբաջանյանը ոչ միայն խոշոր պրակտիկ էր, այլև՝ տեսաբան: Որքան էլ որ Խորհրդային Միության մարշալ Ժուկովի ռազմական հեղինակությունը բարձր լիներ, Բաբաջանյանն առանց քաշվելու, առանց Ժուկովի հեղինակությունից ճնշվելու, Ժուկովի կենդանության օրոք քննադատեց Բեռլինի օպերացիայի ժամանակ տանկային զորքերի օգտագործման բնագավառում Ժուկովի թույլ տված սխալները:

Հայ ժողովրդի զորավարական մտքի գագաթը Խորհրդային Միության մարշալ Իվան Քրիստափորի Բաղրամյանն է: Հանրագիտարանում մարշալ Բաղրամյանին պատշաճ տեղ է հատկացված: Բաղրամյանը ծնվել է 1897 թ. դեկտեմբերի 2-ին Գանձակում, երկաթուղայինի ընտանիքում: Մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին, Սարդարապատի պատերազմին, Հայաստանում և Վրաստանում խորհրդային կարգերի հաստատման գործընթացներին, այնուհետև ծառայել է Կարմիր բանակում: Բաղրամյանը 1934 թ. ավարտել է Ֆրունզեի անվան ակադեմիան, իսկ 1938 թ.՝ Գլխավոր շտաբի ռազմական ակադեմիան: Բաղրամյանը 1940 թվականից սկսել է ծառայել Կիևի հատուկ ռազմական օկրուգում, սկզբում՝ որպես բանակի շտաբի օպերատիվ բաժնի պետ: 1941 թվականի հուլիսից գնդապետ էր: Սկսվում է Հայրենական մեծ պատերազմը, և պատերազմի հենց սկզբից Բաղրամյանն անմիջապես մասնակցություն է ունենում ռազմական գործողություններին: Սկզբում հատուկ արևմտյան ռազմաճակատի շտաբի պետի տեղակալ և օպերատիվ բաժնի պետ, այնուհետև՝ նույն ռազմաճակատի շտաբի պետ, միաժամանակ գլխավորել է հարավ-արևմտյան զորքերի շտաբը: 61-րդ բանակի հրամանատարի տեղակալն էր, որից հետո նշանակվեց 16-րդ (11-րդ գվարդիական) բանակի հրամանատար: Բաղրամյանն իրեն փայլուն է դրսևորել Կուրսկի ճակատամարտում, և գուցե դրա շնորհիվ 1943 թ. նոյեմբերին Բաղրամյանը առաջ է քաշվում և նշանակվում որպես 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի հրամանատար: Չնայած Մերձբալթիկայի հատուկ տեղանքային և կլիմայական պայմաններին, այստեղ էլ դրսևորվում են Բաղրամյանի ռազմական փայլուն ընդունակությունները Ռիգայի, Արևելյան Պրուսիայի և այլ օպերացիաներում: Պատերազմի ավարտից հետո Ի. Ք. Բաղրամյանը նշանակվում է Խորհրդային Միության ամենակարևոր ռազմական օկրուգներից մեկի՝ Մերձբալթյան ռազմական օկրուգի հրամանատար: Այդ պաշտոնում Բաղրամյանը մնում է մինչև 1954 թվականը: Բաղրամյանը, շատ ուշացումով, 1955 թվականին ստանում է Խորհրդային Միության մարշալի կոչում: Այնուհետև դառնում է Խորհրդային բանակի գլխավոր տեսուչ, հետո էլ՝ Խորհրդային բանակի Գլխավոր շտաբի ռազմական ակադեմիայի պետ և, վերջապես, Խորհրդային Միության զինված ուժերի նախարարի տեղակալ և Պաշտպանության նախարարության թիկունքի պետ:

Դեպքերի բերումով, ես՝ որպես «Հայաստան» հրատարակչության տնօրեն, մոտիկից ծանոթացա իմ հայրենակից, Խորհրդային Միության մարշալ Բաղրամյանի հետ: Ծանոթության առիթը նրա «Իմ հուշերը» գրքի հրատարակությունն էր Հայաստանում: Մարշալ Բաղրամյանը հրատարակվելու պրոբլեմ բնավ չուներ, դեռ ձեռագրի թանաքը չչորացած՝ այս կամ այն հրատարակիչը ձեռնամուխ էր լինում Բաղրամյանին հրատարակելու, և ոչ միայն ԽՍՀՄ-ում, այլև՝ արտասահմանում: Մինչև «Իմ հուշերը» գրքի հրատարակումը, մարշալ Բաղրամյանը հրատարակել էր «Հերոս քաղաք Դնեպրի ափին», «Այսպես



Հովհաննես Բաղրամյան

սկսվեց պատերազմը», «Այսպես հասանք հաղթանակի» և այլ գրքեր, ինչպես նաև բազմաթիվ գիտական ու ճանաչողական արժեք ունեցող հոդվածներ:

Հարց է ծագում՝ ինչո՞ւ «Իմ հուշերը» բախտ վիճակվեց հրատարակելու «Հայաստան» հրատարակչությանը: Ամբողջ խնդիրն այն էր, որ այդ գրքի մի պատկառելի հատված նվիրված էր Հայաստանին, հայոց ազգային ազատագրական պայքարի գործիչներին, մասնավորապես՝ հայ ազգային հերոս Անդրանիկին, ինչը «համահունչ չէր» «Իմ հուշերը» գրքի հիմնական բովանդակությանը: Հայաստանի Կենտկոմի 1-ին քարտուղար Կարեն Դեմիրճյանը և կառավարության նախագահ Ֆադեյ Սարգսյանը համաձայնել էին, որ «Իմ հուշերը» հրատարակվի Հայաստանում: Ես ստացա հանձնարարություն անմիջապես կազմակերպելու գրքի հրատարակությունը: Հրատարակչության աշխատակազմը, իսկ այնուհետև՝ Պոլիգրաֆկոմբինատի աշխատողները մեծ ոգևորությամբ մասնակցեցին գրքի տպագրման գործին: Կարճ ժամանակամիջոցում գիրքը խմբագրվեց, ձևավորվեց և պատրաստ էր տպագրության, սակայն հանկարծ պարզվեց, որ առաջացել է թղթի պրոբլեմ: Երբ Բաղրամյանը հարցրեց ինձ, թե «ինչպես է գրքիս վիճակը», ես պատասխանեցի, որ ամեն ինչ պատրաստ է, սակայն առաջացել է թղթի պրոբլեմ: Այն հարցին, թե ո՞վ կարող էր լուծել այդ պրոբլեմը, ես ասացի. «Նախարարների խորհրդի առաջին տեղակալ Ալեքսան Կիրակոսյանը»: Մի ժամ չանցած՝ ես Ալեքսան Կիրակոսյանի աշխատասենյակում էի: Լսելով ինձ՝ գրքի վիճակի մասին, նա ասաց, որ նախարարների խորհրդի վերջին 50 տոննա պահուստային թուղթը կարող ենք տանել կոմբինատ, իսկ մյուս 50 տոննան կստանանք եռամսյակի վերջին: Ավելի օպերատիվ լուծում, Բաղրամյանին ավելի արժանի լուծում անհնար էր ակնկալել: Գիրքը տպագրվեց և 100.000 տպաքանակով հանձնվեց ընթերցողներին:

Հանրագիտարանում պատշաճ տեղ է հատկացված ռազմական արդյունաբերության հզոր կազմակերպիչ Սուրեն Իվանովիչ Աղաջանովին: Նա ծնվել է 1905 թ. և մահացել 1952 թ., ապրել է ընդամենը 47 տարի: Եղել է Նիժնի Նովգորոդի ավիացիոն գործարանի տնօրեն: Ստացել է լուրջ տեխնիկական, ռազմական կրթություն: 1931 թ. մինչև 1941 թ. եղել է թիվ 1 ավիացիոն գործարանի արտադրության պետ, 1941 թ. մինչև 1942 թ. եղել է թիվ 31 ավիացիոն գործարանի տնօրեն: Պատերազմի տարիներին Աղաջանովի ղեկավարությամբ Գորկու անվան ավիացիոն գործարանը յուրացրել է նոր տեսակի կործանիչների՝ ԼԱ-5, ԼԱ-7, ԼԱ-9 ինքնաթիռների արտադրությունը: Ամբողջ պատերազմի ընթացքում վերակառուցել ու վերակազմակերպել է արտադրությունը, որը հնարավորություն է տվել ավելացնելու ինքնաթիռների թողարկումը: Ստեղծել է նոր արտադրություն ու արտադրամասեր, վերահսկողական լաբորատորիաներ, մասնագիտացված կառուցվածքային ենթակառույցներ: Պարգևատրվել է Լենինի երկու շքանշանով, Կուտուզովի առաջին աստիճանի, «Կարմիր աստղ» շքանշանով: Այս համեստ տողերը չեն կարող ներկայացնել այն ամենի ամբողջական պատկերը, որ իրականացրել է Սուրեն Աղաջանովը հայրենական ավիաարդյունաբերության բնագավառում, բայց ասվածն էլ, ինչպես նաև հանրագիտարանում ընդգրկվելը, խոսում է այն մասին, որ հանձինս վաղամեռիկ Սուրեն Աղաջանովի, խորհրդային ավիացիոն արդյունաբերությունը ունեցել է հրաշալի մարդու, ով ընդմիշտ մնել է ԽՍՀՄ ավիաարդյունաբերության պատմության մեջ:

Ավիաարդյունաբերության ասպարեզում Սուրեն Աղաջանովը, իսկ հրետանային արտադրության ասպարեզում՝ Համո Սերգոյի Յոլյանը նշանակալի տեղ են զբաղեցրել: Համո Յոլյանը ծնվել է 1903 թ.: Պատերազմի տարիներին եղել է տեխնիկական ու տնտեսական խոշոր գործիչ, հրետանային գործարանի տնօրեն: 1943 թ. արժանացել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման: 1923 թ. սովորել և ավարտել է Ադրբեջանի պոլիտեխնիկական ինստիտուտը: 1930-ական թթ.-ից անցել է տնտեսական աշխատանքի, 1954 թ. նշանակվել է ԽՍՀՄ պաշտպանական արդյունաբերության նախարարի տեղակալ: Պատերազմի տարիներին մեծ ներդրում է ունեցել հրետանային զենքի արտադրության գործում: Յոլյանի ղեկավարած գործարանը անցել է հոսքագծային համակարգի: 1942 թ. վերջին, համեմատած 1941 թ. հետ, մեքենահավաքման մի բանվորի արտադրանքը մոտ վեց անգամ ավելացել է: Հիմնական արտադրանքի ինքնարժեքը իջել է 53-57 տոկոսով: 1943 թ. հունիսին Յոլյանի ղեկավարած գործարանում հոսքագծից իջել է 100.000-րդ (պատերազմի սկզբից) հրանոթը: Յոլյանը Պետական մրցանակի քառակի դափնեկիր է: Արժանացել է 4 Լենինի շքանշանի, Սուվորովի 1-ին աստիճանի շքանշանի, 2 Մարտական Կարմիր դրոշի շքանշանի և այլ շքանշանների: Վաղուց է լռել Հայրենական պատերազմում հաղթանակ բերած Համո Յոլյանի արտադրած թնդանոթների ձայնը, այլևս չեն թռչում ԼԱ-5, ԼԱ-7, ԼԱ-9 ինքնաթիռները, բայց Մեծ հայրենականի պատմության մեջ մնացել են հայ ժողովրդի իմաստուն զավակներ՝ Աղաջանովը և Յոլյանը, որոնց ավանդույթներով պետք է դաստիարակվեն այսօրվա հայ ռազմաճարտարները:

Հանրագիտարանում բացակայում են գեներալ-լեյտենանտ Գալաջևին (Հալաջյան Սերգեյ Թեոդորոսի) և Ալիխանովին (Աբրահամ Իսահակի) նվիրված առանձին հոդվածները: Այդ ինչո՞ւ պատահեց, որ Ալիխանովի հետ աշխատած մարդկանց՝ Կուրչատովի, Զելդովիչի և

Կապիցայի անունները առանձին հոդվածներով տեղ են գտել հանրագիտարանում, իսկ Ալիխանովի համար տեղ չի գտնվել:

Ալիխանովը (Աբրահամ Իսահակի, 1904 թ., Թիֆլիս – 08.12.1970 թ., Մոսկվա) հայ խորհրդային ֆիզիկոս է, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (1937 թ.), ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս (1943 թ.), ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս (1943 թ.), Սոցիալիստական աշխատանքի հերոս (1954 թ.): Ավարտել է Լենինգրադի պոլիտեխնիկական ինստիտուտը (1929 թ.), 1945 թ. հիմնադրել է ԽՍՀՄ ԳԱ տեսական և փորձարարական ֆիզիկայի ինստիտուտը և ղեկավարել մինչև 1968 թ.: Նրա աշխատանքները վերաբերում են միջուկային ֆիզիկային, տիեզերական ճառագայթների ֆիզիկային, միջուկային ռեակտորների ֆիզիկային և տեխնիկային, արագացուցիչների տեխնիկային, տարրական մասնիկների ֆիզիկային: 1936 թ. Ալիխանյանի և Լ. Ա. Արցիմովիչի հետ փորձով հիմնավորվել է իմպուլսի պահպանման օրենքը՝ էլեկտրոն-պոզիտրոն զույգերի անիհիլացման ժամանակ: 1935 թ. Ալիխանյանը սահմանել է B-Q սպեկտրների կախումը տարրի ատոմային համարից, 1943 թ. Արագած լեռան վրա իրականացրել է տիեզերական ճառագայթների հետազոտման կայան, ֆիզիկային վերաբերող մի շարք գիտափորձեր, որոնք խթանեցին տարրական մասնիկների ֆիզիկայի զարգացումը: 1949 թ. իր աշխատակիցների հետ ստեղծել է ծանր ջրային դանդաղեցուցիչով ԽՍՀՄ-ում առաջին միջուկային ռեակտորը: Ալիխանյանը միջուկային ֆիզիկայի խորհրդային դպրոցի և ԽՍՀՄ-ում տարրական մասնիկների արագացուցիչների ստեղծման հիմնադիրներից է: Նրա նախաձեռնությամբ և ղեկավարությամբ է սկսվել (1961 թ.) Մոսկվայի յոթ ԳէՎ էներգիայով պրոտոնների կոշտ կիզակետմամբ արագացուցիչի կառուցումը, նախագծվել նաև 70 ԳէՎ էներգիայով պրոտոնային արագացուցիչը: Արժանացել է ԽՍՀՄ Պետական մրցանակների (1941, 1948, 1953 թթ.):

Ինչ վերաբերում է Խորհրդային բանակի ականավոր քաղաքական աշխատող՝ Մոսկվա-Ստալինգրադ-Կուրսկ-Բելոռուսիա-Լեհաստան-Բեռլին ուղին անցած գեներալ Գալաջևին, մոռացության կարող էին մատնել միայն խիղճը կորցրած հանրագիտայինները:

Հանրագիտարանում տեղ է հատկացված նաև Երևանին: Երևանը պատերազմի տարիներին ուներ 300 արդյունաբերական ձեռնարկություն: Պատերազմի սկզբում այդ ձեռնարկությունները հիմնականում անցան ռազմական արտադրանքի թողարկման: Ձերժինսկու անվան մեքենաշինական գործարանը արտադրում էր ականանետներ՝ ավիառումբերի և ականների կորպուսներ: Արզնու հանքային ջրերի գործարանի արհեստանոցները արտադրում էին պայթուցիչներ և հակատանկային ականներ: Ավիաարդյունաբերության գործարանը արտադրում էր Յակ-3 կործանիչների մասեր: Տեղական արդյունաբերությունը խորհրդային բանակի համար արտադրում էր զինվորական կրկնակոշիկներ, գոտիներ, ձեռնոցներ և այլն: Ամբողջության մեջ քաղաքի արդյունաբերությունը արտադրում էր 300 անուն ռազմական արտադրանք: Պատերազմի ծանր պայմաններում ոչ միայն չէր նվազում, այլև ավելանում էր արտադրանքի քանակը: Քաղաքի արդյունաբերության մեջ կապիտալ ներդրումները ավելացան մոտ 5 անգամ: Զարգացնելով սննդային արդյունաբերությունը, Երևանի սննդային ձեռնարկությունները երկրին ու ռազմաճակատին տվեցին 3700 տոննա մակարոն, 3600 տոննա բուսական յուղ, 1700 տոննա հրուշակեղեն: «Ամեն ինչ ռազմաճակատի համար» կարգախոսը դարձավ երևանցիների գլխավոր նպատակը, և նրանք փառքով արդարացրին իրենց:



Սերգեյ Հալաջյան

Հանրագիտարանում անտեսված չեն նաև ռազմաճակատի ստեղծագործական աշխատողները: Հայաստանից հանրագիտարանում ներկայացված է նշանավոր բանաստեղծ Նաիրի Զարյանը, ով պատերազմի առաջին օրվանից բանաստեղծական իր տաղանդը ի սպաս դրեց հայրենիքին, հայրենիքի պաշտպանությանը:

Ցավում եմ, որ հանրագիտարանից դուրս է մնացել Ավ. Իսահակյանը՝ հայ ժողովրդի բանաստեղծական մտքի մեծագույն արտահայտիչը: Ավ. Իսահակյանը ունի բազմաթիվ ստեղծագործություններ՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմին, որոնց համար արժանացել է Ստալինյան մրցանակի: Այսօր թերագնահատվում են այն բանաստեղծները, ովքեր իրենց գրիչը նվիրել են Հայրենական մեծ պատերազմի հերոսներին, բայց մոռանալ՝ չի նշանակում ջնջել գոյություն ունեցածը: Կգա ժամանակ, և ըստ արժանվույն կգնահատվեն այն բանաստեղծները, ովքեր երգել են մեր հայրենիքի ազատության ու անկախության մարտիկներին: Մի՞թե կմոռացվի Գեղամ Սարյանի «Կարոտ» կամ «Ահեղ լռություն է ճամփաներում», «Սերմնացանները չդարձան տուն» բանաստեղծությունները:

Հանրագիտարանում ներկայացված է ՀՀ ԳԱ անդամ Անդրանիկ Գևորգի Իոսիֆյանը: Բացառիկ համեստ և բացառիկ խելքի տեր մարդ էր: Ծնվել է 1905 թ.: Էլեկտրամեխանիկայի և ավտոմատիկայի խոշոր մասնագետ է, Սոցիալիստական աշխատանքի հերոս: 1930 թ. ավարտել է Ադրբեջանի պոլիտեխնիկական ինստիտուտը: 1941 թ. մինչև 1975 թ. (34 տարի) եղել է էլեկտրամեխանիկայի համամիութենական ինստիտուտի տնօրեն: Մի շարք ռազմատեխնիկական խոշոր նշանակություն ունեցող գյուտերի հեղինակ է: Իոսիֆյանի ղեկավարությամբ մշակվել է ցամաքային էլեկտրատորպեդների կոնստրուկցիան, որոնք

լայնորեն կիրառվել են Կերչի համար մղվող մարտերում 1944 թվականին: Իոսիֆյանը հայտնագործել է ոչ կոնտակտային սելսին, որը կիրառվել է լոկատորների մեջ: Վիթխարի է Իոսիֆյանի ներդրումը Հայրենական մեծ պատերազմում մեր տարած փայլուն հաղթանակների գործում, որի համար 1970 թ. արժանացել է մրցանակի ԽՍՀՄ-ում և Պետական մրցանակների՝ 1949-1979 թթ.: Պարգևատրվել է Լենինի 4 շքանշանով, Աշխատանքային Կարմիր դրոշի 2 շքանշանով: Իոսիֆյանը մեծ ծառայություններ է մատուցել էլեկտրոնիկայի ասպարեզում՝ Խորհրդային Հայաստանի արդյունաբերության մեջ: Դժբախտաբար Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը միշտ չէ, որ օգտվում էր Իոսիֆյանի ծառայություններից, լինում էին խանգարողներ:

Հանրագիտարանում արժանի տեղ է հատկացված Խորհրդային Միության նավատորմի ծովակալ Իսակովին: Իսակովը ոչ ծովային երկրի՝ Հայաստանի ներկայացուցիչն էր: Բացառիկ մի երևույթ: 1955 թ. մինչև 1965 թ. եղել է Խորհրդային Միության ծովային նավատորմի միակ ծովակալը: Ծնվել է 1894 թ., մինչ այժմ պարզված չէ նրա ծննդավայրը՝ Ղարսի Աջքենդ, թե՞ Գանձակի Աջքենդ: Խորհրդային Միության հերոս է 1965 թ.-ից, Խորհրդային Միության ԳԱ թղթակից անդամ: 1918 թվականից ծառայել է խորհրդային պետության ռազմական նավատորմում: Իսակովը խորհրդային պետության ռազմածովային նավատորմում հասել էր այնպիսի բարձունքների, որ խորհրդային ռազմածովային մարտիկի համար պատկերացնել հնարավոր չէ: 1937 թ. եղել է Բալթյան նավատորմի հրամանատար: 1938 թ. հունվարից և 1939-1946 թթ. եղել է ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի ժողկոմի տեղակալ: Միաժամանակ, 1938-1939 թթ. եղել է ռազմածովային ակադեմիայի պետ, իսկ 1941-1943 թթ. եղել է ռազմական նավատորմի գլխավոր շտաբի պետ: Պատերազմի սկզբում Սևծովյան նավատորմում Իսակովը ծանր վիրավորվում է և զրկվում ոտքից, և երբ ցանկանում է թողնել նավատորմը, Ստալինը ասում է, որ «մեզ ձեր գլուխն է պետք»: Ծովակալ Իսակովը խնդրում է՝ ծանր վիրավորված վիճակում, և անգամ հույս չուներ, որ կապաքինվի, իր անունով կոչել մի ռազմանավ՝ Սևծովյան նավատորմում: Ստալինը Իսակովի այդ ցանկությանը պատասխանում է, որ «ձեր անունով ռազմանավն արդեն լողում է Սև ծովում»: Ականավոր գրող Կոնստանտին Սիմոնովը պատմում էր, թե ինչպես 1930-ական թթ. մի հավաքի ժամանակ Ստալինը ծիծաղելով պատմում էր, որ Իսակովը Սախալինի հարավային հատվածն է ուզում և ասում, որ «առանց դրա խաղաղօվկիանոսյան մեր նավատորմը մկան թակարդի մեջ է»: Այդ դեպքից շատ չանցած, ոչ միայն Սախալինի հարավային մասը, այլև Կուրիլյան ամբողջ կղզիները դարձան խորհրդային:

Ապաքինվելուց և կազդուրվելուց հետո Իսակովն արդեն աշխատում էր, ավելին՝ շարունակում իր աշխատանքը Խորհրդային Միության ռազմածովային նավատորմում: 1946 թ. նշանակվում է ռազմածովային նավատորմի ակադեմիայի պետ, իսկ 1947 թ.՝ ռազմածովային նավատորմի գլխավոր հրամանատարի տեղակալ: 1956-1958 թթ. նա ծառայում է պատասխանատու պաշտոններում ԽՍՀՄ պաշտպանության նախարարությունում: 1958 թ. աշխատում է Խորհրդային Միության պաշտպանության նախարարության գլխավոր տեսչական խմբում: Այս բոլորի հետ մեկտեղ Իսակովը իր ասպարեզում հավասարը չունեցող գիտնական էր, գիտական աշխատանքների համար 1951 թ. դարձավ Ստալինյան մրցանակի դափնեկիր: Խորհրդային Միության ռազմածովային նավատորմի ծովակալ Իսակովը 1965 թ., թեև մեծ ուշացումով, արժանացավ Խորհրդային Միության հերոսի կոչման: Մինչ այդ նա պարգևատրվել էր Լենինի շքանշանով, Մարտական Կարմիր դրոշի շքանշաններով ու մեդալներով:


Ծովակալ Իսակով

Հանրագիտարանում ներկայացված է նաև հայ արձակագիր Հրաչյա Քոչարը: Ծնվել է 1910 թ., մահացել 1965 թ.: Պատերազմի ժամանակ եղել է «Սուվորովեց» թերթի զինվորական թղթակիցը և աշխատակիցը՝ Բրյանսկի և 2-րդ Մերձբալթյան ռազմաճակատներում: Պատերազմի թեմաներով գրել է մի շարք պատմվածքներ և «Մեծ տան զավակները» երկհատորյակը: Պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով:

Հանրագիտարանում ներկայացված են նաև Միկոյան եղբայրները: Բոլորովին տարբեր բնագավառների աշխատողներ, բայց հոգով ու սրտով հայրենիքին նվիրված մարդիկ: Անաստաս Իվանովիչ Միկոյանը ծնվել է 1895 թ. Լոռիում: Ականավոր կուսակցական ու պետական գործիչ է: Մասնակցել է Հոկտեմբերյան մեծ հեղափոխությանը և քաղաքացիական պատերազմին: Մինչ այդ արդեն մասնակցել էր թուրքական ռազմաճակատում Առաջին համաշխարհային պատերազմին: 1920 թ. կուսակցական ու պետական պատասխանատու պաշտոններ է վարել: 1926-1930 թթ. եղել է արտաքին ու ներքին առևտրի, սննդարդյունաբերության մատակարարման ժողկոմ: 1937 թ. մինչև 1946 թ. ԽՍՀՄ ժողկոմխորհի նախագահի տեղակալ էր: Համատեղության կարգով 1938 թ. մինչև 1946 թ.՝ արտաքին առևտրի ժողկոմ էր: Անաստաս Միկոյանը Հայրենական պատերազմի տարիներին հմտորեն կազմակերպել է բանակի մատակարարումը մի շարք կարևոր արտադրատեսակներով, ինչպես ռազմաճակատում, այնպես էլ՝ թիկունքում: 1942-1945 թթ. եղել է ԽՍՀՄ պաշտպանության պետական կոմիտեի անդամ և կատարել հայրենիքի հաղթանակի ապահովման բացառիկ ծառայություններ, այնուհետև՝ ձեռնամուխ է եղել հայրենական տնտեսության վերականգնման աշխա-



Արտյոմ Միկոյան

տանքներին: 1946 թ. մինչև 1955 թ. եղել է ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահի տեղակալ, իսկ 1955 թ. մինչև 1964 թ.՝ առաջին տեղակալ: 1964 թ. Միկոյանը ընտրվել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ, 1965 թ. անցել է կենսաթոշակի: ԽՄԿԿ 19-րդ համագումարից հետո կայացած պլենումում Ստալինը շատ խիստ արտահայտվեց Անաստաս Միկոյանի հասցեին, որից լավ հոտ չէր գալիս: Ըստ երևույթին Ստալինի մահը փրկություն էր Միկոյանի համար:

Բարի մարդու համբավ ունեցող Բրեժնևը նույնպիսի չարություն դրսևորեց Միկոյանի հանդեպ: Մի առիթով ես խնդրեցի մարշալ Բաղրամյանին, որ նա ինձ համար բացահայտի Միկոյանի նկատմամբ Բրեժնևի վատ վերաբերմունքի պատճառը: Բաղրամյանը պատմեց հետևյալը. «Նախ՝ Միկոյանը Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնում փոխարինել է Բրեժնևին, որն իհարկե վերջինիս դուր գալ չէր կարող: Այնուհետ, դեռևս Ստալինի կենդանության օրոք, Միկոյանին հանձնարարվել էր ստուգել Բրեժնևի գործունեությունը՝ կուսակցական օրգաններից մեկի ղեկավարի պաշտոնում: Միկոյանը վատ էր քննադատել Բրեժնևին: Եվ վերջապես, Միկոյանը անվտանգության օրգաններից դրածո մի քարտուղարուհի է ունենում, որը «բարեխիղճ» կերպով վերևներին էր հաղորդում Միկոյանի անզուսպ արտահայտությունները Քաղբյուրոյի ղեկավարության հասցեին»: Երբ Միկոյանը մահացավ, Խորհրդային Միության ամենաականավոր կուսակցական ու պետական գործչին «Պրավդան» քննադատեց որպես կուսակցական ու պետական աշխատող և շատ համարեց Կրեմլի պատի տակ թաղել նրան: Միկոյանին թաղեցին Նովոդևիչիե գերեզմանոցում:

Հանրագիտարանում պատշաճ տեղ է հատկացված Արտյոմ Իվանովիչ Միկոյանին (1905-1970 թթ.): Աշխարհահռչակ ավիակոնստրուկտոր, ԽՍՀՄ ԳԱ անդամ: Արտյոմ Միկոյանը Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս էր, ինժեներատեխնիկական ծառայության գեներալ-գնդապետ: 1937 թ. ավարտել է Ժուկովսկու անվան ռազմաօդային ինժեներական ակադեմիան: 1940 թ.-ից գլխավոր կոնստրուկտոր էր: Մ. Ի. Գուրևիչի հետ ստեղծել է ՄիԳ-1, ՄիԳ-3 բարձրաթռիչք կործանիչները, որոնք թռել են 12000 մետր բարձրություն, իսկ այդ բարձրության վրա արագությունը վճռական դեր է խաղացել: Պատերազմից հետո Միկոյանը ստեղծել է մի շարք լրացուցիչ կործանիչներ: 1962 թ. Լենինյան մրցանակի դափնեկիր է, 4 անգամ արժանացել է Ստալինյան մրցանակի, պարգևատրվել է Լենինի 3 շքանշանով, Սուվորովի 1-ին և 2-րդ աստիճանի շքանշաններով, ստացել է ուրիշ պարգևներ: Արտյոմ Միկոյանը համաշխարհային ավիացիոն բազմաթիվ ռեկորդների հեղինակ է: Նրա անվան կոնստրուկտորական բյուրոն այսօր էլ շատ գործերի հետ միասին զբաղված է իրականացնելու Արտյոմ Միկոյանի նախագծերը: Առհասարակ, խորհրդային հանրագիտարանների մեջ հազվագյուտ է տեղ հատկացվում նույն մասնագիտությունն ունեցող դինաստիաներին: Արժեր, որ Միկոյանների դինաստիան առանձին տեղ գտներ հանրագիտարանում: Միկոյանն ունեցել է 5 որդի, նրանցից 4-ը օդաչու էին, մեկը զոհվել էր Ստալինգրադում, մյուսը՝ Ստեփան Միկոյանը ռազմաօդային ուժերում մեծ պաշտոն է ունեցել: Հաջորդը նույնպես օդաչու էր: Հինգ որդիներից միայն մեկը՝ Սերգո Միկոյանն էր գիտնական պատմաբան:

Հանրագիտարանում մոռացության է մատնված Հայաստանի կուսկենտկոմի առաջին քարտուղար Գրիգորի Արտյոմի Հարությունյանը: Գրիգորի Հարությունյանը 17 տարի ղեկավարել է Հայաստանը: Մեծ ծառայություններ ունի Հայաստանը կառուցելու մեջ: Իզուր չէ, որ մեծն Իսահակյանը Գրիգորի Հարությունյանին անվանել է Գրիգոր Շինարար:

Թեև հայ կոմպոզիտորներից շատերն են իրենց ստեղծագործություններում արտացոլել Հայրենական մեծ պատերազմը, բայց հանրագիտարանում տեղ են գտել միայն Վանո Մուրադելին և Արամ Խաչատրյանը:

Վանո Մուրադելին ծնվել է 1908 թ.: Մահացել է 1970 թ., կոմպոզիտոր է, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ: 1932 թ. ավարտել է Թիֆլիսի կոնսերվատորիան: 1942-1944 թթ. եղել է ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի կենտրոնական անսամբլի գեղարվեստական ղեկավար: Անսամբլը հանդես է եկել ռազմաճակատներում և նավատորմներում: Գրել է «Հոկտեմբեր» օպերան, «Բուխենվալդյան Նաբաթ» երգը: 1941-1945 թթ. բազմաթիվ երգեր, ստեղծագործություններ, այդ թվում՝ «Լենինգրադի հիմնը», «Երգ հաղթանակի մասին», «Մենք կջարդենք ֆաշիստներին»: 1946-1951 թթ. արժանացել է Ստալինյան մրցանակի և Լենինի, Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշանների:

Խաչատրյան Արամ Իլյիչը ծնվել է 1903 թ. և մահացել 1978 թ.: Կոմպոզիտոր է, մանկավարժ, դիրիժոր և հասարակական գործիչ: ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, Սոցիալիստական աշխատանքի հերոս, արվեստագիտության դոկտոր (1965 թ.): Ավարտել է Մոսկվայի կոնսերվատորիան: Բալետների հեղինակ է, այդ թվում՝ «Սպարտակ», «Գայանե» և այլն: Մեծ են Արամ Խաչատրյանի ծառայությունները Խորհրդային Միության ժողովրդի համար: Արամ Խաչատրյանն իր ուժեղ դիրքն ունի համաշխարհային երաժշտության պատմության մեջ: Կոմպոզիտոր Գերշվինը Խաչատրյանին անվանել է 20-րդ դարի մեծագույն կոմպոզիտոր: Արամ Խաչատրյանը հազարավոր թելերով կապված էր Հայաստանի հետ, և պատահական չէ, որ նա ամփոփված է Հայաստանում՝ համաձայն իր կտակի:

Քիմիական գիտությունը հանրագիտարանում ներկա-

յացնողների թվում է նաև Իվան Լյուդվիգի Կնունյանցը: ԽՍՀՄ ինժեներական զորքերի գեներալ-մայոր (1953 թ.): Ավարտել է Մոսկվայի Բաումանի անվան բարձրագույն տեխնիկական ուսումնարանը (1928 թ.): 1932 թ.-ից քիմիական պաշտպանության ռազմական ակադեմիայում էր, միաժամանակ, 1938-1964 թթ.՝ ԽՍՀՄ ԳԱ օրգանական քիմիայի ինստիտուտում: Ֆտոր-օրգանական միացությունների խորհրդային դպրոցի հիմնադիրներից էր, մշակել է մոնոմերների և պոլիմերների, սառնամանիքադիմացկուն կաուչուկի, ֆիզիոլոգիական ակտիվ միացությունների ստացման մեթոդներ: Ստեղծել է նոր բժշկական դեղամիջոցներ: Լենինյան մրցանակի դափնեկիր է (1972 թ.), չորս անգամ արժանացել է Ստալինյան մրցանակի, Սոցիալիստական աշխատանքի հերոս է, պարգևատրվել է Լենինի, Հոկտեմբերյան հեղափոխության, Կարմիր դրոշի և Աշխատանքային Կարմիր դրոշի ու Կարմիր աստղի շքանշաններով: Իվան Կնունյանցը Ղարաբաղի Կնունյանցների տոհմից է:

Հայրենական պատերազմի պատմության մեջ մեծ ծառայություններ ունեն Լևոն և Աբգար Օրբելյան եղբայրները: Դժբախտաբար հանրագիտարանում առանձին հոդվածով տեղ է տրված միայն գեներալ-գնդապետ Լևոն Օրբելուն: Համաշխարհային ֆիզիոլոգիական մտքի պատմության մեջ բացառիկ է ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Լևոն Օրբելու դերը: Լևոն Օրբելին մեծ է որպես գիտնական ֆիզիոլոգ և որպես գիտնական բժիշկ: Նրա ռազմական կոչումը բժշկական գիտությունների գեներալ-գնդապետ էր: Ավարտել է Պետերբուրգի ռազմական ակադեմիան 1904 թ.: Պատերազմի տարիներին Օրբելին ԽՍՀՄ ԳԱ փոխնախագահն էր (1942-1946 թթ.): 1943-1950 թթ. ռազմաբժշկական ակադեմիայի պետն է: Օրբելին ղեկավարում էր ռազմասանիտարական հանձնաժողովը և սննդի ռեսուրսների հանձնաժողովը: Օրբելին մեծ ներդրում ունի տրավմատոլոգիայի ասպարեզում, և էվոլյուցիոն ու կիրառական ֆիզիոլոգիայի ասպարեզում մի շարք ֆունդամենտալ աշխատությունների հեղինակ է: Պարգևատրվել է Լենինի 4 շքանշանով, Մարտական Կարմիր դրոշի 2 շքանշանով, Աշխատանքային Կարմիր



Արամ Խաչատրյան



Նելսոն Ստեփանյան

դրոշի մեկ շքանշանով և Կարմիր աստղով: Օրբելին Ստալինյան մրցանակի դափնեկիր էր:

Օրբելի եղբայրներից մյուսը՝ ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Հովսեփ Օրբելին նույնպես պատերազմի ընթացքում անձնվիրաբար ծառայել է հայրենիքին: Նրան էր հանձնարարված Էրմիտաժի անգնահատելի արժեքների պահպանությունը, որը նա փայլուն կատարեց: Հովսեփ Օրբելին Նյուրնբերգի դատավարության ժամանակ անողոք մերկացրեց գերմանական բարբարոսների վայրագ արարքները մշակութային արժեքների նկատմամբ: Հովսեփ Օրբելուն հանրագիտարանի էջերում տեղ չհատկացնելը մեծ բացթողում է:

Հանրագիտարանում տեղ է գտել դեռևս Հայրենական մեծ պատերազմից առաջ՝ 1940 թ. Խորհրդային Միության հերոսի կոչում ստացած Պարսեղով (Բարսեղյան) Միխայելը: Պարսեղով Միխայելը հրետանու գեներալ-գնդապետ էր: Ծառայությունը խորհրդային բանակում սկսել է 1918 թ.-ից: Քաղաքացիական պատերազմի մասնակից է: Ավարտել է Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան (1936 թ.): Մասնակցել է Խորհրդային Միության ֆիննական պատերազմին: 1940 թ. եղել է խորհրդային բանակի հրետանու գեներալ-տեսուչ: 1941 թ. հունիսից գեներալ-լեյտենանտ էր: Պատերազմի ընթացքում եղել է հարավ-արևմտյան ռազմաճակատի հրետանու պետ, այնուհետև 40-րդ բանակի հրամանատար: 1942 թ. հունիսից եղել է Հեռավորարևելյան, իսկ օգոստոսից՝ Երկրորդ Հեռավորարևելյան ռազմաճակատի հրետանու հրամանատար: Պատերազմից հետո եղել է մի շարք ռազմական օկրուգների հրետանու հրամանատար: Պարգևատրված է Լենինի 3 շքանշանով, Կարմիր դրոշի 4 շքանշանով, Սուվորովի երկրորդ աստիճանի շքանշանով:

Հանրագիտարանում ներկայացված է Խորհրդային Միության կրկնակի հերոս (1942-1944 թթ.), փոխգնդապետ Նելսոն Գևորգի Ստեփանյանը: Ն. Ստեփանյանը

ավիացիայում սկսել է ծառայել 1941 թվականից, սկզբում՝ ռազմածովային նավատորմի ավիացիայում: 1935 թ. ավարտել է քաղաքացիական օդային նավատորմի դպրոցը: Պատերազմի ժամանակ, որպես օդաչու գրոհող, էսկադրիլային օդակի հրամանատար, ծառայել է Սևծովյան և Բալթյան նավատորմում: 1944-1947 թթ. եղել է գրոհային ավիագնդի հրամանատար, որը կատարել է 1500 թռիչք: Խորտակել է հակառակորդի ավելի քան 50 նավ: Նելսոն Ստեփանյանը անձամբ կատարել է 240 մարտական թռիչք: Զոհվել է 1944 թ. դեկտեմբերի 14-ին օդային մարտում՝ Լիպայայի շրջանում: Պարգևատրվել է Լենինի երկու, երեք Մարտական Կարմիր դրոշի շքանշաններով:

Ժամանակակից զենքի ու զինատեխնիկայի համար կարևորագույն նշանակություն ունի մետաղը՝ առանձնապես պողպատը: Պատերազմի ժամանակ Խորհրդային Միության սև մետալուրգիայի գլխավոր ղեկավարը Իվան Ֆյոդորովիչ Թևոսյանն էր: Ծնվել է 1902 թ., մահացել է 1958 թ.: Եղել է խոշոր կուսակցական ու պետական գործիչ: Հանրագիտարանում մասնանշված են նաև պատերազմական շրջանում և հետպատերազմյան շրջանում մետաղագործությանը մատուցած նրա ծառայությունները: Թևոսյանը խորհրդային պողպատագործության առավել ականավոր գործիչներից է: Նրա ղեկավարությամբ արտադրված պողպատից են պատրաստվել խորհրդային աշխարհահռչակ տանկերը: Ինչպես Միկոյանի, այնպես էլ Թևոսյանի հետ երկրի ղեկավարությունը շատ վատ է վարվել: Դեռևս երիտասարդ հասակում Թևոսյանին երկրի ներքին տնտեսական կյանքից մեկուսացրել են և ուղարկել դիվանագիտական աշխատանքի: Այդ աշխատանքի մեջ էլ մարեց կոմունիստական կուսակցության, խորհրդային պետության ականավոր գործիչ Թևոսյանը: Թևոսյանը Սոցիալիստական աշխատանքի հերոս է, բազմիցս պարգևատրվել է շքանշաններով: Նա պարգևատրվել է Լենինի 5 շքանշանով, Աշխատանքային Կարմիր դրոշի 3 շքանշաններով: Նրա աճյունն ամփոփված է Մոսկվայի Կարմիր հրապարակում, Կրեմլի պատի տակ:



Նվեր Սաֆարյան



Իվան Կնունյանց

Խուդյակով (Խամփերյանց): Հայ ժողովուրդը շատ բան է տվել խորհրդային ավիացիային: Այսօր էլ ռուսական ավիացիայի առավել ականավոր գործիչների թվում է Միքայել Պողոսյանը: Ավիացիայի մարշալ Խուդյակովը ծնունդով Ղարաբաղից է: 1918 թ. 16 տարեկան հասակում արդեն խորհրդային բանակի շարքերում էր: Առաջիններից մեկն էր, որ արժանացել է Խորհրդային Միության ավիացիայի մարշալի կոչմանը: 1936 թ. ավարտել է Ժուկովսկու անվան ռազմաօդային ակադեմիան: 1940 թ. ռազմական օկրուգի ուժերի շտաբի պետն էր: Պատերազմի ընթացքում եղել է Արևմտյան ռազմաճակատի ռազմաօդային ուժերի շտաբի պետ, իսկ այնուհետև՝ հրամանատար, 1942 թ. մայիսից եղել է խորհրդային բանակի ռազմաօդային ուժերի շտաբի պետ, միաժամանակ՝ խորհրդային բանակի ռազմաօդային ուժերի հրամանատարի տեղակալն էր: 1942 թ. նշանակվել է առաջին օդային բանակի հրամանատար: Զբաղվել է տարբեր ռազմաճակատների ավիացիայի համակարգմամբ: 1945 թ. 12-րդ օդային բանակի հրամանատարն էր, որը մասնակցեց Կվանտունյան բանակի ջախջախմանը: Պարգևատրված է Լենինի շքանշանով, Սուվորովի առաջին, երկրորդ աստիճանի, Կուտուզովի առաջին աստիճանի շքանշաններով: Դժբախտաբար, Խորհրդային Միության ավիացիայի մարշալ Խուդյակովը զրպարտվել և գնդակահարվել է: Հետագայում հետմահու լիովին արդարացվել է:

Ինչպես տեսնում ենք, Հայրենական պատերազմի հանրագիտարանում ընդգրկվել են մեկ տասնյակից ավելի հայորդիներ: Սակայն, իմ կարծիքով, ամբողջովին չի արտացոլված հայերի ներդրումը Հայրենական մեծ պատերազմի պատմության մեջ: Հանրագիտարանի հնարավորությունները, երբեմն ոչ ճիշտ ընտրված սկզբունքները, անտեղյակ լինելը խոչընդոտել են, որ հայ ժողովրդի ներդրումը Խորհրդային Միության հանրագիտարանի մեջ ամբողջությամբ գնահատվի: Ճշմարտությունը պահանջում է ասել, սակայն, որ նույնիսկ կիսատ-պռատ արտացոլմամբ, վիթխարի է ու բացառիկ հայ ժողովրդի ներդրումը Հայրենական մեծ պատերազմում:

№ 5—6 (212) | XX ՏԱՐԻ | ՄԱՅԻՍ—ՅՈՒՆԻՍ 1910

„Droschak" organe de la Fédération Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse: Rédaction du journal „Droschak" GENÈVE (Suisse)

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

ԿՌԻՒՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

# Կռիւներ Պարսկաստանում

Մօտիկ ապագայում, յուսով ենք, պիտի կարողանանք տալ գէթ համառօտ կենդանագիրները մեր 35-40 զինուորների՝ որ նահատակուել են պարսկական ազատագրութեան մարտադաշտերում: Կարօն և Մէթօն այդ քաջերի թուից են, առաջապահիկ ու համարձակ, գաղափարական և անձնուրաց:

Թուրքահայեր են երկուսն էլ, Մարտիրոսը, Նիկոլը, Արտեմն էլ՝ ռուսահայեր: Որքա՜ն խօսուն է համազգային ներդաշնակութեան լեզուն: Եւ որքա՜ն գաճաճ ու ողբալի են, որքան կեղծ, ստայօդ Դաշնակցութեան հակառակորդները, երբ նրանք համարձակւում են քարով տալ այդ կազմակերպութիւնը «ազգայնական իդէալի» ու դաւանանքի պակասութեան, ժխտման համար: Ազգային, համահայկական համերաշխութեան մեծ փաստը յեղափոխութեան դաշտերի մէջ է կոփուել, պարզուել և ոչ սինլքոր ու խղճավաճառ հրապարակագիրների գրչի տակ:

Կարօն և Մէթօն թուրքահայեր են, Անդրանիկի զինուորներից. մասնակցել են Թուրքահայաստանի բազմաթիւ կռիւներին: Կռուել են Մուժումբարում հայկական փոքրաթիւ բանակի մէջ և ցոյց են տուել յանդուգն և փորձառու ռազմիկների յատկութիւններ: Կարօն՝ մասնաւորապէս: Ուշագրաւ է նրա հերոսական դիմադրութեան մի փաստը Մուժումբարի կռիւներից: Ծանր վիրաւորուած և արիւնահոս՝ նա ապաստանում է հայ ազգաբնակութեան հետ եկեղեցու մէջ և այդ վիճակում երկար կռիւ է մղում Սեամի խանի զօրքերի դէմ իր մաուզէրով: Ապա նետում է մի ռումբ թշնամու շարքերի մէջ: Ուժանակը պայթում է ահարկու որոտով, խլում է 3 զոհ հակառակորդից, որ այնուհետև սարսափահար փախուստ է տալիս:

Մէկուկէս ամիս բժշկութիւնից յետոյ՝ վէրքը կազդուրւում է և ահա Կարօն Մէթոյի հետ Ալուարի կռւում: Երբ Մարտիրոսը նեղն է ընկնում իր անզգոյշ թռիչքի միջոցին – երկու ընկերները օգնութեան են վազում և զարնում են դարանամուտ թշնամիներից:

Յարգա՜նք ժողովրդական դատի երկարամեայ, անխոնջ մարտիկներին, պատի՜ւ նրանց պայծառ ու յաւերժական յիշատակին:



Կարօ



Մէթօ

# Մարգարիս Աճեմյան-Ահներթ

**Դռան թակոցը**
**Ճամփորդություն Հայոց ցեղասպանության խավարի միջով**
Երևան, 2009, 226 էջ

*Հայոց ցեղասպանության մասին, թվում է, անցած 95 տարիների ընթացքում այլևս ամեն ինչ ասվել ու գրվել է, ամեն ինչ խտացվել է ողջ մարդկության ճակատի խարանը հանդիսացող այն մի բառի մեջ, որ դժվարանում են նույնիսկ արտաբերել հզորները՝ պարզ գիտակցելով նաև իրենց մեղքը 20-րդ դարի առաջին ու մեծագույն ողբերգության մեջ:*

*Լինում են, սակայն, պահեր, երբ տագնապով նկատում ենք, որ ինչ-որ բան այնուամենայնիվ դեռ չի ասվել, ինչ-որ բան դեռևս մնացել է ստվերում, եւ կմոռացվեր, եթե այս կամ այն նախանձախնդիր հայն ու հայուհին ձեռքը չառնեին գրիչն ու օրվա սերնդին չփոխանցեին հերթական եղերական պատմությունը, չվերապատմեին իրենց պապուտատի, ծնողների գլխով անցած-դարձածը: Ճիշտ այդպիսի մի պատմություն է Մարգարիս Աճեմյան-Ահներթի այս գիրքը, որ մի կողմից ցեղասպանության ականատեսի՝ հեղինակի մոր՝ 1900թ. պատմական Հայաստանի Ամասիա քաղաքում ծնված Եսթեր Միներաճյանի հուշամատյանն է, իսկ մյուս կողմից նրա դստեր՝ Մարգարիս Աճեմյան-Ահներթի մեկնաբանություններն ու անդրադարձն է անցյալի ողբերգությանը: Ահա հեղինակի խոստովանությունն այդ մասին, որ արված է գրքի նախաբանում. «Պատմիչը նա էր. ես գրագիրն էի: Սա մեր պատմությունն է՝ գրված միասին»:*

*Նախաեղեռնյան շրջանը, բուն գաղթն ու հայ գաղթականներին պատուհասած դժնի ճակատագիրը եւ վերապրողի կյանքի հետագա տարիները՝ Եսթեր Միներաճյանի պատմությունը պայմանականորեն կարելի է բաժանել երեք մասի: Դրանցից առաջին երկուսը տրամագծորեն հակառակ աշխարհներ են ներկայացնում: Առաջինում Եսթերի մանկության տարիների (1900-1915թթ.) նկարագրությունն է: Ճիշտ է, ի ծնե նա դժբախտ է եղել (մայրը մահացել է ծննդաբերելիս), սակայն աղջնակի կյանքի վաղ տարիներն ընդհանուր առմամբ երջանիկ են եղել: Ամասիան, ամբողջովին թաղված կանաչի ու պտղատու այգիների մեջ, դեռահաս աղջկան երկրային դրախտ էր պատկերանում: Պոնտական լեռների հարավային ստորոտին, գեղատեսիլ Իրիս գետի ափերին տարածված հայկական այդ բնակավայրը եղել է Սեբաստիա նահանգի 7 գավառներից մեկի վարչական կենտրոնը: Առաջին աշխարհամարտի նախօրեին Սեբաստիան հայաշատ նահանգ էր. հարյուրավոր գյուղերից բացի հայերը մեծ թիվ էին կազմում Սեբաստիա (Սվազ), Ամասիա, Եվդոկիա (Թոխաթ), Շապին Գարահիսար եւ Մարզվան քաղաքներում: Ծննդավայր Ամասիային, վերջինիս կենցաղին, սովորույթներին ու տոներին (Սուրբ Զատիկ, Վարդավառ եւ այլն) նվիրված էջերն իսկական հանրագիտարան են: Փոքրիկ Եսթերը նույնիսկ ամենաչար երազում չէր կարող տեսնել այն մղձավանջային օրերը, որոնք պիտի հաջորդեին իր մանկության ու վաղ պատանեկության տարիներին:*

*1915թ. հունիսի 15-ին հրապարակվում է Ամասիայի հայերի տեղահանության կառավարական հրահանգը: Հունիսի 20-ից սկսած քաղաքից բռնի տեղահանվող հայ գաղթականների առաջին խմբերի մեջ էր նաեւ 15-ամյա Եսթեր Միներաճյանն իր հարազատների հետ:*

*Եսթերը պատմում, իսկ Մարգարիս Աճեմյանը մեզ է փոխանցում չարչարանքների սահմռկեցուցիչ պատկերները: Գրքի հերոսուհու՝ Եսթերի համոզմամբ բոլորը պիտի իմանան, թե ինքն ու իր նման հարյուր հազարավորներն ինչերի միջով են անցել: Նա իր մտավախությունը բազմիցս է հայտնել դստերը. «Երբ մեռնեմ, ճշմարտությունն ինձ հետ կմեռնի»: Եվ հուշերի այս գրքով, փաստորեն, նրա դուստրը՝ Մարգարիս Աճեմյանն, ի չիք է դարձրել այդ մտավախությունը՝ գրական հուշարձան կանգնեցնելով ոչ միայն իր տառապած մորը, այլեւ պատմական ճշմարտությանը. «Այս գիրքը նվիրված է մորս՝ Եսթերին, երբեւէ իմ տեսած ամենախիզախ անձնավորությանը, ում մասին վառ հիշողությունները օգնեցին ինձ գրելու այս գիրքը: Նրա ձայնը դեռ ինձ հետ է»:*

*Ասենք նաեւ, որ ներկայացվող գիրքը Մարգարիս Աճեմյան-Ահներթի առաջին գիրքն է: Այն լույս է տեսել 2007թ. ԱՄՆ-ում՝ հեղինակին բերելով Մարդասիրական մրցանակ եւ արժանանալով տարվա «ԱՄՆ գրքի նորությունների»-ի Լավագույն գրքի կոչման: 2008 թվականին Նյու Յորքի գրքի տոնավաճառում գիրքը հռչակվել է հաղթող՝ Լավագույն հուշագրություն անվանակարգում:*

*Գրքի հայերեն թարգմանությունը եւ հրատարակությունն իրականացվել է Հայ օգնության ֆոնդի (ՀՕՖ) հովանավորությամբ: Թարգմանիչն է Մարինե Բազաեւան: Գիրքը խմբագրել եւ առաջաբանը գրել է Լեւոն Լաճիկյանը:*

Էդիկ Անդրեասյան



Գեղանկարիչ Ռուբեն Կարապետյանը ծնվել է 1976թ. օգոստոսի 18-ին Երևան քաղաքում: 1991-1995թթ. սովորել է Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանում, 1998-2004-ին՝ Երևանի Գեղարվեստի Պետական Ակադեմիայում:

1995թ.-ից սկսած ունեցել է բազմաթիվ անհատական ցուցահանդեսներ Հայաստանում, ինչպես նաև մասնակցել է մի շարք միջազգային ցուցահանդեսների, արժանացել բարձր գնահատականի: 2002թ. ունեցել է անհատական ցուցահանդես Ֆլորիդայում, այնուհետև Լոս-Անջելեսում:



# Ռուբեն Կարապետյան

(գեղանկարիչ)








Ruben 05







# ԴՐՕՇԱԿ






